

ԳՐԱԴԱՐԱՆ ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ



# ՓԵԼԼԵԿՐՈՅ ՓԻՌԼԱ

ԹԱՏԵՐԱԽԱԴ

ԵՐԵՎԱՆ ԱՐԱՐՈՒԱՇՈՎ

ԿՊԵՐԱԿԱՆԱՑ, ԳՐԻՍՈՆԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ, ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՑ՝ ԵՐԿՍԵՐ ԴԱՍԻՆ ՀԱՄԱՐ

# Ա.Ռ.ԶԻՆ Ա.ՆԳԱՄԻ ՄԻԼԱՆ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ՝ ՄԵԿ ԱՐԱՐՈՒԱՆՈՎ.

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Հ. ԱԼԵՔՍԻՍ Ա. ՅՈՎՍԵՓԵԱՆ

ՄԻՒԹԱՐԵԱՆ



ՎԵՆԵՏԻԿ — ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1916

85  
Կ-36

19 NOV 2010

## ԳՐԱԴԱՐԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ աշխ. կը ծեւաթայ շարք մը թուակարգեալ ութածալ հատորիկներէ, որոնք կը ծառայեմ՝ յատկապէս տղայոց ընթերցման և զպրոցմերու մէջ թատերակամ ներկայացմանց և մթցանակարաշխութեամբ; - Միմչեւ օրս հրատարակուած թիւերմ նետեւեալթերմ են:

1. Ա. Գոմինիկ կողայն գերին, տրամ: - չեղ. Ը- քոլայաննի, - թրզմ. չ. Աթանաս Տիրոյեամ, - Տպ. 1905, էջ 62.

2. Խաղամու, տրամ: - չեղ. չ. Աթանաս Տիրոյեամ, - Տպ. 1895, 1906, էջ 84.

3. Ա. Երեք ԶԱՀԵՇՏՆԵՐ. - Երկու ծայրայեղներ: - չեղ. չ. Ա. Տիրոյեամ, - Տպ. 1906, էջ 1-25. — Բ. Երեք քահերր, - չեղ. չ. Ա. Տիրոյեամ, - Տպ. 1906, էջ 26-52. — Գ. Գողցուած սաղու, - թրզմ. չ. Ա. Տիրոյեամ, - Տպ. 1906, էջ 53-80.

4. Ա. Երսին ԶԱՀԵՇՏՆԵՐ. - Երկու հրացանակիրներ: - Տպ. 1907, էջ 1-35. — Բ. Տաղնապալց վեցեր մը: - թրզմ. չ. Աթանաս Գոնտարմեամ, - Տպ. 1907, էջ 36-64.

5. Արման տաճանապետը, տրամ: - չեղ. Տիւմանուար և Տէմնորի, - թրզմ. ազատարար չ. Ա. Տիրոյեամ, - Տպ. 1908, էջ 130.

6. Ա. Որդիական սէր, տրամ: - չեղ. Ծ. Ճէմոյիսօ: - թրզմ. չ. Ա. Տիրոյեամ, - Տպ. 1908, էջ 1-58. — Բ. Անդնասակ տարձանակներ. զաւեշտ, - չեղ. Ա. Քոցպուէ: - թրզմ. չ. Վ. Խանպէկիամ, - Տպ. 1908, էջ 59-95.

## ԳՐԱԴԱՐԱՆ

## ԹԱՏԵՐԱԿԱՆ



85-9

Փ - 37

Փռու. Փ

2818

ԲԱՅԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԴՐԱՆ

ԵՐԵՎԱՆ ԱՐԿՈՒՆԻՔՆԵՐ

875

85

Կ - 36

ԳՐԱԴԱՐԱՆ ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ



## ՓԵԼԼԵԿՐՈՅ ՓԻՈԼԱ

ԹԱՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԿՊՀԻՄԿԱՆԱՑ, ԳՐԱԴԱՆՆԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ, ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՑ՝ ԵՐԿԱՆՈՒ ԴԱՍԻՆ ՀԱՄԱՐ.

100/  
3818

Ա. Ռ. Զ. Ի Ա. Վ. Ա. Մ. Ի Մ. Լ. Ա.


ԿԱՏԱԿԵՐԳՈԹԻՒՆ՝ ՄԵԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ.

ԲԱՐԳՄԱՆԵՑ

Հ. ԱԼԵՔՍԻՍ Ա. ՅԱՎԱՔԻԳԻ

ՄԻՒԹԱՐԵԱՆ

(Հրամանաւություն Անձաւուրաց)



ՎԵՆԵՏԻԿ — ՍՈՒՐԲ ՂԱԶՈՐ

1916



## Ա.Ռ.Ա.ԶԻՆ Ա.ՐԱ.ՐՈՒՍ.Ծ

## Ա Ն Զ Ի Ն Ք

ՓԵԼԼԵԿՐՈՅ ՓԻՈԼԱՆ ՆԿԱՐԻՑ.  
 ԳՈՄԻՆԻԿՈՍ, ԷՐ ԿՊԵԱՋՐԸ.  
 ՔԱՓԵԼԼԻՆԻ, ԷՐԿՆԳ ՌԱՏԱԳԻՔԸ.  
 ԹԱԴԻՇՈՍ ՔՈՐԼՈՒՆԵ, ՔԱՆԴԱԿԱՊՈՐԾ.  
 ՅՈՎՃԱՆՆԵՍ } ԷՐ ՄՐԴԵՔԸ.  
 ԿՈՍՏԱՆԴԻՆ }  
 Տ'ՕՊՐԻ, ՊԱՂԲԱԳԻ.  
 ՏՕԺԻՆ ՊԱՄՊԱՄԱՆՈՐԸ.  
 Տեսարանն է ՃԵՆՈՎԱՅՐԻ մԵՂ:

Նկարչուրեան դպրոց. Խորր աճկողին մը՝  
 վարագուրով բաժնուած, ուր զետեղուած է  
 իշղաներկ մը:

## Տ Ե Ս Ի Լ Ա.

ՓԵԼԼԵԿՐՈՅ ԽԻՂԱՆԵՐԿԻՆ բով է ոչ կը նկարէ,  
 բովլնտին ԳՈՄԻՆԻԿՈՍ գրանեղանի մ'առնէ.  
 նստած կը գծագրէ. վայրկեան մը վերջ կը  
 հասնի ՔԱՓԵԼԼԻՆԻ:

Քափելլինի. — Ապրիք, տղաքս, կ'աշխատիք:  
 Փելլեկրոյ. — Բարի գալուստ, պարոն ուսուցիչ:  
 Գոմինիկոս. — Բարի՛ տեսանք:  
 Քափ. — Իրաւցնէ զարմացած եմ, ոչ քու վրադ,  
 սիրելի՛ ֆէլլէկոս, այլ այս զլիիկին վրայ...  
 Իրաւունք չունիմ, Գոմինիկոս:  
 Դում. — Ես, անշուշտ յանցանքը քեզի չեմ տար:  
 Քափ. — Վերջապէս ամենէն ծոյլն ես եմ, կար-  
 ծեմ:

Դում. — Կարծեմ:

Քափ. — Բայց ի՞նչ կ'ուզես: Կոյեմքեր ամիսը  
 զեռ ինծի չթողուր որ բնութեան գեղեցիկ տե-  
 սարաններէն հրաժարիմ, երբ արևը կը ծագի  
 և լերան ետևէն վերկը բարձրանայ՝ կարծես  
 թէ յիրաւի կրակէ լեռնէ մը կը ծնանի: Ո՞հ,  
 մենք իտալացիներս՝ հրաշալի երկինք մ'ու-  
 նինք:

Դում. — Եւ մաքուր օդ. բնաւ անմարսութիւն չենք ունենար:

Քափ. — Ես այլ ևս ծերացեր եմ, եօթանասանոց... էն: Բայց աւելորդ է բարկանալ սպիտակ մազերուս, երբ չեն կրնար իրենց առաջինին գոյնին գառնալ: Դարձեալ շատ աւելի բարեբաղդ եմ, որ զոնէ կրցայ քու հանճարիդ ուղղութիւն մը տալ, սիրելի՝ Փէլլէկրոս. և, կեցցէ Թիցիանոյ, գեղեցիկ փառք մ'է: Մեռած պիտի չնամարիմ ինքզինքս, վասն զի քու իւղաներկերուդ կեանքով պիտի ապրիմ, որ անմահ պիտի ըլլայ:

Փել. — Սիրելի ուսուցիչս, չարժեր արցունք թափել, ինծմէ մի՛ ծածկէք:

Քափ. — Ի՞նչ արցունք... Ո՞հ, այո՛, ստոյգ է: Մենք ծերերս կնիկներու պէս ենք, շուտով կու լանք:

Դում. — (բրդիչով) ա՞հ... ա՞հ... ա՞հ....:

Քափ. — Եւ հիմա ինչո՞ւ կը ծիծաղիս:

Դում. — Այս աղէկ բան: Այսպէս պէտք է ըլլայ, դուք կու լաք և ես կը ծիծաղիմ... անէծք մաղցուութեան: Բայց միշտ ըսած եմ ես, այս արուեստը մարդատեացի արուեստ է. միշտ փակուած, չորս պատերու մէջ ամփոփուած, ամէն կողմդ իւղաներկեր և արձաններ կամ անդրիներ:

Քափ. — Սակայն դու այնչափ քիչ կը կենաս... որ....:

Դում. — Ի՞նչ գեղեցիկ տրամաբանութիւն... Անուարակոյս...: Պէտք էր սրունճն ծնած ըլլալ և տխրազգամծ. ինչպէս, օրինակի համար եղբայրս, որ այդ գէշ բնաւորութիւնը շալկած աշխարհ եկեր է, իսկ ես ընդհակառակն, ոչ, չեմ կրնար ինքզինքս աշխատութեան տալ. զլուխս ուսման չպասկիր. և գիտէ՛ք թէ օրուան մէջ քանի մ'անգամ ինծի ինչ կը պատահի: Մատիտը ձեռքիս մէջ կը մրափեմ, մինչ-

դեռ Փէլլէկրոյ յարաւու իր նկարով զբաղած է ինչպէս հիմա... օրինակի համար, տեսէք: Քափ. — Կը տեսնեմ, կը տեսնեմ... իրեն արգելք մի՛ ըլլաք: Ազունստաւոր մ'երբ կ'աշխատի, պէտք է յարգել զինք:

Գում. — Զեր ըսածին պէս թող ըլլայ:

Քափ. — Բայց դու ալ կրնաս....:

Գում. — Բնաւ, երբէք:

Քափ. — Եւ սակայն, դու հանճար ունիս, իմ սիրելի՛ Դոմինիկոս (գրաւաղանին մօտենեալով) Օրինակ իմն, այս գծագրութիւնը շատ լաւ եղած է. միայն թէ մատիտը քիչ մը թեթև պէտք էր քաշուած ըլլալ:

Գում. — Բայց եթէ ինծի հարցնելու ըլլաս, կարծես մատներուս մէջ ասեղ մը բռնած ըլլայի:

Քափ. — Կը հաւատամ: Բայց գիտէ՞ս թէ ինչո՞ւ:

Գում. — Ըսէ՛ տեսնեմ:

Քափ. — Վասն զի վարժեր ես շատ աւելի յանախ սրուակ բռնելու:

Գում. — Ո՞հ, այդ ստոյգ է, բայց գիտես արդէն որ վարժութիւնը գժուարաւ կը թողուի. այնչափ աւելի գժուար՝ որչափ ախորժելի է:

Քափ. — Տոլորովին չորամաբանելու չափ:

Գում. — Կը սիսալիս: Կը ներես. վարժապետ ես, բայց վարժապետներն ալ երբեմն կը սիսալին: Գինին....:

Քափ. — Ո՞հ, հիմա ալ կ'ուզես զիս դատապարտել՝ զինիին գրուատիքը լսելու համար:

Գում. — Բայց ըսէ՛ ինծի, խելքով մոտածենք, վասն զի քիչ մը տրամաբանել պէտք է. ուրիշ ի՞նչ աւելի գեղեցիկ, աւելի մեծ, աւելի բանաստեղծական բան կայ այս աշխարհիս մէջ, քան լաւ սարգուած սեղան մը՝ հանգըստ տաէտ սենեկի մը մէջ տեղ, հինգ կամ զեց բարեկամներով, չորս կողմդ դաշտային տե-

սարաններ՝ գեղեցիկ բլուրներով ներդաշնակուած: Եւ այսպիսի հաճոյալից տեղուոյ մը մէջ, միթէ վիպասանական բան չէ իրարուպատմել խենթ ու խելառ և օրուան մէջ պատհած յիմարական բաները: Ո՞հ, այս է կեանքը, երջանկութիւնը, մոռացումը բոլոր վիշտերու: Ո՞հ, ինծի համար կեցցեն միշտ բարեկամութիւնը, ուրախութիւնը, զինին, որ միտքը կը լուսաւորէ, որ ամէն բան վարդագոյց ցոյց կու տայ: Աիրելի՞ ուսուցիչ, ինծի հետեւ և բորորդին ուրիշ մարդ կ'ըլլաս: Քաի: — Շատ լւա պիտի ներդաշնակուէր իմ սպիտակ մազեր, քուկինիդ հետ: Զիս մի ձանձրացներ, յիմարանոցի խենթ:

Դում. — Ո՞հ, բարիք ըրէ՛ մերձաւորիդ, ահա շահը: Աղէկ միտքս եկաւ. լսէ՛ թէ ինչ պատահեցաւ անցեալ նոյեմբեր 20ի իրիկունը: Դուն ալ մտիկ ըրէ՛, սիրելի՞ Փէլլէկրոս, քեզ զի կ'ըսեմ: Թո՞ն վայրիկեան մ'աշխատութիւնդ, քիչ ատենէն արդէն նախաճաշ պիտի ընենք... գոնէ կարծեմ... ուշազբութիւն զի՞ս ուրիմն:

Փէլ. — Ականջս քեզի է:

Դում. — Ժամը զիշերուան տասն էր, մենք հինգ կամ վեց ընկերներով Ագուիլայի պանդոկն էինք, մէջերնիս կար Տ'օպրի անունով զաղղիացի մ'ալ որ անդէնս ֆարլոնէի տունը հիւր էր: Խօսակցութիւնը գեղարուեստի վրայ դարձաւ, ուր ընդհանրապէս արդէն բարձր բաներու վրայ կը խօսուի: Ուստի, այս մարդը, պարոն Տ'օպրին, կը պնդէր որ նոյն դարուն՝ Գաղղիան աւելի կը գերազանցէր քան զիտալիա՝ Նկարչութեան և քանդակագործութեան մէջ:

Քաի. — (ծիժաղելով). Ո՞հ, ո՞հ, ինչ յանդառութիւն:

Փէլ. — Եղբայր, յիշեցի՞ր թէ խտալացի ես:

Դում. — Այո՛, հակառակ խմած զինիիս: Ես

խոռուկ մ'եմ, այնաէս չէ՛, սիրելի՞ ուսուցիչս: Սակայն երկու բան կայ աշխարհիս մէջ զորս հոգւոյս չափ կը սիրեմ և որոնց համար կեանքս ալ կը զոհեմ. եղբայրս ու հայրենիքս:

Քաի. — Ապրի՞ս:

Դում. — Ապրի՞մ: Շատ լւա, բայց գէշն այս է, որ ես չէի զիտեր ինչ պատասխան տալ անոր, և լուսահոգի մօրս վրայ կ'երգնում, թէ ես ինձմէ ամցցայ, և ինչ ընելիքս չգիտնալով՝ ջանացի ամօթն պարտկել՝ կուլ տալով գաւաթ մ'այնպիսի սրանչելի զինի, որ կրցաւ իմ այն դառն պատաս վար զրկել:

Քաի. — Ի՞նչ ըսաւ որ այն պարծենկուոր:

Դում. — Պարծենկուոր ըսուլիր, ո՞հ, ինչպէս յետոյ պիտի ըսեմ. քիչ մ'ինծի պէս ոգէտիկին մէկն էր, բայց վասնգ չկայ: Ակուաները սեղմած՝ ինծի հինգ, վեց գաղղիացի նկարիչներու անուն տուաւ, ինչպէս այս երկութը՝ ֆուզէն, Վանվէ՛,... ալ ինչ զիտեմ ես... երկաւկայեցնք... և յետոյ պապանձումն... ես, որ միշտ ձեր ըերնէն խտալացի երկելի արուեստաւորներու անուններ լսած եմ, վասն զի, գաղղիացիին ինծի խոստացած շամփայնեան վկայ, ուրիշ բանի վրայ չէր կրնար խօսիլ, սկսայ հեղեղօրէն իր գունչին նետել Վինչին, Փորբէճճին, Ճ'իորճիոնչին, Թիցիանն, Կոււտոյ Ունին, Ռաֆաէլլոն, Միկէլանձէլոն, որ, ըստ ձեր ըսածին, սակայն իթէ կատակ չէք ըներ, սարսափելի բան է, զարմանքէ մեռնելու բան է:

Փէլ. — Ախ, ուսուցիչս, զմեզ վար զարնողները չեն ճանչնալ զմեզ:

Քաի. — Բայց մենք կը ճանչնանք զիրենք:

Դում. — Բայց, ուրիմն, լւա խօսած եմ ես:

Փէլ. — Ո՞չ:

Դում. — Չար սատանայ:

Փէլ. — Գիտե՞ս թէ ինչ պէտք էիր պատասխանել:

Դում. — Ըսէ՛ տեսնեմ, սիրելի՛ ֆէլլէկրոս, ուշ  
րիշ անզամ կրնայ պէտք ըլլալ ինծի՛:  
Փէլ. — Անոր պէտք էիր ըսել՝ որ գեղարուեստա-  
ները Գաղղիոյ մէջ կը ծաղկին, բայց անոնց  
սէրն իտալուհի մը հոն տարաւ, Սարիամ  
Տէ՛ Մէտիչի, գաղղիացւոց թագուհին, որ այն  
գարուն մէջ մեր պարտիզին ամենէն գեղեցիկ  
ծաղիկները փոխատնկեց, և հոն հիւրընկալեց  
իտալացի նշանաւոր արուեստաւորները. ուս-  
տի, ինչ գեղեցիկ, ստոյգ, մեծդի բան որ ու-  
նին նկարչութեան մէջ, իտալական է: Մեզմէ  
կրնան յափշտակել աննոց գործերը, յիշատա-  
կարանները, ելուանկարները, արձանները,  
բայց ոչ հանճարը, որ յատուկ է մեր երկնքին:  
Ժիտել՝ թէ իտալիա գեղարուեստներու տա-  
ճարը չէ, երբ կարող է պարծիլ հարիւրաւոր-  
ներու մէջ՝ Ռաֆայէլ և Միքելանջելոյի վրայ,  
երազ է, ցնորդ է:

Դում. — Ո՞հ, վայ պինդ զլիուս: Եթէ այս ա-  
մէնը գիտնայի, զինքն ալի արձան կը գարձնէի.  
Բայց պէտք է խոստովանիմ որ շատ լաւ վաշ-  
րուեցաւ հետու, ես ալ հիմա զինք կը սիրեմ:  
Քաի. — Ո՞հ, ինչ պէտք կայ զինք սիրելու:  
Դում. — Պէտք կայ, ուսուցիչս, վասն զի ինք  
ալ իմ եղբայրս կը սիրէ:  
Փէլ. — Զիս:

Դում. — Անշուշտ: Միլանի մէջ քու նկարած  
ծեր Լաբանդ հետաւ, և ոճիդ վրայ սիրահա-  
րուած է, որ ստուգիւ քիչ զնահատուած է  
քու քաղաքացիներէլ:

Քաի. — Ո՞ր իշու խօսք է ատիկայ:

Դում. — Էշերը շատ են, ուսուցիչս, վասն զի  
յաճախ շատերէն լսած եմ: Կ'ըսեն թէ շատ  
կը նմանի Փարմինիանոյի նկարներուն:

Քաի. — Ի՞նչ կ'ըսեն, Փէլլէկրոյ:

Փէլ. — Ո՛չ ինչ, վասն զի ժամանակակիցները  
չեն կրնար ստոյգ դատաստան ընել իրենց դա-

րուն գործերուն վրայ, բայց ապագայ սե-  
րունգը շտառով կ'որոշէ հետևողներն ու ստեղ-  
ծող հանճարները:

Դում. — Արդ, սիրելի՛ ուսուցիչ, քեզի գալով,  
կը պնդես որ ես ալ հանճար ունիմ, և կրնամ  
աշխարհի վրայ բան մը թողուլ: Երբ կը գի-  
տեմ եղբայրս, և կը տեսնեմ որ գիշերն ի  
բուն կը սովլի, և կը մտածեմ վարձատրու-  
թինին, որ անկից կ'ընդունի, կը համոզուիմ  
որ հանճարը՝ որոն ալ ըլլայ՝ մեծ զգեաղ-  
գութիւն մ'է... և ասոր համար է որ ես կ'աշ-  
խատիմ որպիչս զի կորսնցնեմ այն քիչն ալ  
զոր չեմ զգար, բայց զոր գուք ինծի կ'ըսէք  
թէ ունիմ իրաւցնէ....

Փէլ. — Եղբայր, ծարաւէն կը նեղուի, բայց  
կ'աշխատուի. անօթութենէ կը տանջուի, բայց  
կ'աշխատուի: Միթէ չէ՞ս նախանձիր Ալիկիէ-  
րիի ափսորին վրայ, թասսոյի հիւանդանոցին  
վրայ:

Դում. — Ես նախանձ չունիմ, զգուելի ախտ  
մ'է: Բայց այս պարագայիս մէջ, ինչ որ կը  
կարծեմ ոչ մէկ բարի տրամադրութիւն կայ...:

Քաի. — Ի՞նչ բան ընելու:

Դում. — Ո՛չինչ, փոքրիկ նախանձչիկ մը միայն:  
Ուրեմն ես ալ կ'երթամ... արտէն Ագուիլէյի  
պանդոկը կը սպասեն ինծի կարծեմ...: Լաւ  
զինի և աժան... զրեթէ բոլոր արուեստաւոր-  
ները հոն կը գտնուին, վասն զի դրամներն  
իրենց համար լուսնի ամսավերչի երկոյթը  
կ'ընծայեն: Մնաս բարով, ուրեմն, սիրելի՛  
ուսուցիչ, քեզի կը յանճարարիմ եղբայրս...  
մէկդի թող կենայ տիրութիւնը... մեզի ու-  
րախութիւն պէտք է, ապա թէ ոչ, զի վաղիւ  
մեռանիմք (կը մնկնի):

## ՏԵՍԻԼ Բ.

ՓԵԼՎԱԿՐՈՅ և ՔԱՓԵԼՎԱՅՆ

Քափ. — Եւ սակայն եղբայրդ բարի տղայ մ'էք ուսկից շատ բան կը յուսամ, որովհետեւ աս սիկայ բարի է (սիրտը ցոյց տաղով):

Փէլ. — Ալոյց է, իֆս շատ կը սիրէ... Պարոն ուսուցիչ, հիմա որ մինակ ենք, ենքը նկարս տեսէք: Գրեթէ վերջացուցեր եմ:

Քափ. — Փափաքէս կը մեռնէի, տեսնենք:

Փէլ. — Զեր ազատ կարծիքն ըսէք ինձի, ցցուցեք թերութիւնները որո՞ւ արուեստաւորին աշխարհ չենինիր աշխարհ պահուն: Եւ ես գեռ սովորելու պէտք ունիմ, և գուգ միշտ իմ վարժապետս պիտի ըլլագ:

Քափ. — Բայց ի՞նչ թերութիւն, բայց ի՞նչ վարժապետ, զու այլ ևս աշակերտ չես: Այս նկարը հիանալի է... այն, շտապն ըսելով, վերջացած է (յետ շաշ մի զենելու): Կուիտոն վկայ: Հոռվմէական դպրոցի արտադրութիւն մ'է կարծես...:

Փէլ. — Եւ սակայն այս մտածութիւնը չունեցայ մաքիս մէջ, վասն զի գեռ չկրցայ թմբը նել այս ճիւղիուն ու գլուցներուն զանազանութիւնը, իբրև թէ նկարչութիւնը բնութեան արուեստը չըլլար, և բնութիւնն ալ մէկ հատ: Ես կ'ուզեմ ստեղծող ըլլալ, վասն զի նկարիչը պէտք է ստեղծէ, ինչպէս բանաստեղծը. և որ ստեղծում չկայ, հանճար չկայ, այլ ցուրտ արտադրութիւն մը՝ ինչ որ ըսած ու ըրած են հիները:

Քափ. — Ճշմարիտ է, Փէլէկրօյ. տարիքդ փոքր է, բայց խելքդ մեծ: Բանաստեղծութիւնն ու նկարչութիւնը ստեղծիչ արուեստներ են: Բանաստեղծին սիրտը հրդեն մ'է, երբ իր հոգ-

ւոյն զգացումները կը զեկու թղթին վրայ, ինչպէս նաև նկարչինը՝ երբ կը տպաւորէ կտաւին վրայ այն պատկերներն ու կիրքերը՝ ուրոնք իր մտածութիւնը կը յուզեն: Ուրածին եղիր, Փէլէկրօյ: Աղքատ և մեծ, այսպէս պէտք են ըլլալ արտեստաւորները:

Փէլ. — Ուրախութիւնը, սիրելի՝ ուսուցիչս, տարագրաւած է իմ էութենէս, ես երջանիկ էի...:

Քափ. — Շատ մի կոկծար, բարեկամս, որովհետեւ կեանփիք կրնաս վասնել. յիշէ՛ թէ եղբայր մ'ունիս որ զեզ կը սիրէ, որ ես իբրև իմ զամակն կը նկատեմ զեզ, և ասոր համար մինակ չես աշխարհի մէջ, այլ ունիս մէկը, որուն կրնաս սիրտդ բանալ և քանի մը միփարական խօսք լուել:

Փէլ. — Իրաւունք ունիք, սիրելի՝ վարժապետս, ասկից վերջ պիտի ջանամ ես ալ իմ անձիս յաղթել, և երկնից վճիռներուն համակամիլ:

## ՏԵՍԻԼ Գ.

ԹԱՐԴԱՍ ՔԱՐԵՒՆԵ, ԿՈՍՏԱԴԻՆ և ՎԵՐՈՅԻՆԵԱԼՔ.

Քափ. — (Աերսէն), կրնամ ներս մտնել, պարոն ուսուցիչ:

Քափ. — Վայրէկեան մը, Քարլոնէ՛, հիմա կու զամ կը բանամ:

Փէլ. — Ես կ'առանձնանամ... չեմ գիտեր ինչ չեմ... չեմ ուզեր իր երեսը տեսնել...:

Քափ. — Բայց արդեօք կոստանդինն է:

Փէլ. — Ո՞ն, կոստանդինը, իմ ամենէն հաւատարիմ բարեկամս, որուն կեանքը փրկեցի...: Ո՞ն քիչ մը վերջը հետը կը տեսնուիմ (կը մեկնի):

Քափ. — Ինչպէս որ կը կամիս (կ'երրայ բանալու):

Քարլ. — (ներս մտնելով). Բարի լոյս, Քարլինի՛:  
 Քարլ. — Բարի եկար, Թագէնու. իմ սիրելի աշակերտս, ի՞նչպէս էք (կոստանդինին դառնալով):  
 Քարլ. — Շնորհակալութիւն, պարզն ուսուցիչ:  
 Քափ. — Հրամէ նոստէ՛ հոս... խեղծուկ արուեստաւորներու քով: Մենք ձեր ոսկեզօծ աթոռները չունինք: (կը հստին):  
 Քարլ. — Կարծեմ թէ կը ծաղրէք...: Իմ որդիս մեծ յառաջադիմութիւն կ'ընէ արուեստին մէջ: Զեղի շնորհակալ ըլլալու եկայ:  
 Քափ. — (Անշոշտ. բարեկամի դասեր):  
 Քարլ. — Ես աշխարհիս վրայ զաւակներէս աւելի սիրելի բան չունիմ: Զիւենք աւելի կը սիրեմ այն օրէն ի վեր՝ յորում ստիպուեցայ հայրենիքու ու անդասաններս թողուլ՝ որոնց վրայ արեն առառ կեանք կ'անձրևէ. տարաչք եալ մը՝ որ զաւակներ ունի՛ հայրենիքի մէկ մաս մ'իրեն հետ քաշելով կը տանի:  
 Քափ. — Խօսքին տեղը բերիր, ինչ կ'ընէ արգեօք Յովհաննէսը, մեր քաջ նկարիչը. ինծի գեղցիկ նկար մը խոստացեր էք:  
 Քարլ. — Ո՞չ, այս, երկու տարի է որ կ'աշխատի անոր վրայ և գրեթէ աւարտելու վրայ է, երբ հրապարակ ենէ մեծ համբաւ պիտի ստանայ. բոլոր յոյս այն նկարին վրայ դրած եմ: Իմ Յովհաննէսս իր ուսումները ֆերրի քով սկսաւ, և անոր դպրոցին մէջ մեծ յառաջադիմութիւն ցոյց տուաւ. քիչ յետոյ, ես թէկ քանդակագործ՝ ուզեցի իրեն ուսուցիչը, իրեն առաջնորդն ըլլալ, որպէս զի զինք երեւելի նկարիչ մ'ընելու փառքն ուրիշն չթողում. սակայն, որովհետև ես իմ գործերովս զբաղած էի, ասոր համար միայն ես իմ ընտանեաց ուրիշ նոր նկարիչ մը տալու պատիւը ձեզի թողուցի:

Քափ. — Երկուքին ալ պարզեւ մ'ըրած էք:  
 Քարլ. — Բայց անիկայ ուզեց Ֆիրէնցէ անցնիլ, և հոն արուեստից սիրելի գրախանիամի ուղղութեան ներքն: Կուխտոյ իր վրձինը կրթել՝ ասպետ Փարմինիամի ուղղութեան ներքն: Կուխտոյ իր վրձինը Վագգաղենացիի վսեմ հնդինակը: Ասրկայ ինծի գրեց Քարաչիոն: Ես այն նամակը քաստենեակու կը պահեմ իբրև սրբազնանան մը, յաղթանակ մը:  
 Քափ. — Կը զովեմ ու կը նախանձիմ վրագէ Ուրեմն Յովհաննէսի ապազան ապահովագրուած է: Բայց, սիրելի՝ քանդակագործս, ես կ'ըսեմ, արգեօք կարենոր է մտածել իմ այն աշակերտիս ապ...:  
 Քարլ. — Ան եղած է արգէն, ձեր աշակերտն ըլլալով, և աշակերտ՝ որ մեծ պատիւ կը բերէ իր ուսուցչին:  
 Քափ. — Կը ծաղրէք: Ա՞և, քիչ մնաց որ մոռնայի, կ'ուզեմ Փէլէկրոյի նկարը քեզի ցուցը նել...: Անշապի անգամ ինծմէ խնդրեցիք:  
 Քարլ. — (աճապարանիով): Աւարտած է:  
 Քափ. — Այս առտու աւարտեց: Տեսէք:  
 Քարլ. — (հիացած): Ո՞՛չ:  
 Քափ. — Ի՞նչ եղաւ:  
 Քարլ. — Ո՛չնչ... ոչինչ... գեղեցիկ է... հիանալի... զլուկ գործոց մը: Վայրէկեան մը, թողուցէք որ քննութիւնս աւարտեմ: (Կը սկսի ուշադրութեամբ դիտել):  
 Քափ. — (կոստանդինին): Ի՞նչպէս է:  
 Կու. — Հրաշալի է, և պատիւ կը բերէ սիրելի բարեկամիս:  
 Քափ. — Ուրեմն, սիրելի՝ Թագէսու, գո՞ւր ի՞նչ կ'ըսէք աշակերտիս նկատմամբ:  
 Քարլ. — Կրնաք պարծիլ և հանգիստ մեռնիլ: Ես չէի կարծեր որ այսչափ կարողութիւն ու-

նեսայ...: Այս նկարը Մէտիշիներու դահլիճին մէջ դրուելու արժանի է... քսան տարեկան հասակի մէջ...:

Քափ. — Ո՞հ և ոչ իսկ գեռ աւարտած...: Գեռ ամիս մ'ու հինգ օր ալ կ'ուզէ: Ոսկերիշներու ճամբուն մէջ ցոյցի պիտի գրուի այս իւզաներկը: Կարծես հիմակութնէ իսկ կը տեսնեմ խուռն բազմութիւն մը՝ որ անոր շորջը կը խոնուի, կը լսեմ արդէն կեցցէները, ծափահարութիւնները, և հիացումի ձայնները: Ո՞հ, այո՛, ձենովան իր կուիտոն պիտի ունենայ:

Քարլ. — Կը կարծէք:

Քափ. — Միքէլանճէլոյի ոսկրներուն վրայ կ'երգնում, այնչափ վստահ եմ: Բայց ըսէք ինձի քիչ մը, հիացած մնացի՞ք, պապանձեցա՞ք:

Քարլ. — Այո՛, իբրաւցնէ... սքանչացայ, ձեզի հետ կը միխթարուիմ, ուսուցիչս... և զնեղ ազատ կը թողում ձեր դասին համար: Ձեզի կը յանձնեմ զաւակս:

Քափ. — Ո՞հ, այս տանս մէջ ապահով եղէք: Քարլ. — Մնաք բարեաւ, ի մօտոյ կը տեսնուինք: (Դարձեալ նկարին նայելով) Գլուխ գործոց մ'է, տարակոյս չկերցներ: (Ինքն իր ձականը ծեծելով) Խեղճ զաւակս, Փէլլէկրոն գրեզ գերազանցեց (իր մեկնի):

Կոս. — Եւ իմ բարեկամս, սիրելի ուսուցիչ: Կ'ուզէի հետը տեսնուիլ անզամ մը:

Քափ. — Մի՛ տարակուիք, քանի մը վայրկենէն հոս կ'ըլլայ...: Եւ ահաւասիկ:

### ՏԵՍԻԼ. Դ.

Փէլլէկրոն և վերոյիշեալք.

Փէլ. — Ո՞հ սիրելի կոստանդինս:

Կոս. — Փէլլէկրոն (իր գրկուին):

Փէլ: — Նստէ՛, սիրելի բարեկամս, կ'ուզէն որ դասի սկսինք:

Կոս. — Ո՞չ, առ այժմ:

Քափ. — Արգեօք անհանգիստ էք:

Կոս. — Ո՞չ, սիրելի ուսուցիչս, բայց սրտայուզութիւնը զոր կը զգամ՝ տեսնելով այսակիսի գլուխ գործոցի մ'աւարտած ըլլալը, որ իմ սիրելի փէլլէկրոյ ֆիուլայիս բախտը պիետի շնէ, ինձմէ ինեց, կրնամ ըսել, քաշասրտութիւնը՝ շարունակելու ձեռնարկած ասպարէզս, ինքինքս անկարող զգալով անոր կատարելութեան հասնելու:

Փէլ. — Ինչ կ'ըսես, սիրելի բարեկամս: Կ'ուզէն քայլու ենեմ առնուլ, հիմա, որ արդէն բաւական ջրի վրայ գրած ես: Ո՞հ, մի վհասիր, մանաւանդ կրնասատկէ՛ եռանդդ և ջանա կատարեալ արուեստաւոր մը դուրս գալ:

Քափ. — Բարեկամս, ես զքեզ չեմ շողաբրթեր, դու արդէն բաւական ջրի վրայ գրած ես, և եթէ քիչ մ'ալ շարունակես, չեմ տարակուսիր որ զօրաւոր և ճարտար վրձին մը պիտի ունենաս, որուն հայրդ ալ շատ կը փափաքի ու կը յուսայ:

Կոս. — Բայց ի՞նչպէս պիտի կարենամ վարձատրել ձեր իմ վրաս ցոյց տուած այնչափ հոգը: Ո՞չ, ոսկին ալ բաւական չէ՝ ձեր սէրը փոխարինելու համար... սիրուս... այո՛, սիրոս երախտագէտ պիտի ըլլայ ձեզի, և երախտագիտութեան զգացումն երգեք գործադրութեան պիտի

Գրդրե. Թատր. 14.



չջնջուի: Ո՞հ, գԺբաղպաբար, ո՞վ Փէլլէկրոյ,  
մեծախս կը պարտիմ քեզի, երբ, կեանքիր  
չխնայելով, ծովը նետուեցար զիս ստոյդ մա-  
հէ մը փրկելու համար, մինչ ես լոդալու ան-  
փորձ, գրեթէ խղզուելու մօտ էի: Ո՞հ, տար  
Երկինք որ նման առիթ մ'ունենայի քեզի ե-  
րախտագիտութիւնս ցոյց տալու համար:

Փէլ. — Ասոր վրայ չխօսինք, որովհետև ամէն  
բարի քաղաքացիի պարտականութիւնն է իր  
նմանին օգնութեան հասնելու, երբ զայն վտան-  
գի մէջ կը տեսնէ: Խօսքը փոխենք: Յովհան-  
նէս եղայրդ իր գործն աւարտելու մօ՞տ է:

Կոս. — Այսո՞... բայց քուկինէդ շատ վար կը  
մնայ: Ծանր հետևանքներ կը նախագուշակեմ:   
Հայրս նախանձախնդիր է իր որդույն փառ-  
քին, զանիկայ կուտքի ախս կը պաշտէ...:  
Այն ձեռքը՝ որ Յովհաննէսին անունը կ'աւրէ,  
նա զայն կտրել պիտի ուզէ: Իր սիրու բարի  
է, միայն թէ ոչ ոք արգելք ըլլայ իր որդույն  
առաջնութեան. կ'անգթանայ... անոր փա-  
ռաց հետ մրցողի մը դէմ:

Փէլ. — Ո՞հ, կը հասկնամ ըսածդ, կոստանդին:   
Այս նկարը՝ զոր այնչափ սիրով ու ջանքով  
ի զլուխ հանեցի, գուցէ տխուր հետևանքներու  
պատճառ ըլլայ:

Կոս. — Ապահով եիր, ո՞վ Փէլլէկրոյ, որ ես  
արթուն պիտի ըլլամ և քեզ պիտի իմացնեմ  
եթէ ո և է նենգաւոր ձեռք քու վրադ բարձ-  
րացուի:

Քափ. — Բարեկամներ, մեր քաղաքացիներուն  
վրայ անիրաւ ենթադրութիւններ չընենք, եր-  
կինք մեր վրայ պիտի հսկէ:

### ՏԵՍԻԼԵ.

ՏԱՐ ՊԱՏՎԱՄԱՐ ԱՐ.

Պատգամաշոր. (Աերսէն դուռը կը զարնէ):  
Քափ. — Դուռը զարկին: Ո՞վ է:  
Պատ. (Աերսէն). — Գերմապայծառ Տոժին հրա-  
մանով:

Քափ. — Փուռ բան... իսկոյն, ծառայ եմ Տո-  
ժին... (կը բանայ):

Փէլ. (Կոստանդինի): — Ի՞նչ պիտի ըլլայ ար-  
դեօք:

Պատ. — Տոժը կը փափաքի որ անմիջապէս իր  
պալատն երթան Ֆէլլէկրոյ փիուան և Դոմի-  
նիկոս Քափէլլինի, որ կարծեմ, Եթէ չեմ  
սխալիր, գուք երկուրքդ էք:

Քափ. — Իրաւոնք ունիք. Ի՞նչ պիտի ընէ:

Պատ. — Վէրջը կ'իմանաք:

Քափ. — Առաջուց կ'ուզէի գիտնալ:

Պատ. — Ինչ որ պիտի ընէք գիտէք (կը մնկնի):  
Քափ. — Սանդուխներէն թաւալգլոր կորսուին:  
Ճար չկայ, պէտք է երթալ: Եկուր, Փէլլ-  
կրոյ:

Փէլ. — Եւ կոստանդինը:

Քափ. — Միասին թող զայ:

Կոս. — Քալենք:

### ՏԵՍԻԼԵ. Զ.

ԴՈՄԻՆԻԿՈՍ ԱԵՐՍԷՆ և ՎԵՐՈՅԻՆԵԼՂՐ.

Դոմ. — (Աերսէն). Մարդ կա՞յ հոս:  
Փէլ. — Դոմինիկոսն է որ միւս կողմէն կու զայ  
(կը ժամկէ Ալյարը):

Քափ. — Այսպէս լաւագոյն է...: Երթանք:

Փէլ. — Կու զամ (կը մնկնի):

Հջնջուի: Ո՞հ, գժբաղդաբար, ո՞վ Փէլլէկրոյ,  
մեծապէս կը պարտիմ քեզի, երբ, կեանքիդ  
չխնայելով, ծովը նետուեցար զիս ստոյգ մա-  
նէ մը փրկելու համար, մինչ ես լողալու ան-  
փորձ, զբեթէ խղզուելու մօտ էի: Ո՞հ, տար  
Երկինք որ նման առիթ մ'ունենայի քեզի ե-  
րախտագիտութիւնս ցոյց տալու համար:

Փէլ. — Ասոր վրայ չխօսինք, որովհետև ամէն  
բարի քաղաքացիի պարտականութիւնն է իր  
նմանին օգնութեան համնելու, երբ զայն վտան-  
գի մէջ կը տեսնէ: Խօսքը փոխենք: Յովհան-  
նէս եղայրդ իր գործն աւարտելու մօ՞ւ է:

Կոս. — Այո՛... բայց քուկինէդ շատ վար կը  
մնայ: Ծանր հետևանքներ կը նախագուշակեմ:  
Հայրս նախանձախնդիր է իր որդւոյն փառ-  
քին, զանիկայ կուռքի պէս կը պաշտէ...:  
Այն ձեռքը՝ որ Յովհաննէսին անունը կ'աւրէ,  
նա զայն կարել պիտի ուզէ: Իր սիրութ բարի  
է, միայն թէ ոչ որ արգելք ըլլայ իր որդւոյն  
առաջնութեան. կ'անզթանայ... անոր փա-  
ռաց հետ մրցողի մը դէմ:

Փէլ. — Ո՞հ, կը հասկնամ ըսածդ, կոստանդին:  
Այս նկարը որու այնչափ սիրով ու ջանքով  
ի զլուխ հանեցի, գուցէ տիսոր հետևանքներու  
պատճառ ըլլայ:

Կոս. — Ապահով եղիր, ո՞վ Փէլլէկրոյ, որ ես  
արթուն պիտի ըլլամ և քեզ պիտի իմացնեմ  
եթէ ո և է նենգաւոր ձեռք քու վրադ բարձ-  
րացուի:

Քափ. — Բարեկամնէր, մեր քաղաքացիներուն  
վրայ անիրաւ ենթագրութիւններ չընենք, եր-  
կինք մեր վրայ պիտի հսկէ:

## ՏԵՍԻԼ Ե.

ՏՈՒՄ ՊԱՏՎԱՄԱԿՈՐ մը.

Պատգամաշոր. (Անրսէն դուռը կը զարնէ):  
Քափ. — Դուռը զարկին: Ո՞վ է:  
Պատ. (Անրսէն): — Պերճապայծառ Տոժին հրա-  
մանով:

Քափ. — Փուճ բան... խկոյն, ծառայ եմ Տո-  
ժին... (կը բանայ):

Փէլ. (Կոստանդինի): — Ի՞նչ պիտի ըլլայ ար-  
դեօք:

Պատ. — Տոժը կը փափաքի որ անմիջապէս իր  
պալատն երթան Ֆէլլէկրոյ Փիոլան և Դոմի-  
նիկոս Քափէլլինի, որ կարծեմ, եթէ չեմ  
սխալիր, գուք երկուքդ էք:

Քափ. — Իրաւունք ունիք. Ի՞նչ պիտի ընէ:

Պատ. — Վէրջը կ'իմանաք:

Քափ. — Առաջուց կ'ուզէի զիտնալ:

Պատ. — Ինչ որ պիտի ընէք գիտէք (կը մեկնի):

Քափ. — Սանդուկներէն թաւալգլոր կորսուէն:  
Ճար չկայ, պէտք է երթալ: Եկուր, Փէլլէ-  
կրոյ:

Փէլ. — Եւ կոստանդինը:

Քափ. — Միասին թող զայ:

Կոս. — Քալենք:

## ՏԵՍԻԼ Զ.

ԴՈՄԻՆԻԿՈՍ ԱՆՐՍԷՆ և ՎԵՐՈՂԻՉԵԱՂՔ.

Գոմ. — (Անրսէն). Մարդ կայ հոս:

Փէլ. — Դոմինիկոսն է որ միւս կողմէն կու զայ  
(կը ժամկէ Ակարը):

Քափ. — Այսպէս լաւագոյն է....: Երթանք:

Փէլ. — Կու զամ (կը մեկնի):

## ՏԵՍԻԼԻ Ե.

ԹՈՄԻԿԱԿԱՍ և Տ'ՕՊՐԻ.

Դում. — (զինով վիճակի մեջ ներս կը մտնի և խառնափեղոր):

Օպր. — (զգուշաւոր կերպով յառաջ գալով):

Դում. — Եղբայր...: Պարզն ուսուցիչ... (Տ'Օպրիին): Հոս մարդ չկայ...: Ներս մոտք, յառաջ եկէք...:

Օպր. — Իրաւցնէ՝ մարդ չկայ: Ավահնվ ես...:

Դում. — Չէք տեսներ: Մինակ ենք...: Ծարաւ ի՞ էք: Գաւաթ մ'ալ գեռ պէտք է խմել ստամբուր զովացնելու համար:

Օպր. — Ինչպէս կը հաճիս այնպէս ըրէ:

Դում. — Երթամ շիշը բերեմ, ակընթարթէ մը կու գամ... իրարու կենաց խմնք... կեցցէ՛... կեցցէ՛... գու քիչ մ'այս նկարս դիտէ: (օրու բարելով կը մեկնի):

Օպր. — Ձեռնարկը յանդուզն է, բայց ապահով: Մարդ գինովածին պէս տղայ կը դառնայ, իմ նպատակս ալ էր պէտք եղածին չափ խմնել: Նկարն այս տեղ պիտի ըլլայ... բայց ես չեմ կրնար ճանչնալ, արուեստն չեմ հասկնար. բայց շատ լաւ կը ճանչնամ. դըրամներուն դէմքերը: Գաղղիոյ մէջ կորուսած՝ իտալիոյ մէջ շահեցայ: Այս ճեռնարկիս մէջ իմ շահս կայ. գանձագիրը կը կնքուի, նկարը Քարլոնէի կը մնայ, դրամն ալ ինծի. փոխանակութիւնը վաշխառութեամբ կ'ըլլայ, շատ լաւ է:

Դում. — (շիշով ու գաւարելով կը վերադառնայ) Ահաւասիկ եկայ. շուտ ըրի:

Օպր. — Նստինք, սիրելիս:

Դում. — Բնէք նայիմ... այսպէս աղէկ է... շատ տաք է գիտէք... ասիկայ կը մարէ... փոր-

ձենք (կը լեցնէ): Մինչև մրուրը... հրաշալիք է... ուրիշ մ'ալ:

Օպր. — Ա՛յլ ևս չեմ խմեր:

Դում. — Ես կը խմեմ... ի՞նչ գեղեցիկ բան է պանդոկ... փիլխոփաներու գիտ: Կեցցէ՛ բարեկամութիւնը, ուրախութիւնը. Կեցցէ՛... կեցցէ՛... հատ մ'ալ պարտաւէրներուս կենացը (կը խմէ):

Օպր. — Դրամ կ'ուզէն:

Դում. — Տուր... անոնք բոլոր պիտի ծախսենք: Միծ ճաշ մը: Իմ եղբայրս, կրնամ ըսել քեզի, թէ, աբեթի պէս չոր մէկն է... խեզն մարդը, բայց մէնք իրեն դրամ կու տանք... այնպէս չէ:

Օպր. — (վերջապէս): Անշուշտ: Ահաւասիկ, սիրելի Դումինիկոս: Ինչպէս զիտես արդէն, ես քու եղրօդդ ոճին վրայ սիրահարուած եմ... քիչ ատենէն պիտի մեկնիմ, և կ'ուզեմ իր հանճարի գործերէն մին հետս տանիլ: Գու ուսուցիչդ, Քափէլլինին, ինծի նկարի մը վրայ խօսեցա զոր Փէլլէկոն աւարտելու վրայ է եւ զեր, ևս խոսսացայ զայն գնելու, և իր հաւանութիւնն ալ առի, զանիկայ հետս տանիլ խոսսանալով:

Դում. — Իրամ կ'ըսես: Ի՞նչ հաճոյք, կարծեմ վերջացուցած է... զլուխ զործոց մ'է զիտէ՞ք. զեղեցիկ բան, շատ զեղեցիկ, եկէք տեսէք: (կը բաւայ իշղանեկարի): Վսեմ բան չէ:

Օպր. — Այս, ստուգիւ, հաւնեցայ... ուրեմն կրնաք ինծի յանձնել, ես իսկոյն հարիւր սկսութը կը վճարեմ, ըստ մեր կանխիկ դաշնագրութեան:

Դում. — Ճարիւր սկսուտ... փառաւոր, գեղեցիկ բան, դուրս հանէ տեսնեմ, ցնծա՛... ոհ ի՞նչ հրաշալի բան է դրամը:

Օպր. — Իրաւցնէ՛...: Ահաւասիկ (կը համրէ):

Դում. — Ո՛քափ արծաթ: Ոսկի ալ կայ...: Ո՛զ

աստեղք երկնից: Ո՞րչափ գինի կը գնուի այս  
փողերով...: Ի՞նչ ուրախութիւն: Ի՞նչ ցնծու-  
թիւն...:

Օպր. — Նկարն առնեմ (կ'առևելու): (Յաջողե-  
ցաւ):

Դում. — Առէ՛ք, ինչու կը սպասէք: Հարիւր  
սկուտ...: Ի՞նչպէս զոհ պիտի ըլլայ եղայրո...  
ինչ առատաձենն, ազնիւ մարդ է Օպրի:

Օպր. — Ուրեմն, մնան բարեաւ:

Դում. — Եւ իւղանե՞րկը:

Օպր. — Վերնազգեստին տակ դրի: (Քիչ առե-  
նէն կը սթափիի): (կը մեկնի):

Դում. — Ասկից աւելի ինչ հաճոյք կայ, քան  
մարդն նստած իր դրամները դիտէ... այսինքն  
ոչ իմն, այլ Փէլլէկրոյին...: Այսպէս լաւա-  
գոյն է, բայց այսօր շատ տաք կ'ընէ... թէ  
և նոյեմբերի մէջ ենք... գլուխս կարծես կրակ  
է... աչքերս կը փակուին... քունս եկած պի-  
տի ըլլայ... սանկ քիչ մը գիշերուան պէս  
քնանամ... (կը մրափէ, հաեզիստ, յետոյ  
խուելով քենյ մէջ): Ե՞հ... Ե՞հ, զինի... յաղ-  
թեցի... ուրիշ խաղ մ'ալ... հինգ... ութը...  
վեց... եցէ՛ք... տուէ՛ք որ խմեմ... երկու...  
չորս...:

### ՏԵՍԻԼ. Բ.

Փէլլէկրոօ և. Քափէլլէկրո.

Փէլ. — Ո՞հ, ուսուցիչս, ինչ երջանկութիւն...:  
Քափ: — Այո՛, շատ ազնուական մարդ է Տոժը:  
Իր դահլիճն համար պատրաստելիք նկարո՛  
քեզի նոր դափնեպսակ մը պիտի ընձեռէ.  
Նիւթը մեծ է. Գոլումպոս որ ուզն Ամերիկա-  
է ըստք: Ասիկայ քու երևակայութիւնդ պէտք

Փէլ. — Այո՛, արդէն բոլոր արուեստաւորի մը  
ունեցած երևակայութիւնս կը գրաւէ: որ իր  
յատուկ գործին վրայ կը մտածէ: Երբէք վըր-  
ձինը հանգիստ պէտք չէ առնու: Վաղը, նոյն  
իսկ այսօր... բայց ոչ, այս օրս պէտք է  
սրբազն ըլլայ իմ յաղթանակիս համար:  
Լոյսը՝ իր աեղք պիտի զետեղուի. հիմա, այս  
վայրիկնիս իսկ կը սպասուի: Բայց ուր է եղ-  
բայրս: Թող ինքն ալ երջանկութեանս մաս-  
նակի:

Քափ. — Ահաւասիկ հոն կը քնանայ:

Փէլ. — Կը քնանայ:

Քափ. — Թող որ քնանայ: Նկարն ա՛ռ ու եր-  
թանք վասն զի մեզի կը սպասն:

Փէլ. — Ի՞նչ համորգով կը մերձենամ հիմա իմ  
ձեռագրոծիս (կը բանայ վարագոյրները):

Ա՞խ... մեռայ:

Քափ. — Ի՞նչ կայ:

Փէլ. — Իմ նկարս, նկարս...: Զկայ:

Քափ. — Զկայ: Ո՞հ անկարելի...:

Փէլ. — Ո՞հ, որո՞ն նախանձը շարժեց, սիրոս  
խոցեին: Անիծուի, կատաման մեռնի այն՝ որ  
խեղճ արուեստաւորի մը համբաւը կը մարէ:  
Քափ. — Ո՞հ, Միկէլանճէլն վկայ: Վատու-  
թիւն մ'է: Գոմինիկոնս, Գոմինիկոնս, ար-  
թընցիր:

Դում. — (այրինեալով) Ո՞հ, զթութիւն, աւա-  
զակները (ձեւքելով դրամներուն վրայ կը դիմէ):

Քափ. — Ի՞նչ աւազակ...: Բայց ինչ կայ: Գի-  
նով ես:

Դում. — Ե՞ս զինով:

Փէլ. — Եղբայրս, նկարս կը հարցնեմ քեզի:

Դում. — Ի՞նչ նկար...: Ուրախացիր, եղբայր,  
դրամ... դրամ, ա՛ռ... կեցցէ:

Փէլ. — Ախ:

Քափ. — Կարելի՞ բան է:

Դում. — Պատկերն ինչ պիտի ընես...: Դանկ

մանգամ չունէիր, և ասոնք 100 սկուտ են...:  
 Քու իւղաներկդ ծախուած է:  
**Փէլ.** — Ծախուած:  
**Քափ.** — Ան, անօրէն:  
**Փէլ.** — Ծախուած: Ո՞հ, ազգէս կորսուէ, գուցէ խելազարիմ:  
**Քափ.** — Որո՞ւ ծախեցիր: Խօսէ՛ թշուառական դու:  
**Դոմ.** — Գաղղիացիին, որ այս ժամուս դէպ ի Փարիզ ճամբայ եւաւ: Դրամնէր: Եղբայր... գրամնէր:  
**Փէլ.** — Գետինը մանեն ատոնք, ես զրամ չեմ ուզեր...: Կ'ուզեմ անօթութենէ մեռնիլ... իմ իւղաներկս ի Փարիզ Օտար հողի մէջ, մինչ զեռ ես երգուած էի Խոտալիոյ և միայն Խոտալիոյ նուիրել իմ վրձինս: Ո՞հ, բարեկամնէր, օ՞ն, հասէ՛ք, կեցուցէք զայն, իրեն դարձուցէք դրամները... իմ բոլոր արիւնս խոստացէք անոր. բայց իմ նկարս... իմ կոյսս... ինձի... հոն ուր պիտի զրուէր... ծնրադիր այս վերջին չնորհքը կը խնդրեմ ձեզմէ (կը սկսի ծերադրել, Քափէլինի զինք վեր կը բանէ):  
**Դոմ.** — (կ'առեն շիշն ու զաւարը) Խեղճին զաւաթ մը զինու տանք:  
**Քափ.** — Հեռու գնա (բարիւրեամբ ետ կը միկ զինք): Անօրէն: Դու եղբօրդ սպաննէքը պիտի ըլլաս...: Այսպէս է աշխարհ: (պատկեր):

---

## ԵՐԿՐՈՐԴ Ա. ՐԱ. ՐՈՒՍ. Ծ

---

Թաղինս Քարլոնի զրասկենեալը. արձաննեկը, կիսանեղինեկը, կուզի կոռուցանիք. մտից դուռ մը, Յովինանեկսի զրասկենեալը, և ուրիշ երեք խուցեր:

### ՏԵՍԻԼ Ա.

Տ'ՕՊՐԻ և ՔԱՐԵՎԵԿ.

**Քարլ.** — (տեսներով Օպրիի գալլ) Վերջապէս... նկարը:  
**Օպր.** — (նկարով) Ահաւասիկ:  
**Քարլ.** — Ինծի տուր: Իմս ես: (կը զետեղէ զայն խորը):  
**Օպր.** — Ինչպէս խոստացայ, ահա նկարը. ճիմա կարգը ձերն է:  
**Քարլ.** — Ան (իրեն քսակ մը կոչ տայ):  
**Օպր.** — Արծաթը է:  
**Քարլ.** — Ուկի:  
**Օպր.** — Այս լաւ է:  
**Քարլ.** — Բոլոր յաջող գնաց:  
**Օպր.** — Ամենայշանդ:  
**Քարլ.** — Լոռութիւն:  
**Օպր.** — Ուկին մեռելներուն խօսիլ կու տայ և ողջերուն լուել:  
**Քարլ.** — Ճենովայէն մեկնէ՛:  
**Օպր.** — Եւ այլ ևս չեմ վերադառնար (կը մեկնէի):

Քարդ. — (դուռը կը փակի ու նկարը կը յիտի) Մինակ եմ, մինակ... այս չարագուշակ նախանձելի նկարին հետ՝ որ այնչափ յոյսեր կը փնացնէ: (Կը յիտի զայն): Զեմ կրնար ժխտել, գեղեցիկ է, գեղեցիկ...: Բայց քանի երեք տարեկան հասակի մէջ սխալներ կրնան ըլլուիլ և մէջը պէտք են ըլլալ: Այս բազու կը... բայց ոչ... մսէ է...: Ուելի գուցէ կըրնայ ձեռք դպցուիլ մանուկին, այն աչքերուն, ուսքերուն... ո՞հ, ո՞չ, բոլոր գեղեցիկ է, կատարեալ ուսուցչի գործ է...: Բայց երբ Յովհաննէս այս նկարը տեսնէ... խեղճ տղայ: Ի՞նչ պիտի ըլլայ իր սիրտը... ո՞հ ինչ անէծք պիտի կարդայ իր աշխատութիւններուն, ջարդուիշուր պիտի ընէ իր վրձինը... սրտի ցաւէն պիտի մեռնի...: Իմ Յովհաննէսս մեռնի...: Այս նկարն իմոն է... զայն կ'ոչնչացընեմ... այո՞... բայց ձեռքս կը դողդայ անոր մօտեցած ժամանակ... սիրտ չեմ ըներ...: Կարծեն թէ այն աչքերն ինծի կը նային, թէ այն մարմիններն արիւն պիտի հոսեն... և կը դողդամ իբրև սրբազնութիւն մը:

### ՏԵՍԻԼ, Բ.

Յովհաննէս և վերոյիշեալք.

Յովհաննէս. — (Աերսին) Հայրիկ, դուռը բաց: Քարդ. — Յովհաննէս: Առ այժմ նկարը պէտք չէ իրեն ցուցնել (զայն կը պահի): Ես կայ, զաւակս (կը բանայ): Յով. — Ինչո՞ւ զրասենեկիս դուռը փակեր ես: Քարդ. — Կը կարծէի թէ այն սենեակը չես երթար: Յով. — Իւղաներկիս վրայ կ'աշխատէի, որ գրեթէ աւարտած է:

Քարդ. — Աւարտած, ապրին: Կարծեն այն նկարն՝ իմ ուրիշ մէկ զաւակս է: Այն սենեակը, թէ և ուրիշ կարասի չունի բաց ի քու նկարէդ, սակայն ինծի արքունիք մը, տաճար մը կը թուի: Բայց օրուան մէջ շատ ժամ կ'աշխատիս, քու առողջութիւնկ իմինէս աւելի թանկագին է ինծի: Յով. — Փառքը քննանալով չի ստացուիր: Քարդ. — Ո՞հ, փառքը, ստոյգ է... լաւ կ'ընես: Յով. — Միշտ կը վախնամ թէ անիկայ ինծմէ փախուս կու տայ: Զեզմէ ինդրած էի որ Փէլլէկորյի նկարին վրայ տեղեկութիւն հարցընք: Ես չէի կրնար, որովհետև այն երիտասարդը զիս կը նեղէ: Զանիկայ իբրև տէգումը կը նկատեմ: Քարդ: — Յովհաննէսս, ես տեղեկացայ: Յով. — Ուրեմն: Ըսէք. ի՞նչ կը խօսուի այս նոր քորէննոյին վրայ: Իւղաներկն աւարտած է: Քարդ. — Այս: Յով. — Իմինս գեռ ոչ: Քարդ. — Ինչ կարեռութիւն ունի: Յով. — Ե՞րբ պիտի ցուցադրուի: Զի՞ գիտցուիր: Քարդ. — Զի գիտցուիր: Յով. — Բայց այս առոտու դուք պաղ կերպով կը խօսիք հետու: Քարդ. — Ե՞ս: Բայց դու ինծի մտածկու կ'երկիս: Յով. — Այս. ինծի ըսին թէ Փէլլէկորյի նկարը զլուխ գործոց մ'է... թէ ուրիշ մ'ալ պերճապայծառ Տոժէն իրեն յանձնարարուած է: Պիտի գիտնաք որ ասով՝ իմ անունս կը մթագնի սկննակ երիտասարդէ մը՝ որ գեռ խանձարուրքին դուրս ելած չէ, և ինծի չափ արուեստի գլուխ գործոցներու վրայ ուսումնասիրութիւն ըրած չէ, և թէ ոչ Ֆիրենցէ և ո՛չ

Հոռվմ այցելեր է և այս երկնքէն զատ ուրիշ  
երկնքէ տեղեկութիւն չունի: Եւ սակայն ար-  
դէն շատերուն և ամենուն համակրութիւնը կը  
վայելէ: Խնդգինք ճենովական նկարչութեան  
վերանորոգող հանճար մը կարծեցնել կու տայ,  
և ուրիշ բան չէ բայց եթէ յաւակնոտ յիմար  
մը: Հիմա իր իւղաներկը հասարակաց ցու-  
ցահանդէսի պիտի դրուի, և եթէ մէկ քանի  
մոլեսանդներու դատողութեամբ իմ համբաւ  
վասուի՝ զոր այնչափ քրտինքով ստացեր եմ,  
կը կարծէք որ ես այլ ևս կարենամ ապրիլ  
և կամաց կամաց շմաշլ ու մեռնիլ:

Քարդ. — Մեռնիլ: Երբ հայր մ'ունիս: Մեռ-  
նիլ: Ո՞հ, զու զիս չես ճանչնար, և չես զի-  
տեր թէ հայրը պահապան հրեշտակ մ'է իր  
որդւոյն քով. թէ, ոչ որ կը համարձակի դպչի  
այն օրհնեալ զիտուն՝ որուն հայրական շլր-  
թունքներն հպատ են: Դու լոյս յաշխարհ ե-  
կար, և ես, ուրախութեան արցունքով մը,  
այն ժամը նշանակեցի անոնց թուոյն մէջ՝ ո-  
րոնք երեք չեն ջնջուիր...: Մեծցար, և երբ  
ապագայի յոյսերուն մէջ զմայլած, կ'ըսէի  
ինքն իրենս. Եթէ ես կրցայ զուրին ձեռք  
զարնել, այս մասնուկը, պատանի եղածին պէս,  
պիտի կարենայ վրձինը բռնել, և այն ժամա-  
նակ երկու քոյր արուեստներ պիտի ծաղկին  
իմ ընտանիքիս մէջ: Եւ երգունցայ կրել,  
բայց քեզի համար. ամէն բան թողուլ, բայց  
քեզի համար. մեռնիլ, բայց զաւակներուս  
կեանքն ապրելու համար. որովհետև չմեռնիր  
ծեր մը՝ եթէ հոգեվարի վերջին արցունք-  
ները՝ իր մահուան անկորոյն քով խոնար-  
հած իր որդւոյն ճակախն վրայ կը թափէ:

Յով. — (այլայլած) Ո՞հ, հայր իմ, որչափ զիս  
կը սիրէք:

Քարդ. — Ո՞հ, կ'ըմբռնե՞ս ուրեմն: Ահաւասիի:  
ասոր էր որ ես անձկանօք կը սպասէի: Ես

քեզի նպատակ մը սահմանած եմ, պէտք է  
անոր հասնիս. դու փառամոլ ես:

Յով. — Ե՞ս...:

Քարդ. — Այո՛, այս է իմ միմիթարութիւնս.  
պէտք ես այդպէս ըլլալ, ոչ սակայն այն-  
չափ՝ որչափ ես եմ քեզի համար: Մի՞ ջանար  
զիս զել՝ վասն զի անկարելի է: Դու ամէն բան  
չես մոտածեր, ես այո՛, զու կ'աշխատիս, կը  
սովորիս, բայց ուշագրութիւն չես դարձներ  
շուրջգ՝ զիտանալու համար թէ ինչ կը խօսուի  
քու նկարներուկ վրայօք. Ես այո՛, աչքերդ  
բաց չես կենար որ տեսնես թէ արդեօք ո և  
է մէկը կը յանդգնի քու տեղդ գրաւելու, ես  
այո՛: Դու աղու մը պէս հանգիստ կ'ապրիս և  
չես զիտեր ինչպէսը:

Յով. — Բայց հիմա ես մրցակից մ'ունիմ թէն  
իմ աչքիս ողորմելի, բայց ուրիշներուն առ-  
ջկ գօրաւոր. ուստի զանիկայ միշտ անյողգողդ  
խոչընդուռ մը կը տեսնեմ իմ քայլերուս...:  
Դուք անդրագարձած էք...:

Քարդ. — Քեզմէշ շատ առաջ անդրադարձեր եմ:  
Յով. — Բայց ի՞նչ ըրած էք:

Քարդ. — Ո՞հ: Ի՞նչ ըրած եմ...: Զես կրնար  
երկակայել...: Լոյշ... որպէս զի զիս սիրես՝  
պէտք եմ մերկապարանոց առջեղ բանալ իմ  
զգացումս: Այն նկարը, կոյսին նկարը, որ  
այնչափ համբաւ պիտի ստանար՝ ի վնաս քե-  
զի... ուր է... զուցէ իրեն համար սահմա-  
նուած տեղը...: Երազ...: Ո՞վ իմ որդւոյս  
թշնամիներ, անոր ի զուր պիտի սպասէք,  
այո՛, որովհետև ոսկիով կարելի է զինովցնել  
մարդ մը, զինիով ուրիշ մը... Փէլլէկրոյին  
իւղաներկը քուկդ է:

Յով. — (ուշախուրեակ բափով մը) Կմս:

Քարդ. — Քու ծննդեանդ օրը չէ: Քեզի կը  
նուիրեմ:

Յով. — Ո՞ւր է, ուր է:

Քարլ. — (ցոյց տպղով նկարը) Ահաւասիկ։  
Ցով. — Ո՞հ, վերջապէս ձեռքս անցաւ մըցակւցիս մէկ զլուխ գործնցը...։ Զեռքիս մէջ է... զառանցանք չէ...։ Ասիկայ է...։ Յիրաւի ասսիկայ... (նկարը դիտելով՝ սրտին միշտ ծնած նախանձը պիտի արտայացտէ)։ Ի՞նչ մեծ բան։ Ո՞ր է Կուտսոյի գոյները, զոր անցեալ օր Սթրոցցին ինծի կը զբուատէր...։ Նոր Ռաֆաէլլոյի գործ։ Եթէ ստոյգ զիտնայի թէ իմ վրձինս չկրնար գերազանցել այս գոյները, այս վայրկենիս իսկ կտոր պատառ կ'ընէի զայն։ Եւ դուք կ'ուզէք զիս մահացնէլ՝ Փէլլէկրոյէն վար գնելով։

Քարլ. — Ե՞ս։

Ցով. — Բայց այո՛, անշուշտ. դուք զանիկայ ինծմէ վեր համարած էք այն վայրկենէն իսկ՝ յորում նկարն իրմէ յափշտակեր էք։

Քարլ. — Յովհաննէ՛ս, ըրած բարիքին համար զիս կը յանդիմանես։ Ես հոս մէջս սոսկալի պատերազմ մ'ունեցայ՝ անպատիւ զործ մ'ընելու համար...։ Բայց իրդմտանքիս ըսի, լոէ՛, խնդիրը պատույ վրայ է, որդւոյս կեանքին վրայ. առանց խզի խայթի ես քեզի համար քիչ բան կրնայի ըրած ըլլալ։ Պէտք էք երկու զգացմունք քովէ քով գնել՝ բուելու. համար՝ թէ ասիկայ աւելի զօրաւոր է։ Այժմ զոհ եմ, վասն զի գիտեմ զքեզ աւելի սիրել՝ բան զիս։

Ցով. — Շնորհապարտ եմ ձեզի, բայց դուք կարողութիւն չունիք իմ խաղաղութիւնս ինծի վերադարձնելու։ Փէլլէկրոյի վրձինները փշրուած չեն ասով։ Հիմա ուրիշ նկար մ'ալ Տոթին համար պիտի պատրաստէ... ուրիշներ ալ պիտի շինէ... և այն ժամանակ...։ Ես իմ հանճարիս վրայ չեմ տարակուսիր... կը քրնամ Փէլլէկրոն տիզմերու մէջ թաթղել, բայց բաղդէն կը վախնամ, մոլեւանդութենէն, նախանձէն կը վախնամ։

Քարլ. — Մինչև որ ուրիշ զործ մ'ալ աւարտէ՞ւ ժամանակ կ'ուզէ։ Դու կրնաս քու ուսումդ ու ախատութիւնդ կրկնապատկել։ Ես, եթէ հարկ ըլլայ, քու ծառադ կ'ըլլամ։ Գիշերներն արթուն կը կենամ, բոլոր հարստութիւնս կը ծախսենք... բոլոր... որպէս զի քու անունդ փառաւորուի։

Ցով. — Այն սենեակը մտնենք ուր նկարս կայ, կ'ուզեմ ասոր հետ բաղդատել. պիտի տեսնէք։

Քարլ. — (կ'ասենու նկարը) Կու գամ... և յետոյ։

Ցով. — Ժմացնել զայդ։

Քարլ. — Ո՞հ։

Ցով. — Այդպէս կը պահանջէ փառքս՝ որ ձեզի այնչափ սիրելի է (նեղօրին)։

Քարլ. — Այո՛, որդեակ իմ, ջնջել ասիկայ... հետքն ալ թող չմնայ... պատառ պատառ ընել (կը մեկնիմ)։

## Տ Ե Ս Ի Լ Գ.

### ԿՈՍՏԱԽԻՒՆ.

Կոս. — (սենեակներէն, և որ լսած պիտի լլայ Քարլոնիկի վերջին խօսքերը)։ Ո՞հ... Լաւ լսեցի արգեօք... ջնջել զայն, լսաւ հայրս...։ Ի՞նչ բուռն կասկած կը ծնանի մարիս մէջ։ Տ'օպրի նկար մը կը տանէր, զոր ես իսկ իմ աչքովս սենեկիս պատշաճմէն տեսայ, բայց չկրցայ զայն ճանչալ. թէպէտ և կարելի՞ է որ հայրս...։ Ինծի այնպէս կը թուի իբրև թէ այս վայրկենիս տեսնէի։ Երբ Քափէլլինի իրեն ցոյց կու տար Փէլլէկրոյի նկարը, անշարժ մնաց, և յետոյ ճակատը կնճռուեց... արցունք վառուեցան... և արցունք մը փայտ աչքերը վառուեցան։

Եեցաւ հոն զոր ես իսկ տեսայ... այն նկարը պիտի բորբոքէր նախանձը որդույն՝ զոր ինք կուռքի պէս կը պաշտէր: Կրնար նոյն իսկ տխուր ճեռնարկի մը մղել զայն: Բայց ի՞նչ պէս կրնար ճեռքերուն մէջ ունենալ Տ'Օպրի Փէլլէկրոյի իւղաներկը: Եթէ ստոյգ ըլլայ, չափազանց անպատճի է, և կրնայ սիրելի բարեկամին և ազատարարին կործանումին և մասուան պատճառ ըլլալ: (Դուռը իր զարնեն) Մէկը դուռը կը զարնէ... բանանք. կրնայ յանկարժ հրեշտակ մ'ըլլալ զոր երկինք ինծի օգնութեան կը զրկէ (յ'երբայ բանալու): Դու մինիկո՞ս, դո՞ւ ես:

### Տ Ե Ս Ի Լ Գ.

Գուստավոս և վերոյիշեալն.

Դում. — Ես եմ, կոստանդին...: Ներեցէք եթէ առանց նկատողութեան հոս կու զամ. յատուկ զործի մը համար է...:

Կու. — Խօսեց՛ք:

Դում. — Պիտի խօսիմ, անշուշտ... հիմա: Աս մէն բանէ առաջ պէտք է զիտնալ որ իմ եղայրս... այսինքն է ես յուսահատ մարդ մ'եմ: Խելքս ուր է զիտէք արդեօք դուք... Եւ ոչ ալ ես... թէ յուսահատ մ'եմ... ուստի այն օրհնած Արծուէնշան պանդոկը... այն զինքն որ թոյն կրնայ ըլլալ... բայց... ոչ... ոչ... բայց այս... վասն զի զաղղիացին... զոր սատանան թող շուտով իր տունը տանի: Հարիւր սկսու... եղբայր իմ... իւղաներկը...:

Կու. — Բայց միտքդ շնորհով բացատրէ, Կ'աշչէմ:

Դում. — Ո՞հ, դո՞ւք ալ խելքերնիդ թռուցած էք: Միւսք չկրցայ բացատրել: (Կարելի է):

Կու. — Եղբօրդ նկարը:

Դում. — Ապրիք, բոլոր հասկցեր էք, եղբօրս նկարը...:

Կու. — Բայց ի՞նչ եղաւ: Ըսէ՞:

Դում. — Զըսի՞ որ: Զէ՞ք ճանչնար անպատիւ Օպրին...: Բայց ելքօրս զլիուն կ'ելպնում...:

Անիկայ բաց հաշիւ մ'ունի ինծի հետ ու զիս զինովցնել... կը հասկնաք... բայց այն իր զայլամորթը բոլոր վրայ պիտի տայ... կ'ուզեմ իր խարդախ խաղերով շրթած դրամներով իր գոնչն արծաթազօծել: Այսպէս զիս եղբայրադաւ ընել տալ, զոր այնչափ կը սիրեմ, և որուն համար... ինքինքս կրակի բոցերուն մէջ կը նետեմ...: Զեռքէս իր նկարը յափշտակել...: Ես ասոր համար հոս եկած եմ... սենեակը ցցուցէք ինծի:

Կու. — Ո՞հ, հոս չէ այլ ևս:

Դում. — Ես անձամբ կ'երթամ զինք փնտռելու. Եթէ Գաղղիա մենած է, ետեւն կը հասնիմ...:

Կու. — Ուրեմն, ըսէ ինծի թէ եղբօրդ իւղաներկն Օպրիին ծախսելոր:

Դում. — Լոէ, ապա թէ ոչ իմ ճեռքերովս ինք զինքս կը սպաննեմ:

Կու. — Դո՞ւք... դո՞ւք...: Ախ, մատնիչ:

Դում. — Կո՞ր տեսակ բան: Ատիկայ ես ալ զիտեմ... բոլոր զինքին պատճառաւ... բայց իմ որոշողութիւնո՛ որոշողութիւն է... կ'ուզեմ ջուր խմել, միշտ ջուր:

Կու. — Ախ, թշրւառական. բայց ի՞նչ բանի կու զայ այս ամէնը, քանի որ քու պատճառաւ եղբայրդ իր պատկերէն զրկուեցաւ, որուն համար այնչափ քրտինք, այնչափ նեղութիւն քաշած էք: Ի՞նչ քաւութիւն պէտք է յանցանքիդ:

Դում. — Ապրիի արիւնը:

կոս. — Այսիկ ըրէ՛. հոս պէտք է ուշադրութիւն գարձնել... ժամանակ մի՞ կորսնցներ: Գնա՛, Քափէլլինին վազէ՛, ըսէ իրեն որ պէտք է անմիջապէս Տոմին դիմէ: Անիկայ արդար է, կը սիրէ՛, կը պաշտպանէ գեղարուեսուները, խեղճ արուեստաորին վրէմբ-կը լուծէ: (Ան, անպիտան: Եւ իմ հօրս համբաւէր: Հիմա այլ ևս տարակոյս չկայ): Ո՛չ, այդպէս մի բար ուսուցչին: Բոլորովին ինծի թող այս խրն գիրը... ինծի թող, որովհետև այս անզամ ես միայն պէտք եմ ստանձնել պաշտպանութիւնն այս նենգութեան... ես՝ որ զիտեմ թէ ուր կը գտնուի նկար:

Դոմ. — (ուրախուրենենի ինքնիրմէ դուրս ելած): Ո՞հ... ո՞ւր է: Երթանք առնունք: Գրամ, արին, կեանք, բոլոր քու տրամադրութեանդ կը յանձնեմ:

Կոս. — (Ի՞նչ ըսի): Ախալեցայ... երազ մ'էր, բանդագուշանք մը... բայց չէ կարելի... զիս վայրիեան մ'ազատ թող, կ'աղաքեմ:

Դոմ. — Բայց ո՞ր գիւին կ'ուրգեն որ երթամ:

Կոս. — Զեմ գիտեր... ի՞նչ զիտնամ... բայց շուտ ըրէ՛, մի՞ կենար, միայնութեան պէտք ունիմ՝ նկարին... Փէլլէկրոյին... քու... իմ... ամէնուն վրայ մտածելու համար. գնա՛ (զինք դեպ ի դուռը կը մղէ): Եղքորդ ըսէ, որ զեռ չյուսահատի, յոյս ունենայ կոյսին վրայ. բայց գնա՛, գնա՛, կ'աղաքեմ:

Դոմ. — Ի՞նչ քաջասիրտ երիտասարդ: Օպրի՛, աւազակ, պիտի տուժես... բոնցի հարուածներու տակ պիտի զինովցնեմ զքեզ (կը մեկանի):

Կոս. — Ո՞հ, ապահով եմ... անոնց ձեռքին մէջ եղած նկարը՝ Փէլլէկրոյինն է, և այն է զոր կ'ուրգեն չնշել: Ամերիշտ գտա մը նիւթուած է զանիկայ խեղճ արուեստաորին յափշտակելու համար, և չամչան նիւթելու

օտարականի՞ մը հետ, որ Գաղղիա գառնալուն պէս պիտի ցուցնէ այս ոսկին՝ զոր իտալացիէ մ'ունեցեր է՝ իտալացոյ մը համբաւը չնշելու համար: 23 տարեկան երիտասարդի մը՝ զեղեցիկ, հրաշալի զործը պիտի կորսուի՞: Ո՞չ, կ'երդնում մօրս ուկրներուն վրայ, կեանքս թշուափին պաշտպանութեան համար պիտի զնեմ, և ասոր ստիպուած եմ՝ որովհետև իմ կեանքս փրկեց... բայց ի՞նչպէս: Զօրս ամօթն ու եղբօրս նախանձը մէջ տեղ հանել: Ասիկայ չեմ կրնար: Ես հօրմէս անհունապէս սիրուած եմ...: Ո՞հ... երբէք, երբէք...: Բայց Փէլլէկրոյն...: Իր համբաւը...: Պէտք է որ ես միտքս հանգարտ բռնեմ, որ միջին ելք մը գտնեմ... բայց ի՞նչպէս գտնել: Այսո՛, մի գուցէ ես համար ու մէկ մուածութիւններու մէջ թարթափած ժամանակս... ամբարիշտ զործողութիւնն ի գլուխ հանուի, մէկէ աւելի տարիներու աշխատութիւն մը՝ այնչափ փառքի յոյսն ոչնչացուի...: Ես ուրիշ բան չեմ կրնար, բայց եթէ լալ ու գոյնէլ այս վայրկենիս... բայց սակայն...: Ներսը աղմուկ կը լսեմ. վայ ինձ: Ով երկինք, միջոց մը ներշնչէ ինչ ծի... բոլոր իմ քաջասրտութիւնն պէտք է: Հայր... հայր... եղբայր... (բարձրաձայն կամչելով):

## ՏԵՍԻԼԵ.

ՔԱՐԵՅԱՆԵ, ՅՈՎՃԱՆՆԵՍ և Վերոյիշեալէ

Քարլ. — Ի՞նչ կայ, որդեակ իմ:

Կոս. — Հայրիկ, ես զձեզ պիտի յանդիմանեմ նախատինքի մը համար՝ զոր ինծի նկատմամբ ունիք: Գիտեմ որ ձեր ձեռքն է Փէլլէկրոյի նկարը... և կ'ուրգէք ինծմէս պահել, իբրև թէ ես

ձեր զաւակը ըլլայի, իբրև թէ եղօրս պատիմն իմ եղած ըլլար: Ինչո՞ւ զիս այդպիսի միմիթարութենէ մը զրկել:

Քարլ. — Եւ ինչպէս զիտես....:

Կոն. — Բոլոր:

Քարլ. — Եւ ո՞վ ըստ քեզի....:

Կոն. — Տ' Օպրի զաղղիացին, որ ետև դարձած է, որովհետև չեմ զիտեր ինչ բան մուցած էս: Գորշակեցք: Ես որ ձեզի պէս նախանձախնդիր եմ փառքին եղօրս, որ նախանձով տեսած էր Փէլլէկրոյի նկարին հսկայակերպ յառաջադիմելը, վայրկեան մ'երջանիկ զգացի ինքնինքս՝ լտելով որ ձեր ձեռքերուն մէջ կը գտնուի....: Այսպէս, ըստ ինքն իրենս, պիտի չխաւարի ընտանեացս անունը: Ո՞ւր է: Ո՞ւր է այս նկարը: Ո՞չ, անշուշտ օննիկի նկարին քով դրուածն է: Հայրիկ, թողուցքը որ ձեր ուրախութեան ես ալ մասնակից ըլլամ' դիւտելով մրցակցի մ'աշխատութիւնը... թշնամւոյ մը զործը՝ որ չկրնար այլ ևս մեզի վնաս հասցնել. թողուցքը որ այն սենեակը մտնեմ, վայրկեան մը, վայրկեան մը միայն, սիրելի հայրիկ, (կանաց կանաց կը մօտենայ դրան):

Քարլ. — Կեցիր, որդեակ իմ, պէտք է միջոցը խորհիլ... մենք որոշած ենք պատուել զայն:

Կոն. — (Ո՞չ):

Յով. — Այո՛, և շուտ:

Կոն. — Ո՞չ, ո՞չ, մեծ անխոհեմութիւն կ'ըլլայ. կրնայ զաղտնիքը յայտնուիլ, և այն ժամանակ: Վերջապէս զուք զայն զնած էք, և մանաւանդ կասկած չտալու համար՝ պէտք չէք անոր ձեռք դպցնել. մինչդեռ պատուելով՝ կրնայ կարծուիլ թէ նախանձն ու ատերութիւնը միայն զմեզ այսպիսի ծայրայեղութեան մը մղեր են....: Եւ եթէ Տնժը... անիկայ կարող է իր զայրոյթով կայծակնահար ընել զմեզ.... ես զեզ շատ կը սիրեմ, և վայ ձեզի:

(Գուշով կը զարնուի): Կը լսէք....: Գուսը կը զարնեն... նայեցք:

Յով. — Ո՞վ պիտի ըլլայ արդեօք:

Քարլ. — (որ զնացեր է նայելու) Ո՞վ է:

### Տ Ե Ս Ի Լ Զ.

Փէլլէկրու և վերոյիշեալք.

Փէլ. — (Անրուէն) Փէլլէկրոյ Փիուա:

Կոն. — Ո՞վ երկինք, օգնէ ինծի:

Քարլ. — Ո՞չ:

Յով. — Անիկայ:

Կոն. — Գուցէ ամէն բան իմացած է....: Եւ կու զայ իր նկարն ուզելու:

Յով. — Ես, ևս կ'ուզեմ պատուել զայն, կարուենք է:

Կոն. — Ո՞չ, եղքայր իմ (անոր բայլերն արագիկելով):

Յով. — Ազատ թոն քայլերս... ձգէ' զիս:

Կոն. — Քու և հօրդ սիրոյն համար....: Հոս կեցիր: Փէլլէկրոն զքեզ չտեսնելով՝ կրնայ կասկածիլ. հօրդ քով կեցիր.... Ամէն բանի սուտ չի զիտիկ եղիր. և եթէ անհրաժեշտ է որ այս պատկերն այլ ևս մէջ տեղ չենէ, պատասխանատութիւնը ես իմ վրաս կ'առնեմ....: Այս բաներուն մէջ պաղպահիւնութիւն պէտք է: Փիչ ատենէն պիտի տեսնէք:

Քարլ. — Որդեակ իմ....: Զօրդ, եղքօրդ պատիւը....

Կոն. — Պիտի փրկուի, պիտի փրկուի (սենեալ կը կը մտնէի):

Քարլ. — (կը բանայ դուռը՝ Փէլլէկրոյին) Կը ներէք... ձեռքս անմիջական զբաղանք մ'ունիէի: Ինչ բանի կրնամ վերագրել արդեօք ձեր անակնկալ իմ տունս զալը:

Փեղ. — Մեծ դժբախտութեան մը:

Քաղղ. — Որո՞ւ պատահած:

Փեղ. — Ինծի:

Յով. — Մենք ի՞նչ կը խառնուինք մէջը:

Փեղ. — Կրնաք ինառուիլի: Մինչև ցայսօր զիս ատող, զիս մատնող թշնամիներս քիչ էին: Հիմա ուրիշներ կ'աւենան, որոնք թէպէտ եւ թէկ ինծի բարեկամ ցոյց կու տային ինքողինք նին. ահա թէ ինչո՞ւ ձեր տունը կու զամ: Ամէն մարդ գիտէր թէ նկարս աւարտած է, թէ նիշտ այսօր իր տեղը պիտի զետեղուէր ի տես խուռն բազմութեան մը՝ որ անշուշտ աւմէն կողմանէն պիտի վագէք. ծանօթ էր թէ իմ բոլոր հանճարս, ջանքս թափեր էի այդ կտաւ վին վրայ՝ զոր Տոժի պսակին հետ չէի փոշ խանակեր. շատ լաւ, գինովնել կը տրուի իմ եղբայրս, ինեղա անփորձ երիտասարդ մը...: 100 սկուտով զանիկայ իր հարազատին ձեռքէն կը յափշտակեն: Տոնն կը վերազանայ նկարիչը՝ բոլորովին գոհ Տոժէն ընդունած յանձնարարութեան վրայ, և զտներ այլ ևս նկարը: Այս մարդասպանութեան հեղինակը, այն մի և նոյն Օպրին է, որ այս տունը կը բնակի:

Քարղ. — Եւ ասկից ի՞նչ կը հետեւի:

Յով. — Ի՞նչ ըսել կը յանդգնիք:

Փեղ. — Ես պատիկ բան մ'ալ յանդգնելիք չունիմ, պարոններ... այս բոլոր գլխուս եկածը խորհուրդ մ'է: Ես եկայ ձեզմէ խնդրելու որ կարենաք ինծի ըսել թէ այս թշուառական մարդն ո՞ւր կը զտնուի... ո՞ր կողմ մեկնեցաւ, որպէս զի կարենամ ետեէն երթալ, ձեռք բերել նկարս: Ո՞հ, եթէ սիրո ունիք՝ շունչ փշեցէք դիակի մը:

Քարղ. — Անիկայ մեկնեցաւ. բայց ո՞ր կողմ, չնմ զիսեր...:

Փեղ. — Մեկնեցաւ: Շատ լաւ, ուրեմն, ձենու-

վան կը թողում, բոլոր իտալիա կը շրջիմ... բոլոր գաղղիա, բայց կ'երդնում Միքըլանձէ-լոյին վրայ՝ թէ զանիկայ պիտի գտնեմ:

## ՏԵՍԻԼԻ.

Գոտիւնառ և վերոյիշեալի:

Գոմ. — (յրան սեմին վրայ) Գոտնուեցաւ:

Քարղ. — Ո՞ւր հոս ի՞նչ կը վնտաէք:

Փեղ. — Եղբայր:

Գոմ. — Կը ներէք, վսեմաշուք տեամփ, երբ դուքը բաց է՝ կը մոցուի. և ես մտայ: Եղբայր, հիմա կրնաս զիս գրկել... իւղաներկդ գըտնուած է:

Փեղ. — Ի՞նչայէս:

Քարղ. — Ո՞ւր է:

Գոմ. — Հոս:

Քարղ. — Ո՞հ, երազ, զառանցանք:

Գոմ. — Հոս է:

Քարղ. — Խենթ ես:

Գոմ. — Հոս է կ'ըսեմ քեզի: Զես գիտեր ի՞նչ ըսել է հոս է: Ըսել է թէ Տ'օպրին գտայ, որ մեկնելու վրայ էր, և ես կ'ուզէի իրեն ուրիշ շրջան մ'ընել տալ՝ այս անցագործ (կը հանե ատրանակ մը): Բայց անիկայ խոհեմութեամբ, միայն երկու արծաթ սկուտով՝ ի՞նծի խոստովանեցաւ՝ թէ նկարը վսեմաշուք պարոն քարլոնէի հաշոյն գնած է. և ես համոզուած եմ որ պարոն Քարլոնէն առանց շատ աղաչել տալու՝ նկարը եղբօրս պիտի վերագրանէ, երբ ես իրեն վերագրանեմ իր անարգ ոսկեղբամը, որ չարժէր անպատուութիւնը որով համակուած է (անոր ոտքերուն առջև եւելելով քսակ մը):

Փեղ. — Ի՞նչ կը լսեմ: Իմ նկարս: Եւ դուք, նկարիչ մը...:

Դոմ. — Եւս առաւել...:

Յով. — Անպատութիւն, ըսկք : Իմ հայրս անպատիւ :

Դոմ. — Ըսելու կերպ մ'է :

Քարլ. — Հանդարտէ, որդեակ իմ. անիկայ գեռ զինոյ թափը կորսնցոցած չէ... պատիւ չուն նենալը կը ցուցնէ այն՝ որ այնչափ դիւրաւ ուրիշները կ'անպատուէ : Ես իմ տանս մէջ եմ, և կրնայի անմիջապէս նախատողները պատժէլ, եթէ ազնուական զգացումն իմ մէջս աւելի օրաւոր չըլլար՝ քան արդար ցասումն : Փէլլէկրոյ, սոսոյ է, ես զաղիացիին ձեռքով զնել տուի ճեր նկարը վասն զի կը սիրէի, և կը փափաքէի իմ գաճիճն մէջ զետեղել, ուր ձիուլիոյ Ռօմանոյի, ձիորնիոնէի և կուիտոյի գործերը կան : Եւ զայն ունենալու համար՝ ոսկի համրած եմ զոր չեմ ուզեր եւ առնուլ. իւզաներկն իմս է :

Դոմ. — Զե՞րը :

Փէլ. — Լո՛է, եղբայր :

Դոմ. — (Ձերմ ունիմ) :

Փէլ. — Ես արժանի չեմ, ով թագէոս, թուած մեծամեծներուդ մէջ զետեղուելու. ես իմ իւղաներկիս պէտք ունիմ, որովհետեւ այսօր զանիկայ ինծի յանձնարարողին պիտի տամ. որովհետեւ ձեռագործիս վրայ զաւկի մը պէս սիրահարուած եմ: Դուք նկարիչ էք, ըսածս կրնաք ըմբռնել: — Գիտէք, թէ ով որ նկար մը, արձան մը հնարած է, կը սիրէ, կը պաշտէ իր աշխատութիւնը, իրեն համար նա մատանի մ'է որուն հետ կապուած է իր անձին գոյութիւնը: Լաւ նայեցէք ինծի. քանի մը ժամէն երիտասարդութիւնը չկայ այլ ևս իմ դէմքիս վրայ. կը զզամ թէ աչքերս բոց կ'արձակեն. ինծի կ'երենայ թէ ծերացեր եմ, գերեզմանին եզերքը կը գտնուիմ: Ես իմ ձայնս չեմ բարձրացներ ճեր դէմ, ոչ, ճեր առջև ծա-

ույ մ'եմ. արցունք մը միայն ունիմա՝ ծնրազի ինդրելու համար՝ որ նկարս ինծի վերապարձնէք... (իր ժերայրէ):

Դոմ. — Եղբայր, քու տեղդ ես կ'ամշնամ:

Քարլ. — (ինըն իրեն) Խնչ ընելու է: Ստոյգէ, իմ որդիս փրկեց, բայց իմ պատիւս աւելի կարևոր է: ՈՎ փառասիրութիւն, որ զիս ապերախտ կ'ընես: Ելէք:

Փէլ. — (ոսքի եղնեղով) Ուրեմն կ'ուզէք զիս սպաննել:

Յով. — Բայց ինչ սպանութիւն...: Պատկերը մերն է:

Փէլ. — (բուռն բախով) ԶԵՐԸ: Աւազակն ալ երբ զանձ մը կը գողնայ, կ'ըսէ, իմ է... բայց տըլէ մը, զինովէ մը, յիմարէ մը չզնուիր:

Քարլ. և Յով. — Փէլլէկրոյ: Յանդրւան:

Փէլ. — Ինծի պէտք էիք նուիրել ոսկին: Բայց զիտէիք որ ես իմ փառքս չէի վաճառեր:

Յով. — Խնչպէս...:

Փէլ. — Այն, ծախսուած, վասն զի դուք վատութիւնն ունեցած էք զնելու զանիկայ:

Յով. — Դուրս ելէք:

Դոմ. — (Հիմա զինք պատուհանէն դուրս կը հանեմ):

Փէլ. — Դուրս ելնել՝ առանց իմ նկարիս...:

Քարլ. — Դուրս ելէք կ'ըսեմ ձեզի:

Փէլ. — Հրաման նկարչի մը՝ որ իր ձեռաց աշխատութիւնը կը պահանջէ...: Հօր մը, որ որդին կը խնդրէ զոր իրմէ յափշտակեր են...: Ո՞հ, դուք լաւ կ'ըմբռնէք որ...: Զգաթունդ եղած եմ, մոլեգնած եմ:

Յով. — Դուրս ելէք, կամ թէ ես...:

Փէլ. — Ախ, անպիտան արարածներ, որ խոշնդուու կը կանգնիք երիտասարդի մը՝ որ կ'ուզէ սովորել, կրել, նպատակին հասնիլ. նա պէտք չունի զձեզ իր ուաքերուն տակ ճգմելու, վասն զի, իր փառքին հասնելու մօտ՝ զձեզ

իր ետև անցած կը տեսնէ, ինչպէս հովը՝ ա-  
նապատին մէջ, և մեռնիլը՝ ոչինչին մէջ՝ որ  
զանոնք յաւաշ բերած է:

Քարլ. — Իմ որդիս նսխատե՞լ: Ահաւասիկ թելը՝  
որուն պէտք էիք գպչիլ անոր մէկ մահակա-  
ւէր ձայնը լսելու համար: Հիմա զիս վլրա-  
ւորեցիք, և շուտով արիւնս կը հոսի: Երկուքը  
ալ տունէս գուրս ելէք, կամ վախցէք: Նկարն  
իմն է, կ'ուզեմ զանիկայ կտոր կտոր ընել,  
այրել. և մոխիրը երեսնուրդ նետել, քանի որ  
իմ ոսկիիս մոխիրն է:

Գոմ. — Վայրկեան մը, կամ հարուած մը կը  
փոխանակեմ: (Ատրաճակիլ բանելով):

### Տ Ե Ս Ի Լ Բ.

ԿՈՍՏԱԴԻՒՆ և յիշեալը.

Կոս. — (տժդոյն ու դողդղագով դոչրս կ'ելնէ,  
և ցոյց կու տայ սերար նկար մը՝ բոցերոց  
մէջ) Փէլլէկրոյի նկարը բոցերու մէջ է:

Փէլ. — Ա՛խ, գո՛ւ... (Գոմիմիկոսի բազկաց  
մէջ կ'իշնայ):

Քարլ. — Որդեակ իմ...:

Գոմ. — Եզրայը:

Փէլ. — Ո՛վ, տեսիլ...: Ո՛վ, ցան...: Ահաւա-  
սիկ բոլոր բոցերու մէջ...: Գլթութիւն, օգ-  
նութիւն...: Ա՛խ, ա՛յլ ևս չկայ...: Ո՛հ վա-  
տութիւն. բայց ապազյ սերունդը պիտի բո-  
ղոքէ, և պիտի անիծանէ զայն՝ որ ափ մը  
մոխիր նետեց անոր երեսին՝ որ իր կեանքը  
փրկեց...: Ա՛խ, չուառական, անէծք քեզի:


Կոս. — (Զիս կ'անիծէ):

Փէլ. — Բայց ես պարտուած չեմ դեռ... բոցե-  
րը չեն կրնար չնշել այն՝ զոր ես մոքիս մէջ  
ունիմ...: Քոլոմակնս, այս վայրկենէս սկսեալ

գու կ'ապրիս... ահաւասիկ Ամերիկայի կոյս  
երկիրը... հոս հայրենիքի գրօշը... խաչը:  
Մարդկային ցեղի վերածնութեան ծառը. ու-  
րիշ նկար մ'սս...: Փախցինք. հոս ոսքերս  
կ'այրին... օգը կը թունաւորէ... ախ, զեռ  
կ'ապրիմ ես... (ուժով): Ես նկարիչ եմ...  
(կը մեկի գոմիմիկոսի հետ):

Քարլ. — (Գողա, սարսէ, նկարդ այլ ևս մո-  
խիրներէն յարութիւն պիտի չառնէ (կը մեկ-  
նի Յովհաննեսի հետ):

Կոս. — (Որ տեսարանի ժամանակ կարեկցա-  
կան սիրոյ սովորյի յուրզում մը ցոյց տուած  
պիտի ըլլայ, ինքինիրը վերցապիս մինակ  
տեսնելով, բառերազեւմին միջ տեղ ծունկի  
կու զայ, և ձեռքերը միացնելով կը բացա-  
գանէք) Ո՛վ երկինք, գու ինծի ոյժ տուիր:



## ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒՄՆԾ

Նկարչուրեան դպրոց՝ ինչպէս առաջին առարուածին մէջ:

Տ Ե Ս Ի Լ Ա.

ՔԱՔԵԼԱԽԵ և ՓԵԼԱԿՐՈՅ.

Փէլ. — (րեմին առջև՝ ձեւքը կուրծքին վրայ, մտաժկուու):

Քափ. — (ինցած կը դիտէ) Խեզմ տղայ, խորապէս վշտացած է: Աչքերն արցունքով լեցուն են: Ի՞նչ տեսակ օր եղաւ ասիկայ...: Ի՞նչ հարուած արուեստաւորի մը համար, տեսնել որ բոցերը քիչ քիչ կը սպառեն իր իւղաները, և որո՞ւ ձեռքով: Անկարելի կը թուի...: Յետ այնչափ բարեկամական ցոյցերու: Ո՞հ, երախտագիտութիւն ըսուած բանը գոյութիւն չունի բնաւ:

Փէլ. — (ցած ձայնով) Թողէք որ դիտեմ. այս պէս լաւ է:

Քափ. — Ինքն իրեն կը խօսի:

Փէլ. — Վերջապէս զքեզ կը տեսնեմ:

Քափ. — Ի՞նչ սատանայ է տեսածդ:

Փէլ. — Ուսուցիչ..., եղբայր..., տեսէք... նկարն իր տեղն է:

Քափ. — Իրաւցնէ կ'երազէ: Փէլէկրոյ:

Փէլ. — Ո՞հ (կը զգաստանայ): Ուրեմն մոքիս զառանցանք մ'էր: Ուսուցիչ (անոր ձեւքը սկզբներով): Գէշ ըրիք որ զիս սթափեցուցիք, ես հեշտալի երազով մը կը քնանայի:

Քափ. — Գիտեմ, բայց երբ դժբախտ ես, պէտք է դժբախտութեան համակերպիլ...: Թշուառին սիրտը՝ բնութեան տիրութեան մէջ կը ցնծայ:

Փէլ. — Սաոյգ է:

Քափ. — Բայց գու զքեզ պէտք ես քաջասիրտ բննել:

Փէլ. — Քաջասիրտ...: Ե՞ս....:

Քափ. — Բայց այս, վերջապէս ի՞նչ մեծ կորուս կայ: Նկա՞ր մը...: Եթէ ինծի պէս ծեր ըլլայիր, յուսահատելու իրաւունք ունէիր... որովհետեւ քեզի կը մնայ միայն մահուան պատկերը նկարել. սակայն երիտասարդ ես, հազիր կեանքիդ արևը ծագեբ է: Սիրտ առ, ուրեմն, որդեմակ սիրելի, արհամարհէ նախանձը՝ և յաղթանակէ:

Փէլ. — Ո՞հ: Որոք չէք կրնար ըմբռնել երիտասարդի մը վհատութիւնը՝ որ անչափ թշնամիներ ունի ընկճելիք՝ նպատակին հասնելէ առաջ, որ պարտուած կը մնայ՝ իր անձնական կոստին մէջ. որ կը տեսնէ իրմէ յափշտակուած՝ իր ձեռազործը, իր մոքին մոածութիւնը, զիշերներու երազը. որ պէտք է դիտէ այս աչքերով՝ որ առաջնորդեր են վրձինին մնացորդներն ու բեկորները, իր պատկերին մոխիրները՝ որ գետնէն վեր կը բարձրանան և հովին հետ կը ցրուին:

Քափ. — Կ'ըմբռնեմ ըսածդ:

Փէլ. — Եւ այս բոլորը՝ որո՞ւ ձեռքով:

Քափ. — Բարեկամի մը, անոր՝ որուն կեանքը փրկեցիր:

Փէլ. — Սա՛, բարեկամի մը՝ որուն հակոխն վրայ հոգւոյն անմեղութիւնը կը կարդայի. Երիտասարդի մը՝ զոր բարեկամութեան ամենակատարեալ տիփարը կը նկատէի... բայց պիտի ջնջեմ այս յիշատակը:

Քափ. — Լաւ պիտի ընես. ինքզինքդ միայն

մոտածէ: Վաղուընէ սկսեալ պէտք ես Քոլում պոսն սկսիլ:

Փել. — Ես ալ կը փափաքէի, բայց չեմ կրնար. որդի մը կորուսած եմ, և սուզի ժամանակ հարկաւոր է:

Քափ. — Շատ լաւ: Ըրէ ինչպէս կ'ուզես, բայց հիմայ պէտք ես երթալ ու հանգչիլ... ժամանակն ուշ է արդէն: Ես փաօլոյ Սփինոլայ իշխանին պիտի երթամ, որովհետև ձիուլիոյ Ռումանին հասած է. քանի մը ժամ առաջ ինձի լուր դրկած էր. բայց նախ կ'ուզէի զքեզ հանգիստ տեսնել սենեկիդ մէջ:

Փել. — Գացէք, ուսուցիչս, ես հոս պիտի հանգչիմ: Քափ. — Հո՞ս...: Եւ ուր:

Փել. — Երջանիկ մարդիկներն են միայն՝ որ անշ կողնոյ վրայ կը քնանան: Մարդ իր վէրքին վրայ չկրնար քնանալ, և ուստի՝ այս է իմ անկողինս (գետինը ցոյց կու տայ):

Քափ. — Բայց զու կատակ կ'ընես:

Փել. — Այո՛, այո՛, ուսուցիչս, ես կատակ կ'ընեմ... զուրք հանգիստ եղիք:

Քափ. — Ուրեմն ես կ'երթամ. արդէն, շուտ պիտի վերագանամ, մնան բարեաւ:

Փել. — Երթաք բարեաւ:

Քափ. — (Ոիրաս կը ճնշուի, լալու պէտք ունիմ (կը մեկնի):

Փել. — Հանգիստ: Եօթանասնամեայ ծեր մը կրնայ հանգչելու խորհուրդ ուալ 23 ապրեան երիտասարդի մը, որ գունաթափ եղած է կտակի մը վրայ, բուռ մը մոխիր ունենաւ լու համար: Հարցուցէք հարուսաին՝ թէ ինչ բան է հաց չունենալ, և զալափար չունի... երջանիկ մարդուն՝ ինչ է վիշտը, չգիտեր. այս պէս ալ անոնք՝ որ կեղծ բարեկամի մը ձեռքով կորուսած չեն իրենց հանճարին ամենէն զեղեցիկ արտադրութիւնը, չեն զիտեր թէ որչափ սայրասուր է դաշոյնը՝ զոր սըր-

տիս մէջ ընդուներ եմ: Զեռքս կը գողգղայ, զլուխս կ'այրի, օդի պէտք ունիմ... (նէպ ի պատուհան կ'երրայ): Ով բնութիւն: Ո'րչափ զեղեցիկ ես այս գեղեցիկ երկնքիս տակ. Ճենովան՝ քու դրասանզիդ ամենաչեղ ծաղիկն է. ծովը, ժայռերը, լեռները, բլուրները, տուները, պալատները՝ ամէնը բանաստեղծութիւն կը ներշնչեն...: Եւ ինչո՞ւ համար քու ճամբաներուդ մէջ, յարկերուդ տակ պիտի ննջեն նախանձն ու ատելութիւնը, որոնք մարդուն սիրու կը թունաւորեն: Երազներ... ցնորք...: Ահաւասիկ այն տեղը՝ ուր նկարս շարադրեցի, ուր օլերս կ'անցընէի աշխատութեան և պատարուն յոյսերու մէջ: Եւ հո՞ս յանախ կը նստէր կոսուանդին...: Ալս (արուսին վայ կը նետուի): Եթէ ես ձեռք զարնեմ միւս նկարին, ներշնչութիւն պիտի չունենամ այլ ես, և ոչ բարեկամներ որ զիս միխթարեն... (ոտքի կ'եղնէ): Մնան բարեաւ մը Ճենովայի, հեռու ասկից, ծովերէն անդին... գերեզմանի մը մէջ...: Բայց ո՞չ, հո՞ս իմ ծննդալայրիս մէջ: Պիտի կրեմ, բայց հո՞ս, բայց Ճենովայի մէջ. Եթէ անօթի վլլամ, զիշերանց օգնութիւն մը պիտի ինգրեմ և առաջին անցորդին պիտի ըսեմ. թշուառ նկարիչ մ'եմ, որուն նախանձորդները՝ իր իւզաներկն այրեցին. անօթի եմ, և չեմ կրնար աշխատիլ՝ որովհետև իմ աչքերս ուրիշ բան չեն բայց եթէ երկու խոչոր արցունքներ: Գուցէ պիտի չթողուն որ ես մեռնիմ... բայց եթէ հո՞ս ուր ծնած եմ, հո՞ս իմ հայրենեացտ մէջ (հանգիստ):

## ՏԵՍԻԼ. Բ.

ԿՈՍՏԱՆԴԻՆ և յիշեալն.

Կոստանդին. — (Ահաւասիկ: Խնչ պատեհ վայրկեան երկուքնուս համար ալ):

Փեղ. — (բեմին առջեխի կողմէն՝ ինքն իրեն) Եւ եթէ այս բոլոր ինծի պատահածներն երազ մ'ըլլան...: Եթէ կոստանդին արդար ըլլայ...:  
Սակայն ի՞նչպէս չհաւատալ իմ ազքիւնու...:

Կոստանդին. — (անակնելալ աղմուկով մի) Ախ այո՛:  
Անմեղ ե՞ս:

Փեղ. — Ի՞նչ: Դու իմ տա՞նս մէջ: Եւ գեռ կը համարձակի՞ս: Գնա՞ւ, փախի՞ր:

Կոստանդին. — Փէլէկիրոյ, ինծի մտիկ ըրէ:

Փեղ. — Այս ամէնը տեսնել՞ս վերջ:

Կոստանդին. — Այս, այս ամէնը տեսնելէդ վերջ: Ես իմացայ որ քու նկարդ իմիններուս ձեռքն էր, զոր մոտադիր էին ոչչացնելու, պատուելու, և այդ գործն ես իմ վրաս առի: Ասն սենեկին մէջ երկու պատկերներ կային միայն. քու և եղբօրս՝ որուն վրայ հոգի կու տար հայրս: Հոն կը վառէր կրակը, և կարծես թէ զոհի մը կը սպասէր: Այն տագնապալից վայրկենին՝ ես անորոշ էի քու համբաւիդ և եղբօրս համբաւին նկատմամբ: Շըթունքներս կծուռ մով կը զողգպային, զլուխս կը բոցավոքը. սենեկին խորը ծածկեցի քու իւղաներկդ, և առնելով եղբօրս նկարը՝ պատառ պատառ ըրի, կրակը նետեցի, և գուռը բանալով՝ ձեզի ցոյց տուի բոցերը, որ ծնողաց բոլոր յուսացած փառքը կը լափլիքէր:

Փեղ. — Ի՞նչ: Իմ նկարս ողջ է:

Կոստանդին. — Այո՛:

Փեղ. — Ո՞հ թողութիւն, բարեկամս: Դու իմ կեանքս չնորհեցիր... (ծնրադրելու համար):

Կոստանդին. — Խնչ կ'ընես: Այդ չէ քու տեղդ: Ուսքի ել, և սովորէ զիս ճանչնալ:

Փեղ. — Դու իմ հոգւոյս այնպիսի ուրամտութիւն մը սպարզմեցիր՝ որուն համար յաւիտեանս քեզի երախտապարտ պիտի մնամ:

Կոստանդին. — Եւ ի՞նչպէս դու կրցար հաւատանձ թէ ես կարենամ այնչափ անարգ վարձք մը հատուցանել իմ կեանքիս՝ զոր դու փրկեցիր, չնչելով զործ մը՝ որ զոյութենէդ աւելի քեզի սիրելի էր: Գալով եղբօրս զայրութիւն, հօրս կատաղի բարկութեան, ի՞նչ կ'ուզէ ըլլայ:

Փեղ. — Ես պիսի ըլլամ քու պաշտպանդ: Ես կուր, երթանք պատկերս առնենք ու մեկնինք, եթէ դու հօրմէզ կը վախնաս:

Կոստանդին. — Աչ, կը մնամ: Վաղուան արեգակը քու յաղթանակդ պիտի լուսաւորէ:

## ՏԵՍԻԼ. Պ.

ԿՈՍՏԱՆԴԻՆ և յիշեալը.

Գոմ. — Եղբայր, հրաշք մը: Քու նկարդ իր տեղն է, ես տեսայ... ի՞նչ զեղեցիկ բան... քիչ մնաց որ ես մեսած իյնայի:

Փեղ. — Իմ նկարս իր տեղը: Ո՞հ, ասիկայ չաշ փազանց երջանկութիւն է. ով գրած է հոն:

Գոմ. — Զըսի թէ հրաշք մէկ:

Փեղ. — Կոստանդինը:

Կոստանդին. — Այո՛, ես ուզեցի յաղթանակդ կատարեալ լնել: Կը զարհուրիմ հօրս բարկութենէն, բայց կը միխթարուիմ որ քու բարեկարութեանդ փոխաէն մը կրցայ լնել:

Գոմ. — Ո՞հ, ի՞նչ հաճոյք: Եղբայր, երթանք տեսնենք. զիշեր է, բայց կարծես քու ուրամտութեանդ կը մասնակցի լուսինն ալ... զոր

այսպէս պայծառափայլ տեսած չէի երբեք...  
շուտով երթանք: — Ո՞հ, քիչ մնաց կը մոռա-  
նայի... քեզի նամակ մ'ունիմ: Երբ յուսա-  
հատի մը պէտ ուռն կը վագէի, վերարկուի մէջ  
փաթթուած մարդ մ'ելաւ առջևս և լսաւ ին-  
ծի. «Այս նամակը շուտով եղբօրդ յանձնէ»:  
և ես. այս պարզն: Եւ այն ատեն քայլերս  
կրկնապատկեցի...: Եկայ հոս, բայց սաստիկ  
ուրախութենէս մոռցայ: Ա՛ռ ուրեմն և եր-  
թանք:

**Փէլ.** — Վայրկեան մը (կը բանայ ու կը կար-  
դայ լովիկ):

**Կոս.** — Ի՞նչ պիտի ըլլայ արդեօք:

**Փէլ.** — Ա՞հ:

**Կոս.** — Փէլլէկրոյ, գու կը դողդաս, կը  
տժգունիս... ի՞նչ թուղթ է:

**Փէլ.** — Բան մը չկայ, պէտք է որ ես անպատ-  
ճառ մեկնիմ... (սուրբ կը կապէ մէջըլ, կ'առ-  
նոյ վլրեազգեասն ու զիւսարկը):

**Կոս.** — Ա՞հ, ինչու: Փէլլէկրոյ գու ասկից դուրս  
պիտի չելնես՝ մինչև որ պատճառը չգիտնամ:  
**Փէլ.** — Մի՛ վախնար, բարեկամս... բայց  
պէտք է որ ես երթամ...:

**Կոս.** — Եւ ոչ իսկ փոքր տեղեկութիւնն մը:

**Փէլ.** — Այս թղթէն ամէն բան պիտի կարենաս  
գիտնալ: Քիչ ատենէն կը վերադառնամ. մնաս  
բարեաւ (շուտով կը մեկնի):

**Կոս.** — (կը սկսի կարդալ):

**Գոմ.** — Ո՞հ: Նայինք ի՞նչ բանի վրայ է խըն-  
դրը:

**Կոս.** — Ա՛խ, կարելի՛ բան է: Գոմինիկոս, շու-  
տով եղբօրդ քով վագէ՛: (Ես չեմ կրնար):

**Գոմ.** — Կ'երթամ: Բայց ո՞ւր...: կը բաէ, ի-  
րեն կը ճետեիմ...: Ո՞հ, բաւական ծանր  
դժբախտութիւն մը կը գուշակեմ (կը մեկնի):

**Կոս.** — (կը կարդայ) «Եթէ կ'ուգէք նկարնիդ  
փրկել, վայրկեան մ'խսկ մի ուշանաք, որով—

հետև ձեր թշնամիները որոշած են այս գիշեր  
զանիկայ աներկութացնել»: Եւ ապարզիւն  
պիտի ենէ իմ ըրածներս՝ զանիկայ փրկելու  
համար, և ի զո՞ր պատռած եղայ եղբօրս նկա-  
րը: Եւ միթէ այս նամակը շարագրող ձեռքը՝  
մարդասպանի՝ մ'է...: Ո՞հ, չեմ կրնար այս  
անգութ անստուգութեան մէջ մնալ:

### ՏԵՍԻԼ. Դ.

ՔԱՐԵԱՆՑ և յիշեալն.

**Քարդ.** — (ներսին) Ո՞ւր է այս տղան:

**Կոս.** — (սարուռով) Հայրիկս:

**Քարդ.** — Իմ արխիսն է, կ'ուզեմ սպաննել զինք:

**Կոս.** — Ո՞վ երկինք: Գթա ինծի (կը ծերադրէ  
րաւերարեմին խորի):

**Քարդ.** — (դուրս կեննելով) Ո՞ւր է... ախ:

**Կոս.** — Ա՛խ, եղբօրս սիրոյն համար:

**Քարդ.** — Յամիննէնս...: Ո՞հ զիտէի թէ զինք  
օգնութեան պիտի կանչես կեանքդդ ժամ մ'ևս  
երկարելու համար:

**Կոս.** — Հայր, զթութիւն:

**Քարդ.** — Ի՞նչ: Գտու համարձակեցար անոր ա-  
նոնը տալ... այն գժբախտին՝ որ մէկ եղբօր-

մէն մատնուեցաւ...: Դու կը համարձակի՛ս  
իմ զթութիւնս հայցելու, մինչդեռ վայրկենի  
մը մէջ իմ տանս պատիւն ու համբաւը կ'ա-  
զարեան, այնչափ տարիներու քրտինք ու ա-

պազային յոյսը կը մարես: Ո՞հ, երբ ես  
այն սենեակը մտայ, ուրախ՝ նկարի մը մո-  
խիրին վրայ՝ կարծելով գեռ երկար ժամանակ  
արգիլած ըլլալ մթագնիլը իմ որգոյս փառ-  
քին, եթէ այն բոպէին քու սկ մատնութիւնդ  
նշարէի, վերջին կայձը սպառած պիտի ըլ-  
լար քու մարմինք՝ որ իմս է...:

Կոս. — Սպաննեցէք զիս, ուրեմն, ես չեմ կըր-  
նար ինքինքս չքմնացնել:

Քարդ. — Ո՞չ, նախ կ'ուզեմ բոլոր քու մատ-  
նութիւններդ գիտնալ: Անուարակոյս էր թէ  
դու այս տանս մէջ կը գտնուէիր: Դու Փէլ-  
լէկրոյին հետ երգում ըրած էիր ինձի գէմ,  
բայց ես վրէժս պիտի լուծեմ ձեզմէ՛ ձեր մա-  
հով (զայրորորդ զայն վեր իր վերցնէ):

Կոս. — Կը սարսափեցնէք զիս:

Քարդ. — Ո՞չ, ապիրատ, ո՞չ. ինչպէս չվարա-  
նեցար վայրկենի մը մէջ չնշելու բոլոր իմ  
փառատենչ երազներս, բոլոր եղօրդ փառքը,  
այսպէս և ոչ ալ հիմա պէտք ես սարսափիլ.  
չեմ ընդունիր՝ կեանքիդ վերջին ժամուն աներ-  
կիւղ հրաւէրը՝ մեր անպատութիւնը զլուխ  
հանելզ վերջ: Ֆէլլէկրոյի նկարը՝ քու դա-  
ռովդ հո՞ն հասարակաց զմայլումին ի տես  
գրուած է: Ո՞հ, յանո՞ւն դժոխոց, ո՞չ դու ոչ  
Փէլլէկրոյ պիտի կարենար իմ բարկութենէս  
ազատի: Փառասիրութիւնը՝ միակ ոճիր մ'ին-  
ծի թելարեց, ոչ ոք պիտի կարենայ զիս  
վրէժնդրութենէս ետ կեցնել: Ուկիով մար-  
դասպաններ և սիկարեաններ<sup>1</sup> կը ստեղծուին  
ամէն տեղ. կեզդ համբոյրով մը, խարդախ  
նամակով մը՝ կարելի է անձ մ'այնախսի տեղ  
մը հրաւիրել՝ ուր անվրէպ երթայ և ոտքը  
մահուան ծածկարանին վրայ դնէ:

Կոս. — Ո՞հ, թշուառ Փէլլէկրոյ (ձեւըլուղ  
երեալ կը ողցի):

Քարդ. — Ծածկէ՛ երեսդ, այս, և արցունկներ  
թափէ ազատարարիդ համար:

Կոս. — (բիէ քիէ ինքն իրեն կոչ զայ): Հայր,  
եթէ չէք ուզեր խոճի խայթերով տառապիլ,  
զնացէք մի՛ գանդապիք, աճապարեցէք արիւ-

1. Արկարեան, կ'ըսուկն անմնք՝ որ ուրիշին դրժամը  
անիրաւ մարդասպանութիւններ կ'ընեն.

նահեղութիւն մը խափանելու...: Փրկեցէք  
Փէլլէկրոն:

Քարդ. — Եւ գեռ կը համարձակիս իրեն հա-  
մար ինձի աղաչէլ:

Կոս. — Այս, վասն զի կ'աղաչեմ քեզի՛ երկ-  
րորդ հօր մը համար: Դու ինձի կեանք տուիր,  
իսկ Փէլլէկրոն զիս ստոյք մահութնէ մը վլր-  
կեց: Տուրդ ձենովա վկայ եղաւ իր վեհանձն  
գործին: Ես պարապական էի փոխարար վար-  
ձատրութիւն մ'ընել Փէլլէկրոյին և ըրի՝ իր  
մաքի ծնունդն իրեն վերադարձնելով, և միան-  
գամայն ջանալով իմ տանս պատիւն ալ վլր-  
կելու՝ ինայելով անոր անպատութեան ան-  
ջնջելի արատը, որ իր վրայ պիտի մնար  
ցմիշտ, եթէ իրագործուելու ըլլար ձեր գժու-  
խային ծրագիրը: Ախ հայրիկ, բացէք անզամ  
մ'աչքերնիդ այն անդունդին վրայ՝ ուր կը  
գտնուիր, փրկեցէք ձեր ընտանեաց պատիւը,  
մի՛ դրոշմէք անպատութեան կնիքը ձեր ա-  
նարատ անուան վրայ: Նախանձն զգեզ կը  
կուրցնէ և ձեր սրտէն կը իւէ արդարութեան  
և համեստութեան զգացումը: Այս, ես յան-  
ցաւր եմ ձեզ հանդէպ, բայց եղայ՝ վատա-  
համբաւ ըլլալու համար բոլոր աշխարհի և  
Աստուծոյ առջև:

Քարդ. — Ո՞հ, որդեակ իմ: Դու սրտիս մէջ սիւ-  
րոյ սոսկալի փոթորիկ մը յարուցիր...: Յաղ-  
թեցիր: Ո՞հ, ոչ, պէտք չէ ուշանալ վայրկեան  
մը, պէտք է փութալ Փէլլէկրոն փրկելու հա-  
մար:

## ՏԵՍԻԼԵ.

Գոտիւնիոս, Փէլլէկրոյ և վերոյիշեալը.

Քէլ. — (Գոմինիկոս զիմեք վեր բնեած, մահա-  
ցոյ վիրաւորուած է):

Քարլ. — (ասարափանար կանգ կ'առնեն) Ժա-  
մանակին չհասայ (քատերաբեմին խորը կը  
քաշուի):  
 Կոս. — (անոր բով վազելով) Ո՞հ, Փէլլէկոյոյ:  
 Գոմ. — Անողինին վրայ տարածենք զինք:  
 Փել. — (Գոմինիկոսին) (Առէ):  
 Կոս. — Ո՞հ, ինչո՞ւ:  
 Փել. — Բան չկայ, բան չկայ, թո՞ղ որ ես  
նստիմ... նկարս տեսայ զիշեր ժամանակ,  
մինչ լուսինն անոր վրայ սիրոյ ճառագայթ  
մը կը սփոքր...: Վաղարան արեգակը շուտով  
պիտի ծագի, կը յուտամ:  
 Կոս. — Բայց դու գոնատ ես...: (Ո՞վ երկինք,  
ինչ պատահեցալ):  
 Գոմ. — (Ես երգուած եմ լոելու):  
 Փել. — Ես հանգիստ եմ... երջանիկ... տե՛ս...  
կրնամ ապահով ուսքի ենել... բոլոր երիտա-  
սարդութեանս ուժը վրաս է...: Եկուր, այս  
հրաշալի զիշերը վայենք. խնդրենք երկնքէն  
լոյս... և ներումն... մեր թշուառութեանց  
համար (դեպ ի պատռուան երրարու համար՝  
Քարոննիի կը հանդիսի): Այս գուք: (Գոմին-  
նիկոսի բազկաց մէջ կ'իշենայ):  
 Կոս. — Գոմինիկո՞ս, գուք կու լաք:  
 Գոմ. — Ո՞հ, չեմ կրնար լոել: Եղբայրս սըր-  
տին ստորին մասէն (ցոյց տալով սիրտը) վե-  
րաւորուած է:  
 Կոս. — (պուալով մի) Այս:  
 Քարլ. — Վիրաւորուած:  
 Կոս. — Շուտ, Գոմինիկո՞ս, օգնութիւն մը:  
 Փել. — Եղբայր, մի բաժնուիր քովէս, քեզի  
սէտք ունիմ:  
 Կոս. — Ուրեմն կ'ուզես մեռնի՞լ: Ես կը վազեմ:  
 Փել. — Ո՞չ, կոստանդի՞ն, մի՞ հեռանար. ձեռքդ  
ինձի ունիր: Ո՞հ, իրաւցնէ կը զգամ թէ վա-  
զուան արշալոյսը պիտի չտեսնեմ: Հայրդ  
կանչէ, ըսելիք ունիմ:

Կոս. — (առանց խօսք մարտարերեղու, հօրդ  
կ'աղավան որ մօտենեայ):  
 Քարլ. — (մօտենաղով) (Խմ գո՞նս):  
 Փել. — (կոստանդի՞ն և Գոմինիկոսի (հեռա-  
ցէք քովէս վայրինան մը):  
 Կոս. — Այս: (Գոմինիկոսի վրայ կը ձգէ ինք-  
զինք):  
 Փել. — Կը գողգղաք գուք...: Զիս սպաննող-  
ներուն անսունը պիտի չզիտցուի... թող Աս-  
տուած ներէ ինձի՞ ինչպէս ես ի սրտէ իրենց  
ներած եմ. Զեր որդին՝ երբ սուրբ կուրծքս կը  
միւէր, հեզուրէն ըստա ինձի. «Ո՞վ իմ Փէլլէ-  
կոս, ներէ ինձի, զքեզ չճանչցայ»: Ո՞հ,  
այո՞ն, յանուն Սպոտուծոյ ես իրեն կը ներեմ.  
բայց գուք ալ կոստանդինի ներեցէք:  
 Քարլ. — Ես անոր ներած եմ:  
 Փել. — Ո՞հ ձեռքս սրտիս վրայ սեղմեցէք:  
 Քարլ. — Ո՞վ երկինք, որչափ մնձ է իր առաքի-  
նութիւնը (ձեռքը կուրծքին վրայ սեղմելով):  
 Փել. — Կոստանդի՞ն, մօտ եկուր... տե՛ս, հայրդ  
քեզի ներած է: Ո՞վ յետին ուրախութիւն իմ  
կասնիխ: Սիրէ զինք, և երջանիկ պիտի ըւ-  
լաս, որովհետև երկինք չօրհներ այն որդիքը՝  
որ իրենց ծնողաց ցաւ և արցոնք կը պատ-  
ճառեն: Այս է իմ վերջին յիշառակս:

### ՎԵՐՋԻՆ ՏԵՍԱՐԱԿՈՒՅԹ

ՔԱՐԵՎՈՅՆ և յիշեալը, աւա ՅՈՎՃԱՆՆԵՍ

Քափ. — Փէլլէկո՞յ: Այս: Քու փանքդ...:  
 Փել. — Ո՞չ... ասիկայ գեռ իմս է... ո՞վ ու-  
սուցիչ:  
 Քափ. — Որդեան իմ, որչափ կը ցաւիմ քեզմէ  
բաժնուելուս վրայ: Արդէն ամէն բան զիշ-  
տեմ...: (Քարլոնիկի՞ն) Պարոն, փախէք այս  
մահուան անկողնէն: Վախցէք:

Փել. — Սիրելի՝ ուսուցիչ, ինք և իր որդին անմեղ են մահուանս նկատմամբ... թող անաղարտ և մաքուր մնայ իրենց համբաւը... միակ չնորհքն է զոր ձեզմէ կը խնդրեմ։ Հիմա բոլոր բարեկամներս ու ծանօթներս շուրջն կը գտնուի՞ն։ Գրկեցէք զիս ամէնքդ ալ... կ'ու զեմ որ մօսս ըլլաք...։ Քարլոնէ՛, զիս չէք զրկեր։

Քարլ. — (գրիելով զանիկայ) (Ո՛վ խայթ խղճի)։ Կոս։ — Ո՛վ իմս Փէլլէկոյոյ...։

Փել. — Սնաք բարեաւ, կոստանդին, Դոմինիկոս, ուսուցիչ, Քարլոնէ՛... լաւագոյն աշխարհի մը մէջ կը տեսնուինք։ Ախ, Քոլոմպոս, վրձինս մեռած է... բայց երկինքի մէջ պիտի ապրի, ուր պիտի նկարեմ սիրոյ պատերը։ «Նկարիչը՝ որ կը մեռնի՛ ներելով»։ Ճենովա՛, իտաիխա՛, քեզի՛ կը յանձնարարեմ իմ նկարս։ Ճենովա՛, քեզի՛ խեղճ Փէլլէկոյի յիշատակը, որ 23 տարեկան կը մեռնի։ Ո՛հ, ահաւասիկ հոն է իմ օրհնեալ կոյսս։ Ահա հոն՝ երկնաւոր ճառագայթներով բոցանշոյլ... ժպառուն զիս կը հրաւիրէ... ան... (արուսի մը վրայ հոգին կ'աշանդի)։

Աւելինը. — Մեռաւ, մեռաւ։

Յովհ. — (Որ բասերարեմ պիտի մտնէ երբ Փէլլէկոյ պիտի լսէ. «Նկարիչը՝ որ կը մեռնի՝ ներելով»)։ Մեռաւ... ան... (Ճեռքերով երեսը կը ժամկի)։

Վերջ Թատերախաղին.

## ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

### Ի ՄԻԼԱՆ

ԿԱՏԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

## ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԳԱՌԱՋ ՖՈՌԱԱՆՏԻ Հարուստ անձ մը.

ՄՈՐԻՆԻ արկղակալ.

ՓԵՏՐՈՒՅՑԻ հարուստ անձ մը.

ԱՆԿՈՒՏԻ Ա.Դ.Ա. քաղաքապետ Քաթարանեայի.

ՊՈՐԹՈԼՈՅ Գառլոի ծառան.

ՃԻՌՃԻՈՅ որճարանի մը ծառայ.

ՓԱՌԱՋ կը կու փաղցային գատարկասլորտ  
ՃԻՌՃԻՈՅ սրբիաներ.

ՈՍՏԻԿԱՆ Քաղաքային զինուոր.

Հրապարակ մը, աչակողմը սրամրան մը, ա-  
րու, սեղաններ և այլն և այլն:

ՏԵՍԻԼ Ա.ՌԱ.ԶԻՆ

ՃԻՌՃԻՈՅ յետոյ ՖՈՌԱՆՏԻ

Ճիորժիոյ. (սրամրաններն դուրս սեղաններն ու  
արուները կը կարգադրէ). — Ի՞նչ հրէշային  
օդ է: Անձրն մը՝ որ գագրելիք չունի, որու-  
տում և փայլակ գիշերն ի բուն... ինչ և իցէ,  
բաղդերնէս կարծես որ օգը կը բացուի, ապա  
թէ ոչ այս առուու զործ ունէին մեզի պէս  
ողորմելի, աղքատ բաֆիհճիները... Ճիմայ  
սակայն շուտով կու գան մեր սովորական յա-  
ճախորդները, ուստի պէտք է որ ամէն բան  
ի կարգի գրուած ըլլայ, պատրաստ...

Ֆորլանտի. — Եօյ (կոչ գայ ձամբարդի զգես-  
տով):

Ճիորժ. — Ո՞չ. Պ. Գառլոյ, հրամհցէք:

Ֆորլ. — Սովորական նախաճաշս:

Ճիորժ. — Ճամբորգելու վրայ էք:

Ֆորլ. — Այս, թորին պիտի երթամ, և արդէն  
մեկնած պիտի ըլլայի հիմա եթէ սա մեր ա-

պուշծառանինծի շոգեկառքը կորսնցնել տուած-  
չըլլար:

**Ճիորդ.** — Վնաս չունի, ուրիշով մը կ'երթաս: Իսկ ես շատ զոհ եմ այս արգելքին վրայ որ ինձ առիթ տուաւ անգամ մ' ևս ձեզ նախաճաշ տալու: (Այդ տեսակ մարդիկներ գտնուի լը լւա է որ մեզի պէս թշուառներուն յարգը նամաչցուի): Հիմայ կը բերեմ. (Ծնկնելու վրայ է):

**Ֆորդ.** — Կեցիր, ... մեր ծառան գեռ հոս չեւ կա՞ւ:

**Ճիորդ.** — Ո՛չ գեռ:

**Ֆորդ.** — Սիշտ այսպէս, անգամ մը եղած չէ որ ճիշդ գտնուի: Տունէն դուրս չելած ապրսապրեցի որ շուտով պայուսակս պատրաստէ և և հոս ինձի բերէ: Յամենայն դէպս գալու մօտ պիտի ըլլայ: Առ այժմ ես տիրոջդ սրահիկը կ'ենեմ, սովհպողական նամակ մ'ունիմ գրելիք:

**Ճիորդ.** — Խոդրեմ, այնպէս ըրէ իբրև թէ տանդ մէջ ըլլայիր: Արդէն տան մարդը կը համարուիս: Բայց նախաճաշը:

**Ֆորդ.** — Վեր բեր:

**Ճիորդ.** — Ծառայ եմ. (Գաւղոյ կը մնենի): Ի՞նչ բարի մարդ է: Եթէ ամէն յաճախորդ իրեն պէս ըլլար, հինգ տարուան մէջ ծառայութեան վիճակէն սրճարանին տէրը կ'սլլայի: Անհնարին է որ ինձմէ ծառայութիւն մ'ուզէ, և յետոյ վարձք մը, բարի ձեռք մը չի տայ (դես ի խանուրին դուռն երբաղով): Է՞ն, սուրբ և կուհատ (միանգամայն ստուներն ու արուները կը տեղադրէ):

## ՏԵՍԻԼ ԵԲԿՐՈՐԴ

ՊՈՐԹՈՂՈՅ և ՃԻՈՐՃԻՆՅ

**Պորդորդ.** — Ե՞յ, Ճիորճիոյ, տէրս տեսա՞ր: Ճիորճ. — Այս, վերն է և բաւական ժամանակ է որ քեզի կը սպասէ:

**Պորդ.** — Ես ալ իրեն համար բաւական ժամանակ է որ աստիս անդին կը վազգեմ: Լմնալիք չունի: Պորթոլոյ այս նամակը թըղաթառուն տար: Պորթոլոյ կօշիկս մարքէ: Պորթոլոյ կայարան գնա, տես թէ ցուցակը փոխուած է: Պորթոլոյ հոս, Պորթոլոյ հոն, միշտ պարելու հետ եմ: Երանի քեզի որ շատ գործ չունիս:

**Ճիորճ.** — Քեզի բան մ'ըսեմ: Շատ ծոյլ ես: Կ'ուզես ծառայութիւն լինել և տիրոջդ հացնուական օրն ի բուն լուսին դիտելով... նելքդ զլուխդ ժողովէ. ով որ չաշխատիր կերիցէ մի՞:

**Պորդ.** — Տգե՞ղ առած: Եւ կարծեմ թէ այս առատու նախաճաշ ըրած պիտի ըլլաս:

**Ճիորճ.** — Ինչո՞ւ:

**Պորդ.** — Ո՞հ, զամանալի բան, վասն զի ո՞վ որ չաշխատիր կերիցէ մի՞:

**Ճիորճ.** — Քեզի ո՞վ ըստ թէ չեմ աշխատած:

**Պորդ.** — Ո՞հ, արդէն գիտենք թէ քանի յաճախորդի կը ծառայես:

**Ճիորճ.** — Ի՞նչ կայ որ, ժամը դեռ Զն է: Կէս ժամէ մը դատարանը կը բացուի և այն ատեն եկուր տես թէ ինչ կ'անցնի կը դառնայ այս սրճարանին մէջ՝ որ դատարանին ամենէն մօտ գտնուողն է: Բոլոր փաստաբանները, դատաւորները, դատախազ և հետաքրիր հոս կու զան. և որովհետեւ ամէնքն ալ կ'աճապարեն՝ վասն զի ժամանակնին չափուած է, հազար

Կոտոր պէտք է ըլլալ որ մի և նոյն ժամանակ ամենուն ծառայութեան հասնիմ։ Բայց դու հոս կեցած կը շաղակրատս և տէրդ քեզի կը սպասէ։

Պորր. — Ստոյգ է, հիմայ կ'երթամ (կը սկսի բաղել ապա ևս կը դառնայ)։ Հետաքրքրական բան մը պատմեմ քեզի։

Ճիրամ. — Նախ տիրոջ քով գնա։ Վերջը կը պատմես. ևս կ'երթամ նախաճաշի ամաններն առնելու. (արձարան կը մտնեն)։

### ՏԵՍԻԼ ԵՐՄՈՒԴ

Անկուսի աղան. — (Կարմիր հողանեղով մը, րեկն վար պատիկ կարով մը կախուս, աչ ձեռքը բաւած երկայն և ոստեռս զաւազան՝ մը՝ ևրու կը մտնէ, ապշած՝ տուները դիտելով)։ Գեղեցիկ է, գեղեցիկ է յիրաւի Միլանը, և հասկցար իմ գիւղս աւելի գեղեցիկ է։ Ի՞նչ գեղեցիկ առուներ, ի՞նչ գեղեցիկ պարտէզներ։ Ի՞նչ գեղեցիկ զգեստներ կը տեսնուին հոս Միլանի մէջ. յիրաւի հոս են բոլոր ազնուականները... Ալայն ամէն մարդ ինդալու ու նակութիւն մ'ունի... ամէնքը ինձի կը նային... և հասկցար։ Թող գիտնան որ վերջապէս ես իմ գիւղիս քաղաքապէտն եմ։ Բայց միայն թէ, սա կառքին վրայի աներեսը՝ այդաւազակութիւնն ինձի պէտք չէր ընել... Բայց ինչպէս որ պէտք էր հատուցի իրեն, եթէ գեռ քաղաքապէտ չըլլայի՝ անոր քիթը բերանը կը ջախջախէր։ Բաւական է, չարժեր ալ անոր վրայ մուածել։ Մասնաւորապէս պէտք եմ ու շաղիր ըլլալ որ լուսահոգի պապուս զլխուն եկածն ինձի ալ չպատահի... Բայց անիկայ հասկցար բարի մէր։ Կը թողուր որ ամեն բան զլխուն բերեն առանց քաղաքա-

պետ եղած ըլլալու. Երկակայեցէք ինչ որ է, հասկցար։ Ինձ կը պատմէր որ երբ առջի անգամ Միլան եկաւ, յոգնած ըլլալով, նրսուած ծառազարդ տեղ մը... և սկսաւ քնանալ. չորս ժամ վերջը կ'արթննայ, ոտքի կ'ելնէ և կը տեսնէ որ իր զգեստը սաստիկ ծանրացած է... կը նայի... քղանցքին երկու ծայրերը խոչը զամերով զամուած... Յետոյ ինձ կը յանձնարարէր որ ուշագիր ըլլամ, վասն զի գաւառացիններու զլխարկէն պոչ մը կախելու սովորութիւնն ունին (նայերով իշրջապիկնեն), Անտոն, կ'ըսէր ինձի հայր երեկ, Անտոն, ուշագիր եղիր պոչնն... Է՛հ, բայց ինձի չնն կրնար ընել... լուրջ գէմք... հաստ զաւազան... քաղաքետական քալուածք... և ամէնքը զիս յարգեցին... հասկցար... Բայց ինչպէս յոգնած եմ... բոլոր զիշերը Ս. Ֆրանչիսկոսի ծիով ճամբորդել և այս սոսկալի անձրեկին... որչափ քուն ունիմ, ոհի... ճիշդ մկնարջի քունի կը նմանի... Բայց Պ. Ալպերթոյի նամակը... Անպատճառ իր տեղը պիտի ըլլայ... Է՛հ, ևս ամէն բան լսաւ կ'ընեմ միշտ, ինչպէս զրագիրս կ'ըսէ... Բայց Պ. Ալպերթ ինձ յանձնեց որ իր եղբօր պատասխանն իրեն տանիմ... Բայց այս երկիրը շատ ընդարձակ է... և ճամբան ալ բնաւ չեմ յիշեր... հասկցար... Հոս աթուներ կան, կրնամ հանգչիլ... վերջը կ'երթամ տանտէրը կը փրնուենք (կը սկսի նստիլ)։ Բայց եթէ այս աթուներուն մէրը զայ... քաղաքավարութիւնը կը պահանջէ որ հրաման ինդրեմ... Ստոյգ է որ վերջապէս ես քաղ... և կրնամ... բայց կ'ուզեմ ցորչնել որ երկրին սովորութիւնները զիտեմ (կը նայի սրձարանին)։ Տանտէրն այս պալատը պիտի ըլլայ... Ոհի, ինչ գեղեցիկ սրահ... և հասկցար... (զլխարկը կը հանեն և զլչիր ծամուկելով) կրնամ... արդեօր կարելի՞...

## ՏԵՍԻԼ ԶՈՐԾՈՐԴ

ՃԱՌԱՒՈՅ և վերոյիշեալն

Ճիորձ. — (Գրան սկմին վրայ) Ի՞նչ կ'ուզէք:  
Անկ. — (Յարգանքներն ընելով) Ո՞հ, դու ես  
տէրք:

Ճիորձ. — Ի՞նչ բանի:  
Անկ. — Այս աթոռներուն:

Ճիորձ. — (Ինքն իրեն) Ի՞նչ գոթական կերպա-  
րանք (Անկուսի աղային) ի՞նչ կայ որ:

Անկ. — Կատելու հրաման պիտի խնդրէի, վասն  
զի յոգնած եմ և շատ քուն ունիմ...

Ճիորձ. — Բայց ազնիւս և սիրելիս ասիկայ հա-  
սարակաց ննջարան չէ, այլ խանուէ մ'է...:

Անկ. — Խաճուէ՞ մ'է... տէրս միշտ խաճուէ  
կը խմէր...: Բայց ինչպէս կարելի է այսպիսի  
մեծ ու գեղեցիկ բան մը խմել... թերես կտոր  
կտոր կրնայ ուստուիլ... (նայելով սրարա-  
նին):

Ճիորձ. — Բայց ուսկի՞ց կու զաք:

Անկ. — (Ձեւրով ցյց տարով) Անկից, հեռուէն,  
հեռուէն... (կը յորանեց և կը ձկուի): Ո՞հ,  
ի՞նչ եղած եմ, կիսամեռ, զրիթէ...:

Ճիորձ. — (Վայ թշուառական, բայց եթէ թո-  
ղում որ հոս մնայ, ինչ պիտի բոէ տէրս):  
Շատ լաւ, լսէ սիրելի պարոն. սա աթոռին  
վրայ հանգիստ ըրէ... բայց գիտնաս որ քիչ  
ատենէն բազմութիւն կու զայ, և պէտք է եւ-  
նես երթաս:

Անկ. — Այո՛, այո՛... շնորհակալութիւն (կը  
նստի և կը քնանայ):

Ճիորձ. — Խեղճ մարդ. բարի մարդ մը կ'երեկի  
բայց վերնատունը պակաս : . . . Երանի թէ  
տանտէրը չգար... յամենայն դէպս առաջին  
յաճախորդ զալուն՝ կ'արթնցնեմ ու ճամբու  
կը զնեմ:

## ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՊորթօնօՅ, ՃԱՌԱՒՈՅ և ԱՅՆՈՒԹԻ ԱԴՅԱ

Պորթ. — Ի՞նչ կ'ընես հոս (տեսնելով Անկուսայ  
աղայի): Ի՞նքն է, ի՞նքը:

Ճիորձ. — Ո՞վ, ի՞նքը:

Պորթ. — (Նայելով Անկուսայ աղային). Ճի՞շդ  
ինքն է... Ո՞հ, ա՞հ: Մեծ ապուչի մը կերպա-  
րանքն ունի...:

Ճիորձ. — Մինչև հոս համակարծիք ենք:

Պորթ. — Ի՞նչ կ'ընէ հոս այդ բիրութ: Գուցէ  
կը ճանչնա՞ս:

Ճիորձ. — Ե՞ս, ո՞չ: Քուն ունէր, ինձմէ խնդրեց  
որ վայրկեան մը հոս հանգչի:

Պորթ. — Եւ գուն ալ թողուցիր. տանտիրոջմէդ  
փաթթաց ուտելու վասնգի մէջ կը զնես ինք-  
զինքը: Վայ անիսելիք, յաճախորդներդ աւ-  
սածնուն պէս՝ վայրկեան մը հոս չեն մնար...  
Ճիորձ. — Ես այլ միշտ ասիկայ կը խորհէի...

Հիմայ կ'արթնցնեմ որ երթայ:

Պորթ. — Աեցի՛ր... (նորէն Անկուսի աղային կը  
նայի): Ի՞նքն է, անտարակոյս:

Ճիորձ. — Կը ճանչնա՞ս զինք:

Պորթ. — Այո՛, և ոչ: Զեմ զիտեր ով ըլլալը,  
սակայն ատիկայ այն մարդն է որ տիրոջն շո-  
գեկառիք զնացքը կորսնցնել տուած է:

Ճիորձ. — Աս աղէկ բան, ինքն ի՞նչ կը խառնուի  
քու տիրոջդ զործերուն:

Պորթ. — Ես ափրոջս յարկաբաժնին մէջ կեցած՝  
պայուսակը կը պատրաստէի, յանկարծ ճամ-  
բուն մէջ հրէշային աղայակ մ'էր որ լսեցի:  
Պատունան կը վագիմ, և կը տեսնեմ երկրին  
այս կապիկը... զուշակէ որո՞ւ հետ:

Ճիորձ. — Որո՞ւ հետ: Ինչպէ՞ս:

Պորթ. — Կառապանի մը հետ: Այո՛ Տէր, կա-  
գրդին. Թամար. 14.

ուսպանի մը հետօ: Ի՞նչ բանի համար չեմ գիտեր, բայց կրնամ զքեզ ապահովցնել որ յիշարի տեսարանը շատ գուարճալի էր: Կառապանն իր խանութին ծեծ մը կը քաշէր աշու ձախ, բայց այս թշուառականն ինքզինք կը պաշտպանէր՝ մէկ ձեռքը հովանոց մը բըռնած չուանի հարուածներուն դէմ կը գնէր, միւս ձեռքը գաւազան մը՝ քանի մանգամ կառապանին շփեց, և ով Աստուած իմ, այնչափ փափուկ՝ որ աշխարհի մէջ չի կրնար ըլլալ. զրեթէ ինեղ մարդուն քթին կէսը թոցուց: Անիկայ այն ժամանակ, օգնութիւն կանչեց, բազմութիւն մը հասան, բայց այս թշուառականը վտանգը տեսնելով կծիկը դրաւ:

Ճիորդ. — Ուրեմն աւազակ մ'է, և ապուշ կը ձեւանայ... Հիմայ ցախաւելով կը վորնտեմ...:

Պորդ. — Ապասէ՛, թող որ հանգչի... Մէկ մը խանութ մտնենք ուր քեզ կը սպասեն, ես աւ պատահ մ'առնելու պէտք ունիմ... վասն զի մինչեւ հիմայ ծոմ եմ (կը մտնեն):

## ՏԵՍԻԼ ՎԵՅԵՐՈՒՐԴ

ՀԽՈՒՎՈՅ, ՓՈՅԼՈՅ և. ԱՆԿՈՒՏԻ ՍՊԱԽ

Ճիորդ. — (վազելով մերս կը մտնէ, Փաօրոյին ևես իրար բանել խաղաղով) Ա՛ն, ա՛ն, զարկի, քեզի դպայ (միշտ կորմը կը վազէ):

Փաօ. — Ո՛չ, սուտ է, չկրցար դպչիլ:

Ճիորդ. — Այո՛, այո՛, դպայ. (մերս կը փախչի):

Փաօ. — Ո՛հ, այո՛, սպասէ որ գամ զքեզ բըռնեմ... կարգը քուկդէ է:

Ճիորդ. — Բայց... դպայ քեզի... (կը մօտենայ Փաօրոյին, և բանցի մի կը զարմէ) հիմայ դըպպայ թէ ոչ:

Փաօ. — Ո՛հ, հիմայ փոխարէնը կը հատուցանեմ... (իրարց ետևի կը վազեն և Ճիորդիոյ Անկուտի աղայի ետև կ'ապաստանի որ բնոյ մէջ երեսը կը ծամբուկի): Կու զաս, անպատճառ դպրոց կու գաս, ես զիտեմ ընելիքս:

Ճիորդ. — Ո՛հ, անա զիւցազնը, հազիւ դպայ և այնչափ փափուկ է եղեր... Ո՛հ, խերմ տպայ: Մայրիկ, կատուն ինձի՞ կը նայի... (Ժաղրածուց ձեւերով) Ա՛ն, ահ:

Փաօ. — Ո՛հ, կը տեսնուինք... պիտի վճարեմ (մեկնելու ժամանակ Անկուտի աղան կը հրշմարեկ):

Ճիորդ. — Փաօլոյ, Փաօլոյ, հոս եկուր: Ան մարդը նայէ, տանը քով տեսածնիս չէ՞:

Փաօ. — (կը նայի) Զգեստէն այն կը նմանի: Ճիորդ. — Կ'ուգէր զմեզ ծեծել վասն զի իւր յիշարութեանց վրայ կը ծիծալէնք: Ա՛ն, ահ:

Փաօ. — Եւ մեզի կ' ըսէր որ զինքը յարգենք իբր իր զիւղին քաղաքաբետը:

Անկ. — Ո՛հ. (կը ձիտի և միւս կողմը կը դառնայ քմանանար համար):

Փաօլ. — (կը մօտենայ Ճիորդիոյին, բուցի մը կ'իշեցնէ). Ո՛հ, հիմա հաւասար ենք (կը փախչի):

Ճիորդ. — (կ'ուզէ ետևի վազել՝ յետոյ կը սկսի խօսակցի) Կեցի՛ր, Փաօլոյ, կը ներեմ քեզի վասն զի... կ'ուզեմ զքեզ հրաւիրել բան մը ուտելու համար, չեմ զիւեր ալ ի՞նչ... (կը մօտենայ կողովին զոր Անկուտի աղան բնացած ժամանակ ծունկերուն վրայ դրած եր) Ո՛հ, թուզ:

Փաօ. — Ուրեմն, կուզե՞ս:

Ճիորդ. — Նայիմ լա՞ւ են:

Փաօ. — Բայց եթէ յետոյ դարձ...

Ճիորդ. — Ո՛հ, այդ ո՛չափ վախ. նայէ ի՞նչպէս կ'ընեն (կը մօտենայ և կը չանայ որ կողովնե

աւելու. Անկուտի աղան կը շարժի, ձիուշիոյ կը փախչի, յեսոյ դարձեալ կը մօտենայ նորհն կողովը բանելով։ Վայ հրէց, կարծածէս աւելի գժուար է եղեր...։ Բաւական է, առ այժմ թողունք, երբ արթնայ, միջոցը կը խորհնաք իր թուզերն ուտելու, առ այժմ կասկած չտալու համար երթանք քիչ մը խաղանք և ուշադրութիւն դնենք ո՛ր կողմէն պիտի երթայ։

Փաօ. — Բայց հիմայ դպրոցի ժամանակն է։ ձիուշ. — Ո՞հ, կարծես առաջին անգամն է որ դպրոցէն բացակայ կը գտնուինք։ Կողով մը թուզը կարծեմ բաւականէն աւելի օրինակը պատճառ մ'էր։ Կ'երթանք, այդչափ խնձանարութիւն մ' ըներ... (կը սկսին մնկնի)։ Ո՞հ, կեցիր... (գրքերում մհջեն րուշը մը կը փնտուե, բերք մը դաշտ կը բաշէ)։ Անպիտան, քիչ մը պատիկ է... դուն ուրիշ թերթ մը չունի՞ս։

Փաօ. — Ի՞նչ պիտի ընես։

Ձիուշ. — Ոչինչ. կոոր մը պիտի խնդանք։ Ա՞հ, ահ։

Փաօ. — Բոյ նայիմ...։

Ձիուշ. — Կը տեսնես. տուր թուզթը...։

Փաօ. — (կը նայի րդրապանակը) (Ասիկայ ունիմ միայն) Ունեցած միայն այս է... բայց այսօրուան գասերնի՞ս...։

Ձիուշ. — Նայէ հիմայ... իբրև թէ զիխացաւ մը ունեցեր ես և շարադրութիւնդ չես կրցած ընել (քերրը ձեւընէ կը յափշտակէ)։ Հիմայ բան մը պէտք է որ երկու կոորդ միացնենք։ Անպիտան, ի՞նչպէս ընենք. (Անկուտի աղայի ետել կ'անցին՝ րուզրերով յափի կ'առնէ)։

Փաօ. — Ո՞հ, կարծեմ կ'ուզե՞ս, հիմայ հասկցայ... Ա՞հ, ահ, այս շատ զուարձալի է։ Ես քիչ մը սոսինձ ունիմ քովս. Եթէ կը բաւէ ձիուշ. — Ապրիս, հոս քեր. (քերրերը իրար

կը փակցէն). Ի՞նչպէս, սոսինձը գրքերուդ մէջ կը պահես, գպրատան մէջ կօշկակաբութիւն կ'ուզես ընել։

Փաօ. — Քիչ մը հետո առի վասն զի երէկ Զէքաքօն զիս վար ձգեց, ես ալ կ'ուզէի այս սօսինձը զիխարկին մէջ դնել և գլուխն անցունել։

Ճիուշ. — Ա՞հ, ահ, շատ լաւ. քու վրէժդ ալ ուրիշ անգամ մը. (սոյն պահուուն զրիչ կատամար դրւրս հանած՝ խոշոր տաւերով կը զրէ թերթին վրայ. Իմ երկրիս Քաղաքապետը)։ Հիմա մեզի. (իլ մօտենայ Անկուտի աղայի և թերթի անոր ուսւերին վար կը կախի)։

Փաօ. — Ա՞հ, ահ, ինչ կերպարանք։ Ճիուշ. — Երթանք խաղանք, և ուշադրութիւն դնենք երբ արթնայ։

Փաօ. — (Ճիուշինյին կը զարթէ) Հոս եմ, (կը վազեն բիչ մը բաւերաբեմին վրայ, և կը մեկնիմ)։

## ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՒԴ

ՊՈՐԹՈՒՈՅ և ԱՅԿՈՒՏԻ ԱՂԱՅ

Պորթ. — Դեռ կը քնանայ։ (Անկուտի աղայի ջրս կողմի կը դառնայ, որ խորդապով կը բնեանայ, կը տեսնէ բուղըր)։ Եթէ գէմքէն պիտի գատենք՝ կատարեալ բիրտ գիւղացի մ'է, զիւղացին զիւղացին։ Հիմայ կը հասկնամ, կ'ուզեմ հետք խօսիլ որ զիփնամ թէ ով է։ Լիհի, ոհ, փուճ կենդանի։ Թակես ալ պիտի չարթնայ։ (Քովիլ կը մօտենայ դարձեալ և ուժով մը հերենվ, ե՞ն, ե՞ն)։

Անկ. — (ուսւերը յերկելով) Ո՞հ, անիծեալ լուեր... (յորս կողմի կը նայի ձգուելով) Վայրկեան մը կարելի չէ հանգիստ քնանալ։

Պորր. — Ե՞ն, Պ. Քաղաքակետ իմ գիւղիս,  
ծառայ եմ:

Անկ. — (Աս մարդը զիս կը ճանչնայ) Բայց,  
ի՞նչպէս զիտէք:

Պորր. — Ո՞ն, շատ դժուար բան մը չէ զիտ-  
նալը... ձեր կերպարանքը կը բարէ իմացնե-  
լու...  
Անկ. — (հսկարուանելով մի) Անշուշտ, արդէն,  
իմ... իմ կերպարանքս... բուն իմս... ար-  
դէն, անոտարակոյս... (իր պտուի):

Պորր. — (Փուն կենդանի) Առաջին անգամն է  
որ Միլան կու գաք:

Անկ. — Անշուշտ, առաջին անգամ, և արդէն  
կարեոր էր, իբրև քաղաքապէտ... պէտք էի  
այս զիւզը զալ, որ, հասկցար, իմ գիւղս չէ:

Պորր. — Հաւնեցար:

Անկ. — Ո՞ն, անոտարակոյս... և հասկցար, չկոր-  
ցայ բոլորը տեսնել, բայց տեսածս ալ գեղե-  
ցիկ էր, հաւնեցայ... միայն հասկցար, կ'ու-  
զէին զլխուս տգեղ խաղ մը խաղալ... բայց  
չթողուցի որ բնեն:

Պորր. — (Ա՞ն, ա՞ն, կերջապէս):

Ճիորձ. — (Պորրորոյին) Ճամբայ դիր ատիկայ,  
հիմայ կու զան սովորական յաճախորդները:

Պորր. — Համբերութիւն վայրկեան մը (Անկու-  
տի աղային) Ո՞ն, ի՞նչ ըրին քեզի:

Անկ. — Աւազակութիւն մը, հասկցար: Տէ-  
րս ինձի ըսաւ... Միլան զնա, հոն կը  
զտնես Պ. Մաքսատունը. և հազիւ կ'անցնիս  
այդ պարոնի քովէն, պիտի զտնես մէկ...  
մէկ... ո՞ն... ըսաւ որ, ըսաւ որ երկու ձիե-  
րով զեղեցիկ կառք մը պիտի զտնես... և  
արդէն, ըսելիք չկայ, քաղաքապէտ եմ...

Ճիորձ. — Արդեօք հանրականք ըսաւ...

Անկ. — Ապրիս, ճի՞շդ հանդովարի... ապրիս  
զաւակս. եթէ իմ երկիրս զալու ըլլաս, զրա-  
գիրս կ'ընեմ զքեզ:

Ճիորձ. — Շնորհակալ եմ: (Ա՞ն, ա՞ն, ինչ յի-  
մա՞ր):

Պորր. — Ուստի՞ց, յետոյ:

Անկ. — Ուստի, հասկցար, ինձ ըսաւ, ծառային  
10 անդիմ բարի ձեռք կու տաս, կառքը կը  
նսափս և կ'երթաս հոն մինչեւ որ կենայ եղե-  
ցիկ հրապարակը:

Պորր. — Կարծեմ Մայր եկեղեցի կ'ուզէք ը-  
սել:

Անկ. — Այս, հասկցար, կը հասկցուի: Ուստի  
այս կառքը տեսայ, ուզեցի վրան ելնել...  
բայց երկու զինուոր զիս բռնեցին և հարցու-  
ցին թէ բան մը ունիմ քովս Պ. Մաքսատան  
յանձնելիք... Ես ալ, հասկցար, ճիշտը խօ-  
սելով բան մը չունիք անոր յանձնարարուած,  
բայց արթուն գտնուեցայ և յարմարցուցի թէ  
տէրս անոր բարձներ կ'ընէ...  
Ճիորձ. — (Ա՞ն, ա՞ն):

Պորր. — (Եւ վերջը կ'ըսին թէ Պորթուլոն<sup>1</sup>  
մեռած է): Եւ աննկար:

Անկ. — Անոնք սկսան գրանս պրատել, և ու-  
զեցին այս թուզի կողովը նայիլ, յետոյ ըսին  
որ հետերնին երթամ... և երեք ֆր. և եօթն  
սանդիմ ուզեցին... Մարդասպաններ, աւա-  
զակներ...: Ես չէի ուզեր, իրենց սպառնա-  
ցայ որ իմ գրազիր եղօրս կ'իմացնեմ և ինչ-  
պէս ինքը կ'ընէ, բոլոր ոոր օրէնքներն իրենց  
վրայ կը գործադրեմ. բայց այս սրիկանե-  
րէն մէկն ինձի բռնցի մը տուաւ, ուրիշ մը  
ձեռքը գրպանս խոթեց և Յ ֆր. զողցաւ:  
Պորր. — Յետոյ:

Անկ. — Իմ գառարանս կանչեցի զիրենք...  
յետոյ երկու ձիով կառքը վերապարձայ...  
տասն քայլ հեռի էի... երբ կառքը թին, թին,  
թին ըրաւ և մեկնեցաւ... Ես ալ, հասկցար,

1. — Ուրիշ յիմար մը:

սկսայ պոռալ որ կենայ և ետևէն վազեցի... Ծառան խնդալով կ'ըսէր ինձի. չիաօ (ձիերուն պիս իր վազի): Այն ատեն բարկացած ցատկեցի մօտակալ կառքի մը վրայ և հրամայեցի որ այդ միւս երկու ձիով կառքի եւ տևէն վազէ...

Պորր. — Քանի՞ ձի ունէր այս կառքը:

Անկ. — Մէկ:

Պորր. — (ձիորձիոյին) Խշու կառք մ'է հեծածը, հանրակառքի մ'ետևէն հասնելու համար: Ա՛հ, ա՞հ, աս աղուոր էր, աղուոր էր:

Անկ. — Բաւական ժամանակ վազելէն վերջ՝ երկու ձիով կառքը կեցաւ... Ես ալ իմ կեցընել տուի, փար ցատկեցի... և միւս կառքը գարձեալ թին, թին, թին ըրաւ և մեկնեցաւ... Ես ալ իսկոյն նոյն կառքիս վրայ ցատկեցի... բայց այդ կառապանը՝ խօսքը մէկը ըրած անուշտ, հասկցար, միւս սպասաւորին հետ, չուզեր տեղէն շարժիլ և ինձի կ'ըսէ «Փր. մը կ'ուզեմ եկած ճամբռու համար»: « Ա՛հ, կ'ըսէմ անոր, նայէ քաղաքապետ եմ, չվայւեր որ ինձ այդպիսի բան մ'ընես» և 5 սանդիմ տուի:

Ճիորձ. — Ա՛հ, ա՞հ:

Պորր. — Բայց մէկ ֆրանք պէտք էիր տալ...

Անկ. — Նայէ, զուն ալ սկսար... բայց եթէ երկու ձիու համար տասը սանդիմ կը վճարենք, մէկ հատի մը համար 5 կու տան... կարծեմ:

Պորր. — (ձիորձիոյին) Պատասխան տուր տրամաբանութեան:

Ճիորձ. — Ա՛հ, ա՞հ, վերջապէս ի՞նչպէս յարմարցուցիք:

Անկ. — Տեսնէլով, հասկցար, որ ըմբռնողութիւնը կարձ է քիչ մը և մտրակով ինձի կը սպանար, երկու երեք թուզ քթին բերնին փակցուցի. յետոյ որովհետեւ ասիկայ չէր բա-

ւեր և փր. մը կը պահանջէր, զաւազանովս քիթը ջախչանեցի, և հասկցար, մեկնեցայ... Պորր. — Շատ լաւ ըրած ես... բայց եթէ զքեզ ձերբակալէն:

Անկ. — Զո՞վ:

Պորր. — Լ՛հ, կրնայ մէկը անշուշտ բանս զնել տալ զքեզ:

Անկ. — Կ'ուզէի գիտնալ թէ ով կը համարձակի այդպիսի բան մ'ընել: Ինձին, զիւղիս քաղաքապետին... բաւական է սա գաւազանս, հասկցար:

Պորր. — Քեզի լաւ խորհուրդ մը տամ, լուէ. քեզի չվայլեր բնոնութիւն գործածէլ, քաղաքապետ ես, կը հասկնամս, ծանրութիւն պէտք է...

Անկ. — (ախորժելով) Արդէն, անտարակոյս, հասկցար...

Պորր. — Եթէ մէկը քու նկառմամբ քիչ մը շրջանայեաց ալ չզտնուի... խոհեմութիւն ունեցիր, քու արժանիքդ ճանչցիր, հանդարտ խօսէ, և ամէնքը զքեզ կը յարգեն:

Անկ. — Այն, այն: Ո՛հ, երբ կը նստիմ, հասկցար... ամէնքն ինձի կ'ըսեն թէ թազաւորի մը կը նմանիմ:

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐ ՈՒՐԴ

ՓԵՏՐՈՒՑՑԻ և ՎԵՐՈՅԻՆԵԼՈՂ

Փետր. — (բատերաբեմ կը մտնի, և արձարանի առջև կեցած): Լ՛յ, խանութպան:

Ճիորձ. — Հրամեցէք:

Փետր. — Կաթով քափփէ (կը նստի, օրագիր մը կ'առնոյ և կը կարդայ):

1. — Բնագրին մէջ բառախաղ եր:

- Պորք. — Հիմայ ո՞ւր կը մտածէք երթալ (Ահ-  
կոչուի աղային):
- Անկ. — Տիրոջս քով:
- Պորք. Ո՞վ է այս ձեր տէրը:
- Անկ. — Ինքն է, իմ տէրս... կ'ենթադրուի:
- Պորք. — Բայց ո՞ւր կը բնակի:
- Անկ. — Հոս. այս գիւղին մէջ, հասկցար: (Խնչ  
տարօրինակ մարդ):
- Պորք. — Բայց այս գիւղը մեծ է:
- Անկ. — Վնաս չունի, հոգ չէ, կը գտնեմ զինք.  
արդէն նամակ մը զրկած եմ:
- Ճիռած. — (Անրս կոչ զայ, ֆեարուցցիի սուրար  
կը բւրե, յետոյ Պորքոյին) Դեռ հո՞ս է այդ  
մարդը: Ճամբու դի՞ր:
- Անկ. — (Պապս ինձ կ'ըսէր որ շահերդ ամե-  
նուն մի ըսեր, լաւ, ես ալ արդէն կարեռը  
միայն կ'ըսեմ):
- Պորք. — Էյ, ճիմակ կը սկսի մարդ գալ հոս...  
հանգիստ առիր և լաւ կ'ըլլայ որ երթաս  
տիրոջ տունը փնտուս:
- Անկ. — Անշուշտ, հասկցար, հիմայ կ'երթամ  
(Կառենու հովանոցը րեժին տակ, կողովն ոչ  
զարագանել ձևոքը): Էյ, ստոյդ է որ հոս Մի-  
լանի մէջ սովորութիւն կայ պոչեր կախելու  
և ազնուական ու բարի մարդկանց վրան խըն-  
դալու:
- Պորք. — Ո՞հ, զարմանալի բան, կ'ուզէք որ  
պո՞չ կախեն ձեզի պէս քաղաքապետի մը:
- Անկ. — Այն ժամանակ, հասկցար, ես կը մեկ-  
նիմ, (կը նայի զիսարկին): Բան չկայ, սակայն  
միշտ պէտք եմ արթուն ըլլալ: (Գիպ ի դուռ  
բեմին յսրը կ'երրայ՝ անցնելով ֆեարուցցիի  
բովին որ սորերն երկնցոցած է, կը զար-  
ենի ոչ բրին բերեին վրայ կ'իշեայ):
- Փետր. — Զար սասանայ, նայէ թէ ո՞ւր կը
- գնես ուզերդ, ողորմելի արարած:
- Անկ. — Դու ուշադրութիւն դի՞ր որ ուզերդ հոն

- շգնես՝ ուր ես իմ ուզերս կը զնեմ... ապա  
թէ ոչ զրագրիս կը յանձնարարեմ որ ատոնք  
կտրէ, հասկցար: (Կը սկսի մնելինի նայելով  
աչ ոչ ձախ):
- Փետր. — (րուշրը տեսնելով) Ահ, ահ, ահ,  
ինչ չարաճնութիւն:
- Անկ. — Այժմ ուսկի՞ց պէտք եմ երթալ: Հարցը-  
նեմ: Էյ, պարոն, այս կողմէն պիտի երթամ:  
Ճիռած. — Բայց ո՞ւր կ'ուզէք երթալ:
- Անկ. — Տիրոջս քով, հասկցար:
- Ճիռած. — Բայց ո՞ր փողոցը կը բնակի:
- Անկ. — Զուարձալի՛ բան, իր տունը կը բնակի,  
ոչ թէ փողոցը:
- Ճիռած. — (Հասկցայ. կատարեալ տեսակէն  
ապուշ մ'է): Այս, այս զացէ՛ք ուր որ լաւ կը  
կարծէք, լաւ է... (Եթէ մէկ ութզ չի կոտրեն):
- Պորք. — (Անկոչուի աղային բով երրարդ և  
չիս ի խորը առաջնորդելով) Միշտ սանկ շի-  
տակ զացէք, յետոյ աջ, յետոյ զարձեալ աջ,  
յետոյ նորէն աջ, վերջապէս միշտ դէպ ի աջ,  
հասկցաք, չէք սխալիր:
- Անկ. — Ուստի, հասկցար, միշտ այս կողմէն  
կ'երթամ (Ճախակողմի ցոյց կոչ տայ):
- Պորք. — Ոչ, միշտ դէպ ի աջ:
- Անկ. — Ահ, հասկցայ...
- Պորք. — Հիանալի ճամբորդութիւն:
- Ճիռած. — Յաջողութիւն, պարոն քաղաքապետ:
- Անկ. — (լրջորէն կը դառնայ և կ'ողջունէ) Շնոր-  
հակալութիւն, շնորհակալ եմ, հասկցար. (Անկ-  
նելու ժամանակ կը զարենուի Մորինիին որ  
ներս կը մտնէ) Ո՞հ, նայեցէք թէ ո՞ւր կ'եր-  
թաք: (Հոս ամէնքը կոյր են) (կը մնելին):

## ՏԵՍԻԼ ԻՆՉԵՐՈՐԴ

ՄԱՐԻԵԵ, վերայիշեալը, և ԳՈՐԾՈՅ

ՄՈՐԻՒՀ. — ԵՅ, խանութպան:

ՃԻՒՐԱ. — ՀՐԱՄԵցէք:

ՄԱՐ. — ԿՈՎԱՀԱՄ:

ՃԻՒՐԱ. — Պատրաստ (Անրս կը մանե, սրաւաւանել): Վայ անպիտան, կարծեմ ճիշդ ան է...

ԳՈՐ. — (Անրս մանելով) Պորթոլոյ, Պորթոլոյ:

ՊՈՐԻ. — Հոս եմ, հրամեցէք:

ԳՈՐ. — Կէս ժամ է որ զբեզ կը կանչեմ, և դուն ճամբուն բերանը կեցած կը նայիս թէ ով կ'անցնի կը դառնայ:

ՊՈՐԻ. — Ներեցէք, հոս կը սպասէի...

ԳՈՐ. — Զատ մի խօսիր. լսէ ի՞նչ կ'ըսեմ, ես թղթատուն երթամ տեսնեմ թէ ինձի նամակ կայ, գուն ալ սա պիտակն իր հասցէին տար. յետոյ գարձիր հոս, պայտուակս առ և զնակայարան ինձի սպասէ, հասկցա՞ր:

ՊՈՐԻ. — Այո, տէ՞ր:

ԳՈՐԻ. — ՏԵՇ, սովորական ապշութիւնդ չըլունէ. ժամն երկութիւն անպատճառ կայարան գտնուիս:

ՊՈՐԻ. — Մի տարակուսիք, ժամացոյցի ճշդութեամբ:

ԳՈՐԻ. — Քեզի ալ աղէկ կ'ըլլայ, ուրեմն ըստած հասկցար. (Անկենոր պահուած կը նշմարէ զՓետրուցցի) Ո՞հ, Պ. Քետրուցցի, կը ներէք, չտեսայ զձեզ. ի՞նչպէս էք:

ՓԵՄՐ. — Լաւ, չնորհակալ եմ, դո՞ւք:

ԳՈՐԻ. — Սանկ, գէշ չեմ:

ՓԵՄՐ. — Ի՞նչ որ կը տեսնուի, ճամբորդութեան վրայ էք:

ԳՈՐԻ. — Այո, թորին կ'երթամ զործ մ'ուշ-

նիմ շուտով տեսնելիք . . . բայց դուք, ի՞նչ հրաշք է, Միլան գտնուիք, դուք որ միշտ զիւղերը կը կենաք և ոչ մէկուն հետ չէք ու զեր տեսնուիլ:

ՓԵՄՐ. — Ի՞նչ պիտի ընեմ, քաղքէն դուրս աւելի ազատ, համարձակ եմ: Այսօր ալ եկած եմ վասն զի ճիշտ այսօր վերջնական վճիռ մը պիտի տրուի խնդրոյ մը մասին որ ինձի յանձնուեցաւ և պիտի ստանամ . . .

ՊՈՐԻ. — (Ո՞հ, ի՞նչ կը լսեմ, մի զուցէ սա մարդը հակառակորդս ըլլայ) (Կ'առնու օրագիշը և կարդալ կը կեղծէ):

ԳՈՐԻ. — Ցաշողութիւն կը մաղթեմ. կը ցաւիմ ձեզ հետ խօսիլ չկրնալուս համար . . . կարենոր զործ մ'ունիմ զոր մեկնելս յառաջ պէտք եմ փութով ի զլուի հանել . . .

ՓԵՄՐ. — Ո՞հ, այդպէ՞ս ուրեմն: Խնդրեմ ձեր հանգիստը նայեցէք, յետոյ կը տեսնուինք:

ԳՈՐԻ. — Երթաք բարեաւ: Երբ կրկն Միլան զալու ըլլաք, խնդրեմ, մեզի այցելէք, մեծ հանոյք մը պատճառած պիտի ըլլայիք:

ՓԵՄՐ. — Ճնորհակալ եմ, ճանոյքը ինձի պիտի ըլլայ (Ճեռք կը սեղնեն, Գորիյ կը մեկնի):

ՊՈՐԻ. — Վայ թշուառութեանս, խաբուած չեմ, ճիշդ այն է . . . պէտք եմ ստուգել: ԵՅ, (Ճիւրակինցին): Ո՞վ է այդ պարոնը:

ՃԻՒՐԱ. — Պ. Փետրուցցին Միլանցի է, բայց զրեթէ բոլոր տարին քաղքէն զուրս կը բնակ կի . . . ամարանցի մէջ: Կը ճանչնաք զուցէ:

ՊՈՐԻ. — Ե՞ս, ո՞չ, ճնորհակալ եմ: (Փետրուցցի, բուն հակառակորդս է: Գոհ եմ որ տեսայ այս պնդագլուխը որ փաստ, պատճառաբանութիւն չուզեր հասկնալ . . . Ո՞հ, բայց այս անգամ պիտի զզջայ . . . թէ վաս պիտի կրէ և թէ պիտի իսպառակուի):

ՓԵՄՐ. — (յետ կրկն եւ մարեկոյ զՊորինի) կարծեմ ճիշդ այն է . . . ջանամ խօսակցու-

Թիմ մը բանալ (կը նստի Մորինիի դիմաց լրացիր մը ձեւըլ, յիշ մը լուռ կարգայի վերջ) Ո՞հ, այս գեղեցիկ բան: Անզգիցիները՝ ձիպալթարը Սպանիոյ կ'ուզեն թողմէլ . . . աւելի դիւրին է որ արկանակալ մը միլիոնատէր ըլլայ: Ի՞նչ կ'ըսէք ասոր, պարո՞ն:

Մորինի. — (կնևակն անոր կը դարձնեա արանամարհանքով մը) (ինձի կ'ըսէ . . . բայց դատը շահելէս վերջ կը տեսնուինք. այնպիսի խընդրոյ մը ձեւարկած ես որ քեզի վատահամբ բաւութիւն կը բերէ և ոչ . . .):

Փետր. — (Ա՞ն է, տարակոյս չվերցներ. զիս ճանցած է հետը բնաւ դեռ չխօսած, ես ալ զինք առաջին անգամ գատարանի մէջ ճանչցայ: Ուստի, զիտեմ ընելիքս, քեզի կը սուզրեցնեմ որ քիչ մ'աւելի կրթութիւն ունենա՞ս...) ԷՇ, ձիորճի՞յ:

Ճիորճ. — Հրամեցէք:

Փետր. — Թրափէցիոն դեռ չեկա՞ւ հոս զիս փընտելու համար:

Ճիորճ. — Դեռ ո՞չ:

Փետր. — Կը ցաւիմ. իրեն հետ այսօրուան համար ժամագրած էինք... հոգ չէ, դատարանին մէջ կը տեսնուինք:

Ճիորճ. — Հետը խնդի՞ր մ'ունիք:

Փետր. — Այն, բայց արդէն լմնցած կը համարուի. այսօր վճիռը պիտի տրուի:

Ճիորճ. — Նպաստանք, անշուշտ:

Փետր. — Ապահով եմ: Խնդիրը այնչափ յայտնի է, որ հակառակորդս զացեր Պ. Թրափէցիոյի կաշառք տուեր է որ ես գատու կորսնցնեմ:

Ճիորճ. — Բուլ է որ հակառակորդդ անհաւատարիմ մէկն է:

Մորինի. — ԷՇ, խանութպան:

Ճիորճ. — (Փետրուցցին) Կը ներէք: (Մորինիի) Հրամեցէք:

Մորինի. — Գաւաթ մը ֆէրնէթ բեր ինձի: Ճիորճիոյ. — Հիմայ, (ներս կ'երրայ):

## ՏԵՍԻԼ ՏԱՄՆԵՐՈՒԴԻ

Առանձին աշխ և վերոյիշեալիք

Անկ. — (ուշուցիկ յարգամաց ձեւը բնելով՝ մեկն ողջունելու ձեւով, ներս կը մտնէ) Շնորհակալ եմ, շնորհակալ, հասկցար... Ամէնքը զիս կը բարձեն և գեղիս քաղաքապետը կը կոչեն . . . Եւ յիրաւի պէտք է ըսել որ կերպարանքս ճիշդ... ճիշդ... դէմք մը բուն... հասկցար: (Կը նայի ջրս դին երկիրածուրեամբ) Ո՞հ, կարծեմ... բայց ես հոս մի և նոյն տեղն եմ... Ո՞հ, ճամբաս սխալած պիտի ըլլամ... ինձի բսին որ միշտ գէպ ի աջ գնա... արգեօք աշս օա է (ձախը բաներդ): Ճիմայ այս կողմը կը դառնամ (հակառակ կողմէն կը դասեայ) այն, ահաւասիկ... աշս այս է: Ո՞հ հրաշք, նայէ թէ ինչպէս առանց տեսնելուս ձեռքերս կը տեղափոխէմ. (Նորին կը սկսի դասեալ, բայց այս անձամ կամաց կամաց դիրբով բակելով ամեն անզամ) Զախս հոս է, ձախս հոն է: Լաւ, է՞հ, արգէն ճամբորդելով կը սովլիւցուի... Կ'երգնում որ այս իմ գիւտիս վրայ զիս... զօրա... ովք զիտէ, զօրավար մը կ'ընեն: Է՞հ, է՞հ: Բայց հիմայ . . . ո՞ր կողմէն պիտի երթամ... սա պարոններուն հարցնեմ. (Կը մօտենայ Մորինիի) Պարոն, ասկից երթամ շիտա՞կ է...

Մորինի. — (ասանց անոր նայելու և ուսերը դարձնելով) Դժոխքին տակը գնա:

Անկ. — (յրի բնրմի շարժում մը կ'ըմէ, յատոյ կը մօտենայ Փետրուցցիի) (Անկայ կարծեմ թէ աւելի բարի է). Պարոն . . . շիտակ կ'երթամ . . .:

Փետր. — (աչքերը վեր կը վերցնէ) Ահ, ահ ի՞նչ  
կերպարանք: Ահ, ահ (ի՞նքն աղ ուսւերը կը  
դարձնէն և Մորինիի մետ դէմք դէմքի կոչ  
զան, և երկուշը միասին արհամարհամբով  
ուսւերնին իրաւոց հակառակ կը դարձնեն):  
Անկ. — (Զեմ հասկնար... զինուորական փորձ  
կ'ընեն ասոնք... կը բաւէ, հասկցար, կը  
սպասեմ... մէկն անշոշտ շիտակ ճամբան ցոյց  
կու տայ (դիկ ի խոր կ'երբաց և կը պտտի):  
Ճիորձ. — (Ժերինիր Մորինիի բերլով) Ահաւա-  
սիկ պատրաստ է: (կը մօտենայ Փետրոցցիի):

### ՏԵՍԻԼ ՏԱՍՆ ՌԿՈՒԵՐՈՐԴ

Ճիորձ, Փաօւոզ, և վերոյիշեալք

Ճիուշ. — (Փաօրոյի հետ ներս մտներով զգու-  
շուրեամբ) Ուստի կարծեմ հասկցանք. ես աս-  
կից ուշագրութիւն կը դնեմ, դու աղկից. Են  
կարեսր վայրկեանն է այս:

Փաօրոյ. — (Անկուտի աղային մօտեն կ'անցնի  
որ ուսւերը դարձնցած է, զգեստի ծայրեն  
կը բաշէ և կը փախչի) Պարոն քաղաքապետ  
իմ գիւղիս:

Անկ. — Եհ, քիչ մը յարգանք, ապա թէ ոչ...  
հասկցար:

Ճիուշ. — (հակառակ կողմեն կը մօտենայ) Ահ,  
ահ պարոն քաղաքապետ իմ գիւղիս...

Անկ. — (կը դառնայ), Ահ, սրիկաներ, ան-  
չնորհներ, (Ճիուշիոյ ծաղրական ծներ կ'ը-  
նեն խնդարով) Ահ, այն, քեզի կը հասկցնեմ:  
(Գևորինի կը դնէ կողովը և Ճիուշիոյ ետևեն  
կը վագե. սոյն վայրկենին միւս կողմանն  
Փաօրոյ կոչ զայ կ'առնէ կողովն ոչ կը փախչի):

### ՏԵՍԻԼ ՏԱՍՆ ԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Ճիորձ, Մօրուն, Փատրուազի և Ահաւասի ազան

Փետր. — (Ճիորձիոյին) Ի՞նչ կ'ըսես ասոր:  
Ճիորձ. — Անշուշտ, իրաւունք ունիք. ինեւա-  
պատակին մէջ քիչ մը աղ պիտի չունենայ  
չըմբննելու համար:

Փետր. — Այսպէս ակնյայտնի բան, և սա-  
կայն, հակառակորդս չուզեր համոզուիլ:

Մորինի. — (Զեմ զիւեր ո՞ր մէկը զիս կը պաշտ-  
պանէ...)

Փետր. — (Հասկցայ, այս աղէկ բան) (կը խօսի  
դարձեալ Ճիորձիոյի հետ):

Անկ. — (ներս կը մտնէ առանց գաւազանի և  
զիւարկի): Ոհ, ափսոս, գաւազանս ալ զըլ-  
խարկս ալ կորսնցնել տուին ինձ: Եւ հիմայ.  
... Քաղաքապետ մը առանց գաւազանի...  
Ահ, այէտք է, հասկցար, որ աէ՞րս փնտոեմ  
ապա թէ ոչ զլուխս ալ կը կորսնցնեմ... բայց  
կողնիս, այ չար սատանայ, հոս թողոցի,  
հոս... թուզե՞րս (փետուելով):

Ճիորձ. — Տարակոյս չկայ որ ձեր հակառա-  
կորդն աւազակ մ'է եղեր, սրիկայ մը, մէկ...

Մորինի. — Եյ, խանութպան...

Ճիորձ. — Հրամեցէք:

Անկ. — Թուզե՞րս, ո՞ւր են թուզերս: Ոհ, ա-  
հաւասիկ առուան երիտասարդը, իրեն հար-  
ցնեմ... հասկցար, իրեն:

Մորինի. — (դրամի պատրաստած է) Ասիկայ  
կոլահատին համար, ասիկայ ֆէրնէթին, ա-  
սիկայ ալ քեզի համար, սրիկայ գոն (ապտակ  
մը կ'իշեցնէ երեսին):

Ճիորձ. — Բայց պարոն (այլայլած):

Մորինի. — Որ քիչ մը չնորհքով խօսիլ սո-  
վորիս անոր հետ որ չես ճանչնար:

## ՏԵՍԻԼ ՏԱՄՆԸ ՀԶՈՐՍԵՐՈՐԴ

ԱՅՆՈՒԹԻ ԱԴՅԱ, ՃԻՌՃԱ, ՊՈՐԹՈՂՈՅ

Ճիորձ. — Ի՞նչ աղմուկ էր փրթաւ հոս: Ա՞ն, վայ ինձ: Ո՞վ կոտրեց այս զաւաթները: Պորք. — Սա վայրենին սրած պիտի ըլլայ, իւրեն համար սովորական բան է:

Ճիորձ. — (Անկուտի աղային) Է՛, ինչպէս եղաւ: Անկ. — Ա՞ն, վայ ինձ: Թուզերս կը փնտռէի՝ ուսերս ջախճախեցին, հասկցար... անձի:

Ճիորձ. — Բայց գուք իմ այսշափ բաներս կոտրած էք, և գիտէք ինչ կ'ըսէ առածը, «Ո՞վ որ կոտրէ, կը վճարէ»:

Անկ. — Բայց ո՞վ պիտի վճարէ իմ ուսերս:

Ճիորձ. — Բայց կ'ուզեմ որ իմիններս վճարուի: Շուտ 15 ֆր. ապա թէ ոչ...

Անկ. — Ո՞ն, ուսկի՞ց որսամ 15 ֆր.:

Ճիորձ. — Ես չեմ գիտեր: Կ'ուզեմ որ վճարուի. Եթէ ինենթ ես տունդ կեցիր, և բանի մէջ մտներ:

Պորք. — Բարեկամս իրաւունք ունի. վճարէ, ապա թէ ոչ բանութեամբ կ'առնենք:

Անկ. — Է՛ն, չփորձէք... եթէ պզտիկ մը դպչիք այնպէս մը կը ճգմեմ զձեզ որ դէմք քերնուր գծագրութիւնը փոխուի... հասկցար:

Պորք. — Է՛ն, մէկդի գացէք, մի՛ կուրի՛ք, ես կը մտածեմ: Իբրև քաղաքապէտ պէտք է իր հետ յարգանքով վարուիք:

Անկ. — Ապրիս, այդպէս է, հասկցար, կը հասկցուի որ աշխարհի մէջ ապրիլ գիտես:

Ճիորձ. — Բայց ես չեմ ուզեր իմ իրաւունքս կորսնցնել:

Պորք. — (Կուզես փորձէլ այս արջուն բռնցիները):

Ճիորձ. — Ո՛չ, բայց ոստիկանատան կը դիմեմ: Պորք. — Ինձի ձգէ որ առանց ոստիկաններու միջամտութեան զինք ստիպեմ վճարել, գուն ինձի օգնէ: (Անկուտի աղային) Ահաւասիկ, իմ բարեկամս համոզուեցաւ: Երբ տէրդ գտնես անոր կ'ըսես զլխուզ եկածը, զրամը կ'առնուս և կը վճարես, կ'ըլլայ: Այս նկատումը քեզի կ'ընենք՝ վասն զի գուք էք, և գիտենք զծեզ յարցել իբրև քաղաքապէտ:

Ճիորձ. — (Եւ չենք ուզեր քու զգուանքդ, փնթի երես):

Անկ. — (Աւշենելով) Է՛ն, ո՞ն, այո՛... հասկցար, այո՛, կ'ընդունիմ առաջարկդ: (Եթէ մէկ մ'ալ զիս տեսնէք):

Պորք. — Ուստի հիմա ձեր տիրոջ քով զացէք:

Անկ. — Այո՛, այո՛, կ'երթամ... հասկցար...

Պորք. — Բայց, պարոն քաղաքապէտ, քաղքին միջէն այդ աղոսու զգեստներով պիտի անցնիք. առանց մաքրելու...: Քաղաքապէտ մը... ամօթ... չվայլեր... ինձի տուր որ տանիմ մաքրեմ...:

Անկ. — Այո՛, շատ լաւ... (կը հանեկ զգեստը), բայց շուտ ըրէք վասն զի կ'աճապարեմ:

Պորք. — Անտարակոյս (Ճիորձիոյին) (Եթէ չվճար առանց զգեստ կ'երթայ). (Արձարան կը մտմէ):

## ՏԵՍԻԼ ՏԱՄՆԸ ՀՅԻՆ ԳԵՐՈՐԴ

ԳԱՐԻՈՅ և վերոյիշեալը

Գարլոյ. — Բայց ասկից աւելի գէշ բան կրնայ մի բլալ: Ուրիշին նամակը բանալ, ասիկայ քրէական յանցանք է, բացարձակ կ'ուզեմ բողոքել... Ո՞ն, կը հասկցնեմ:

Ճիորձ. — Ի՞նչ կայ Պ. Գարլոյ: Ի՞նչ պատահեցաւ:

Գարլոյ. — Երեակայեցէք. նամակատուն կ'երթամ և ապահով որ կարեսոր նամակ մը պիտի գտնեմ զոր շատ ժամանակէ ի վրայ եղբօրմէս կը սպասեմ... ընդհակառակն չեմ գտներ. կը կենամ դիմուածով և կը խօսիմ ինձի բարեկամ պաշտօնեաներէն մէկուն հետ, և անկայ ինձի ցոյց կու տայ նամակ մը զոր նամակատնէն ընդունած է առանց հասցէի. կը լափեմ նամակը և ինչ կը տեսնեմ. սպասած նամակս: Ո՞վ է բացեր, ո՞վ է այն աւազակը, շուն շանորդին որ ուզած է իմ զաղոնիքներս զիտնալ:

Անկ. — Ի՞նչ ունի այդ մարդը, աւազակներու վրայ կը խօսիմ. արդեօք իմ թուզերուս պէս իրեննէրն ալ զողցած են:

Գարլոյ. — Ո՞հ, բայց ես կը հասկցնեմ:

Ճիռակ. — Լաւ կ'ընես:

Անկ. — (Բայց իմ զզէ՞ստու : Այսպէս մնալով այլևս գիւղիս քաղաքաբետը չեմ նմանիր):

Գարլոյ. — Բարեբախտութիւն եղած է որ այս առառ շոգեկառքը կորսնցուցած եմ: Եւ ճիշդ այս նամակս կը պահանջէ որ չմեկնիմ, այս պէս անօգուտ ճամբորդութենէ մ'ազատեցայ: Պորթոլոն հիմայ կայարան ինձի կը սպասէ և զիս չտեսնելով տուն պիտի վերադառնայ:

Ճիռակ. — Պորթոլոն գեռ հիմայ եկաւ պայուսակն առնելու և գեռ հոս է...

Գարլ. — Ի՞նչպէս, նորէ՞ն կորսնցնել պիտի տար շոգեկառքը Այլ ևս պէտք է որ զինք աշատ արձկեմ, շատ անհոգ է:

Ճիռակ. — Ե՞ն, ներէ՛ այս անզամ, վխան չունի:

Անկ. — (Կը եշմարէ թերը մը զոր Պորթոլոյ զիտինը ձգած պիտի ըլլայ, իր կարծիքով): Ո՞հ, ի՞նչ է այս թերթը: Տեսնեմք... հըմ... Ո՞հ օրագիր մը պիտի ըլլայ... մեղք որ կարգալ չեմ զիտեր:

## ՏԵՍԻԼ ՏԱՍՆ ԸՎԵՑԵՐՈՐԴ

ՊՈՐԹՈԼՈՅ և վերոյիշեալը

Պորթ. — Ճիռճիռոյ, նայէ՛ . . . Ո՞հ, տէ՛րս . . . Շատ լաւ. նայէ՛, պարոն տէ՛ր իմ, այս բաց նամակածրարը գտայ . . . վրան ձեր հասցէն զրուած է:

Գարլոյ. — Տուր նայիմ (կը նայի), ո՞ւր գտար:

Պորթ. — Սա տիմարին զգեստին մէջ:

Գարլոյ. — (Անկուսի աղային քով կ'երրայ որ կը կարդայ, ուժով մը կը ցեցի զայէ):

Անկ. — (Դասնարով) Ե՞ն, ես, վայ... չեմ, հասցար:

Գարլոյ. — Ըսէ՛ տեսնեմ յիմար, ուսկի՞ց առիր այս նամակը:

Անկ. — Ո՞հ, նայիմ, ասիկայ, իմս է:

Գարլոյ. — Ըսէ՛, խօսէ՛, ով քեզի յանձնեց այս նամակածրարը:

Անկ. — Այս աղէկ, զարմանալի բան, իմ տէ՛րս:

Գարլոյ. — Որո՞ւն պիտի տանէիր:

Անկ. — Իմ տիրոջն, հասկցար:

Գարլոյ. — Ի՞նչպէս, քու տիրոջ նամակը՝ քու տիրոջն:

Անկ. — Այսինքն... նամակին տէրը... տիրոջ նամակը. այս ինչ խառնափնդորութիւն . . . հասկցար... վերջապէս քեզի՞նչ, զուն ի՞նչ կը խառնուիս:

Գարլոյ. — Շատ կը խառնուիմ, և եթէ չխօսիս զքեզ զաւազանով կը ծեծեմ և բանս զնել կու տամ, կը հասկնա՞ս:

Անկ. — Այս պակաս էր: Ի՞նչ անուշ ապուր, քանի որ Միլան եկած եմ:

Գարլոյ. — Ուստի, կ'ուզէ՞ս պատասխան տալ թէ ոչ:

Անկ. — Բայց ի՞նչ պատասխան տամ: (Պորուռ  
լոյին) Ո՞վ է այս մարդը:  
Պորր. — Իմ տէրս է:  
Գարդյ. — Դժնն ով ես:  
Անկ. — Ես, իմ զիւղիս քաղաքակետը...  
Գարդյ. — Հասկցայ: Կատակ կ' ընես, անպի-  
տան. Պորթոլոյ, գնա երկու պահապան զի-  
նուոր բեր:  
Անկ. — Ե՞ն... պարոն տէր անոր... հասկ-  
ցար:  
Գարդյ. — Վերջապէս, ըստ՝ նայինք... այս նա-  
մակն ուսկի՞ց առիր (վեր կը վերցնէ զաշա-  
զանի):  
Անկ. — Կամաց, կամաց... վա՛ր առ սա շփու-  
կը<sup>1</sup>... նամակը...  
Գարդյ. — Լաւ:  
Անկ. — Տէրս տուաւ ինձի:  
Գարդյ. — Ո՞վ է տէրդ, փո՞ւմ կենդանի:  
Անկ. — Պարոն Ալպերդը:  
Գարդյ. — Ալպերթոյ Ֆորլանտի:  
Անկ. — Մահհ, պարոն Ալպերթը կ'ըսեմ... և  
հասկցար:  
Գարդյ. — Ո՞ր զիւղի մէջ կը կենայ այս քու  
տէրդ:  
Անկ. — Իմ զիւղիս մէջ:  
Գարդյ. — Ո՞ն, ի՞նչ համբերութիւն: Քաթթա-  
րանեայէն ես:  
Անկ. — Այո՛, ճիշդ Քաթթարանեա, Մոնթէ-  
շիուրոն զիս զրկեց... (ինչպէս ալ կը գու-  
շակէ):  
Գարդյ. — (Այս նամակը բուն եղօրս է) ...  
Գիտնաս որ այս նամակն ինձի զրկուած էր...  
Անկ. — Ուստի դուք էք... հասկցար..., իմ  
տէրս...

1. — Գաշազան բարակ, ճեմի համար. Ալպերդուռ  
դաւառաբառ:

Գարդյ. — Բայց ըստ ինձի... ինչո՞ւ բացիր այս  
նամակը: Ո՞ւր զրած էիր, հոս միայն պահա-  
րանը կայ:  
Անկ. — Պահարածնը... ի՞նչ կը նշանակէ պա-  
հարան, չեմ հասկնար...  
Գարդյ. — Այն թուղթը՝ որ ասոր մէջն էր ...  
փո՞ւմ կենդանի:  
Անկ. — Ահ, այս... մի՛ բարկանար, պարոն  
տէր:  
Գարդյ. — Ուստի՞:  
Պորր. — Ծո՛ւ, շուտ...  
Անկ. — Ահաւասիկ... պարոն Ալպերթ այս  
նամակն ինձի տուաւ որ տիրոջս տանիմ, որ  
գուն ես եղեր... հասկցար, և բաւ ինձի.  
Շուտով Միլան գնա՛, կ'ուզեմ որ շուտով ժա-  
մանակին եղօրս ձեռքը հասցնես: Բայց խըն-  
դրեմ. յիրաւի գնն ես իմ քուն տէրս...  
Գարդյ. — Եթէ վերջ չուա՞ զքեզ ձեծի տակ կը  
մաշեցնեմ:  
Անկ. — Ե՞ն ո՛չ, ո՛չ... ուստի, հասկցար, ինչ-  
պէս կ'ըսէի, անիկայ ինձի ըսաւ որ զինքը  
տունը կը զտնեմ... նամբու մը մէջն նախ շի-  
տակ յետոյ դէպ ի ձախ... և ճիշդ հոն Մար  
եղեղեցոյ ճակտին կոնակը... Կարծեմ թէ  
ուրեմն հոս է:  
Պորր. — (Ահ, ահ, ի՞նչ գեղեցիկ հասցէ):  
Անկ. — Յետոյ ըսաւ, հասկցար, որ եթէ համ-  
բան զգանեա՛ նամակը մէկու մը ցցուր, քեզի  
կ'ըսէ: Ես ալ եկայ, հասկցար, այս երկիրս...  
հոս զացի, հոն զացի... նամակը մէկու մը  
ցցուցի, հարցնելով որ ուր է տէրս, անիկայ  
ալ նամակը նայեցաւ, մտածեց, մտածեց...  
յետոյ ինձի ըսաւ որ հոն մօտը զտնուած տու-  
փի մը մէջ զնեմ, և այսպէս քիչ ժամանակէն  
կ'ընդունի: Ի՞նչպէս ընեմ, բախ: Մտածեցի.  
բուն տիրոջը ձեռքը... և, այս՝ նորէն իմ  
խելքս... հասկցար, զոյզը չունի. Կտրեցի քիչ

մը նամակը, մէջը եղած թէրթը դուրս քաշչեցի, նամակատուփը ձգեցի, այս կերպով՝ մտածեցի, տէրս կ'ընդունի թէրթը և կը տեսնէ որ ես այս գիւղ կը գտնուիմ, հասկցար, կու զայ զի՞ս կը գտնուէ, և այսպէս, հասկցար, իմ յանձնարարութիւնս կ'ընեմ։ Ե՞հ, Ե՞հ, Ե՞հ, լաւ չե՞մ ըրած, նորէն իմ խելքս, նորէն իմ խելքս... Ե՞հ, Ե՞հ, հասկցար։

Գարլոյ. — Յիմար ես, ապնէշ, ողորմելի արարած։

Անկ. — Ո՞հ, ո՞հ, ինչո՞ւ։

Գարլոյ. — Այսչափս բաւական է։ Եղածն եղած է... Պորթոլոյ, հո՛ս ինձի սպասէ՛, կ'երթամ տեղեկագիր մը զրելու զոր իսկոյն հեռագրատուն կը տանիս։

Պորր. — Այս, տէ՛ր. (Հրամաք է, այսօր վերջապէս ոտքերս չպիտի կարենան կտոր մը հանգիստ առնուլ)։

## ՏԵՍԻԼ ՏԱՄՆԵՒԵ ԹՆԵՐ ՈՐԴԻ

Վերոյիշեալի, (առանց Գարլոյի) և քաղաքային Զինուոր

Անկ. — (Պորրոլոյին) Իմ զգեստս, հասկցար, մաքրուեցա՞ւ։

Պորր. — Այն երիտասարդին հարցուցէր (ցոյց տարով ձիորմինե)։

Անկ. — (ձիորմինին) Ենորհք կ'ընէք զգեստս... ձիորմ. — Տուր ինձի 15 ֆր.։

Անկ. — Ո՞հ, ինչո՞ւ։ ձիորմածներուդ փոխարէն։

Անկ. — Ո՞հ, աս աղէկ, կարգի գրինք արդէն... հասկցար։

Ձիորմ. — Գլուխդ անցնի կարգի գնելդ, 15 ֆր. կ'ուզեմ։

Անկ. — Ես ալ պիտի չտամ, միլիոն մ'ալ ուն նենամ պիտի չտամ, հասկցար։

Ձիորմ. — Դուն ալ, հասկցար, առանց զգիստի տուն կ'երթաս։

Անկ. — Ո՞հ, ի՞նչ կ'ըսէք։ Ա՞հ, ձեզի պէս... զիսցէք որ քաղաքապէտ եմ... և... հասկցար. հո՛ս բերէք զգեստս։

Ձիորմ. — Տուր 15 ֆրանգք։

Անկ. — Քթէրնուդ բերաննուդ 15 բանցի կու տամ, գիտնաք (յարակիլ կը ձեւացնէ)։

Պորր. — Վճարեցէք, ամէն ինչ կը վերջանայ (խօսելով անոր հետ) և վար առ ձեռքդ։

Անկ. — Բան մը վճարելիք չունիմ։ Ձիորմ. — Ես ալ քեզի բան մը տալիք չունիմ։

Անկ. — Շատ լաւ, երբ զգեստս չէք տար, ես կ'երթամ կ'առնեմ, հասկցար... Ձիորմ. — Անդին գնա, հոս մտնելու հրաման չփայ (կը հրի)։

Անկ. — Ո՞հ, այս, նայինք (ձեռուն իրենեն իրենեն մէջ, Պորրոլոյ կը չահայ մէջ տեղ մըտելի)։ Զինուոր. — Ի՞նչ կայ հոս, ի՞նչ կ'ընէք։

Ձիորմ. — Սա մարդը՝ ձեռք մը սուրճի աման-ներս կոտրեց և չուզեր վճարել։

Անկ. — Բայց, պարոն, լոէ... հասկցար։ Զինուոր. — Պուր... վայրկեան մը (կը հանեն րդրապահեակ մը և կը հայի Անկուտի աղային)։

Անկ. — Ի՞նչ ունի այդ մարդը։ (Պորրոլոյին) Ո՞վ է այդ պարոնը։

Պորր. — Աննցամէ մէկն է զորս ընդհանրապէս մեծագլխարկներ կը կոչենք. ուշագրութիւն գիր վասն զի կրնայ զքեզ յանկարծ բանտ տանիլ։

Անկ. — (Ողորմած Աստուած, ծպտեալ զինուոր մ'է)։

Զինուոր. — Ստոյգ է որ այս պարոնին վաստ հասուցեր ես։

Անկ. — Հիմայ կը պատմեմ, հասկցար, զաւա-  
զանը . . . վերջապէս . . . ինքն էր . . . Պարոն  
մեծագլխարկ:

Զինուոր. — Խօսածդ գիտցիք . . . հեղինակու-  
թիւնը յարգէ:

Անկ. — Բայց . . . պարոն մեծագլխարկ . . .

Զինուոր. — Դճու: Ես թաղային պահապան  
զինուոր եմ, և իշխանութիւնը կը ներկայա-  
ցնեմ . . . և նախատինք չեմ ուզիք:

Անկ. — Ո՞հ, պահապան իշխանութիւն . . . ես  
զեեզ չեմ նախատեր:

Զինուոր. — Ինձի պատասխան տուր. այս առ-  
տու վիրաւորած ես 13 թուով կառքին կա-  
ռապանը:

Անկ. — Ե՞ս:

Զինուոր. — Այու, դուն, անօգուտ է մերժել,  
հոս վկաները նշանակուած են:

Անկ. — Ա՞հ . . . այու, հասկցար, հիմայ կը յի-  
շեմ. ո՞հ, բայց պարոն մեծագլուխ, այսինքն,  
ամիկ . . . պահապան իշխանութիւն . . . ինքն էր  
որ կ'ուզէր մէկ ֆրանքս զողնալ:

Զինուոր. — Լաւ, ի՞նչ կ'ուզէ ըլլայ . . . հետո  
եկուր:

Անկ. — Ո՞ւր:

Պորր. — Ո՞հ, այս աղէկ բան, դէպ ի բանտ:

Անկ. — Ե՞ս . . . քաղաքապետ իմ գիւղիս:

Զինուոր. — Այու, գիտենք արդէն որ ծաղրա-  
թուզթ մը կոնակդ առած քալած ես բոլոր  
քաղաքը:

Անկ. — Ե՞ս. ո՞հ, վայ ինձ, սուրո է:

Զինուոր. — Սուրո է: Ի՞նչ է այս թուզթը: Աի-  
րելիս, գուն կամ ապուշ և կամ աւագակ մ'ես:  
Պահականոցին մէջ վճիւք կը արուի:

Անկ. — Ո՞հ, վայ ինձ, այս ալ զլուխս պիտի  
զար: Ո՞հ. ուհ (իուշ լայ):

Զինուոր. — Տուէք զգեստը . . .

## ՎԵՐՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ԳԱՐԵՒՅ և վերոյիշեալը.

Գարլոյ. — Պորթոլոյ . . . Նորէն ի՞նչ կայ:

Անկ. — Ո՞հ, պարոն տէր, այս մեծագլուխը  
զիս բանտ կ'ուզէ տանիլ . . . ուհ, ուհ:

Գարլոյ. — Վերջապէս, պարոն, կրնայի գիտ-  
նալ թէ ի՞նչ բանի վրայ է խնդիրը:

Զինուոր. — Փափաքային պահապան զինուո-  
րաց օրինաց նկատմամբ ըրած զննառու-  
թեան պատասխան պիտի տայ, 13 թիւ կառ-

քի կառապանը վիրաւորած ըլլալուն համար:  
Գարլոյ. — Զեմ գիտեր ի՞նչ ըսեմ . . . բայց ըսէ  
անգամ մը. ի՞նչպէս ինքզինքդ այսչափ փոր-  
ձանքներու ենթարկեցիր:

Անկ. — Ես ի՞նչ գիտեմ: . . . Ես ալ չեմ գիտեր  
թէ ի՞նչպէս եղաւ . . . հասկցար, այս երկրիս  
մէջ՝ ալ ամէն բան գլխուս եկաւ. . . :

Գարլոյ. — Շատ լաւ, պարոն, ասիկայ ապու-  
շին մէկն է . . . զուցէ առաջին անգամ է որ  
այս քաղաքը կու զայ:

Անկ. — Այու, տէր, առաջին անգամ . . . բայց  
վերջինն է, այու վերջինը:

Զինուոր. — Բայց ես իմ պարաքս պիտի ընեմ:

Գարլոյ. — Շատ լաւ, ես երաշխաւոր կ'ըլլամ  
իրեն, ահա իմ հասցէս (իր յանձնէ անոր այ-  
ցելունի մը). այս մարդը քանի մը օր իմ տունս

պիտի մնայ, և երբ կանչուէ՝ պիտի ներկայա-  
նայ ըրածներուն մեկնութիւնը տալու:

Զինուոր. — Լաւ, այնպէս ըլլայ: Անուննիդ  
ի՞նչ է:

Անկ. — Մարքանթոնիոյ Փէփփինոյ Անկուտի  
աղայ:

Զինուոր. — (կը զրէ) Պաշտօնդ։  
Անկ. — Ո՞հ, չեմ հասկնար։  
Պորբ. — Արուեստնիդ ինչ է։  
Անկ. — Ո՞հ, հասկցար. իմ գիւղիս քաղաքաւ պետ եմ։  
Զինուոր. — Ո՞ր գիւղի։  
Անկ. — Ի՞մ, հասկցար։  
Գարյոյ. — Քաթթարանեայէն կու գայ, եղբայրս զրկած է զինք զանազան զործերու համար...։  
Զինուոր. — Շատ լաւ, քանի որ ուռիք իրեն կ'երաշխաւորէք...։  
Գարյոյ. — Վսահ եղիք։  
Զինուոր. — Քանի որ այդպէս է զինք ազատ կը ձգեմ; Յտեսութիւն։  
Ճիորժ. — Ահաւասիկ զգեստը, բայց իմ գրամներ։  
Գարյոյ. — Ինծմէ պահանջէ: (Անկուսի աղայինն) Շնորհակալ եղիք Աստուծոյ՝ եթէ այս վայրկենիս բանուը չես գտնուիր, բայց ուրիշ անգամ խելքդ զլուխդ ժողվէ՛ երբ առաջին անգամ կ'երթաս անծանօթ տեղ մը: Պորթուրյ, ասիկայ տուն տար, և պատառ մը բան տուր որ ուտէ, անօթի պիտի ըլլայ: Փիչ աւ տենէն ես ալ տուն կ'ըլլամ (կը մեկնի):  
Պորբ. — (Ուսերը ծեծելով) Է՞ն, պարոն քաղաքապետ իմ գիւղի։  
Անկ. — Է՞ն, ուրիշ խնդի՞ր ալ կայ։  
Պորբ. — Ո՞չ, կ'ուզեմ հարցնել թէ, ինչ կ'ըսէք այս երկրին համար։  
Անկ. — Բայց... առաջին անգամ եկած ըլլաւով, հասկցար, շատ բան գլխուս եկաւ, զոր ես ալ չեմ զիտեր։  
Ճիորժ. — Բայց եթէ հիմայ ձեր երկրէն ուրիշ մ'ալ հոս գտնուելու ըլլար։  
Անկ. — Ո՞հ, այն ժամանակ, զործ ունէինք...։  
Նէն: Արդեօք իմ զեղէս ուրիշ մ'ալ կայ: Ե-

թէ չուզեր ողջ զլուխն աւետարանի տակ գնել, թող նայի որ չըլլայ թէ առաջին անգամին քաղաք մ'երթայ, այլ միշտ երկրորդ անգամին, ես ալ պիտի ջանամ այսպէս ընելու և... հասկցար։

Վ. Ե. Պ. Զ.



7. Ա. Զարգերի ուսության տրամ. - թարգմ. չ. Ամառի Գոմարքանիամ. - Տպ. 1908, էջ 1-95, — թ. Վարդակոյն նամակը. զաւեշտ. - չեղ. չ. Ա. Տիրույնամ. - Տպ. 1897, 1908, էջ 96-114.

8. Ա. Մարտին Պաղային համեար. տրամ. - չեղ. Կորմոն և Գուանց. - Թրգմ. Խոալ. մերածմունքէմ. չ. Չեւոնդ Տայեամ. - Տպ. 1909, էջ 1-94, — թ. Անձրեառ գեւեր մը. զաւեշտ. - Թրգմ. չ. Արիստ. Կանգանատիլիամ. - Տպ. 1909, էջ 95-114.

9. Ա. Աննուխոն համբերատար. տրամ. - չեղ. չ. Ա. Տիրոյնամ. - Տպ. 1909, էջ 1-70, — թ. Կեկուս սինէ արդարանէր. տրամ. - չեղ. չ. Ա. Տիրոյնամ. - Տպ. 1909, էջ 71-135.

10. Ա. Պաւառնի նաւարեկեալեր. տրամ. - Թրգմ. չ. Արիստ. Գասգանտիլիամ. - Տպ. 1909, էջ 1-40, — թ. Անառակ որդին. տրամ. - չեղ. Ռափ. Ալթավլլա. - Տպ. 1909, էջ 41-68, — գ. Երկու համարկատք. զաւեշտ. - Տպ. 1909, էջ 69-92.

11. Որդին հօրը բանապան. - չ. Արիստակէս Քասքանտիլիամ. - Տպ. 1916.

12. Հաղպաները. - Թրգմ. չ. Սահակ Տէր-Մովսէսիամ. - Տպ. 1916.

13. Ա. Որդիական ուրու. — թ. Երկու աղանձնակը. - Թրգմ. չ. Յակով Տիրոյնամ. - Տպ. 1916.

14. Ա. Փէմէկոյ Փիոլա. — թ. Առաջն անդամ ի Միւան. զաւեշտ. - Թրգմ. չ. Ալեքսիս Ցովուշիամ. - Տպ. 1916.

15. Դարձը. Ողբերգութիւն պատմակամ. - չեղ. չ. Միմոն Երիսիամ. - Տպ. 1917, էջ 48.

Խրաբանելիք հասորը կ'արժէ ֆր. 0,70

Աղջիմասով ընդամենական ՀՀ Ազգային գրադարան



NL0317414

Պատճեն

Գիմն Է՝ քռ. 0,70